

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Արցախի փրկությունը՝  
համահայկական առաջնահերթ հրամայական Է — ..... 429

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ** ..... 434

### ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ  
(Turning to God)..... 438

### ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱԴԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնություն  
Մատթեոս Աւետարանի (3.5-10) ..... 445

### ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Ծառայական Տիրություն ..... 451

### ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին ..... 454

### ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԲԷՅԵԱԵԱՆ — Աստուածիմաստություն ..... 457

### ՍՓԻՒՔԻ ՏԱՐԻ

ՎԱՋԱԳՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ — 21-րդ դարու սփիւռքահայ մամուլը  
իր մարտահրաւերներով ..... 469

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ** ..... 474

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ** ..... 476

**ՀԱՅ ԴԱՏ** ..... 477

**ՏՕՆԱԿԱՆ** ..... 487

**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ** ..... 504


**ԴՊՐԵՎԱՆՔ** ..... 506

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ** ..... 507

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ** ..... 510

**ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ** ..... 512

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ** ..... 517



ՊԷՇՏՕՆԿԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ  
ԿԸԹՈՂԲԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՔՅՈՅ  
ՄԵԾԻ ՏԷՆ ԿԻԲԿԻՈՅ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

## ԱՐՑԱԽԻ ՓՐԿՈՒԹԻԻՆԸ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է՝

Խոր մտահոգությամբ կը հետեւինք Արցախի պարզած ներկայ ճգնաժամային կացության: Շրջափակումի ենթարկուած Արցախէն ներս մեր ազգին զաւակները սովամահ ըլլալու անմիջական վտանգին ենթակայ են: Մեր ժողովուրդի հոծ բազմութեան ներկայութեան, կ'ուզենք բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ անդրադառնալ համայն մեր ազգը տագնապեցնող Արցախի հարցին, Յայրապետական Մեր պատգամը ուղղելով հինգ հասցէներու.-

- Մեր Առաջին պատգամը ուղղուած է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ: Չանազան առիթներով Մեր խոր մտահոգութիւնը յայտնած ենք մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան ներկայ վճռադրոշմ հանգրուանին, Յայաստանին ու Արցախին դիմագրաւած տագնապներուն

\* Ներկայ գրութիւնը պատճենն է Շաբաթ, 12 Օգոստոս 2023-ի Ս. Աստուածածնայ «Ուխտի Օր»ուան առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տուած պատգամին, ուղղուած Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան շրջափակին մէջ համախմբուած մեր ժողովուրդի զաւակներուն:

ու մարտահրաւերներուն եւ յստակօրէն պարզած Մեր տեսակետը: Սա պահուն, յատկապէս անդրադառնալով Արցախի հարցին, հարց կու տանք. Հայաստանի իշխանութիւնը կ'անդրադառնա՞յ արդեօք, թէ իր որդեգրած մօտեցումները Արցախը կրնան ջնջել Հայ կեանքի քարտէսէն, ցեղասպանութեան մատնել հարիւր քսան հազար հայորդիները՝ միաժամանակ վտանգելով նաեւ Հայաստանի ապագան: Արդարեւ, ինչպէ՞ս կարելի է Ազրայէճանի հողային ամբողջականութիւնը ճանչնալու խոստում տալ, առանց ապահովելու իր անվտանգութիւնն ու ինքնորոյնութիւնը երաշխաւորող Արցախի ինքնորոշման արդար իրաւունքը: Ինչպէ՞ս կարելի է շրջանէն ներս, այսպէս կոչուած, ամբողջական խաղաղութեան հաստատման ի խնդիր պատրաստ ըլլալ յանձնառութիւններ կատարելու, երբ նման մօտեցում կրնայ վտանգել ո՛չ միայն Արցախը, այլ նաեւ Հայաստանի ամբողջականութիւնը, եւ նոյնիսկ՝ գոյութիւնը: Հայաստանն ու Արցախը շրջապատող ներկայ վտանգալից պայմաններուն մէջ եւ աշխարհաքաղաքական նոր զարգացումներուն լոյսին տակ, առաջին հերթին, անհրաժեշտ է որ Հայաստանը բարեկամութեան ու ենթակայութեան, իր շահերուն եւ ուրիշներու շահերուն սահմանները յստակօրէն գատորոշող դիրքորոշումներ որդեգրէ եւ աչալուրջ ըլլայ Հայաստանը վերածելու Արեւելքի եւ Արեւմուտքի լարուածութեան հարթակի, որուն հետեւանքները կրնան ծանր ըլլալ Հայաստանի համար: Երկրորդ, Ազրայէճանի հետ բանակցութիւններուն ընթացքին, հարկ է որ Հայաստանը դուրս գայ պարտուած ըլլալու հոգեվիճակէն եւ սոսկ զիջումներ կատարելու կացութենէն: Աւելի՛ն. Հայաստանը պետք է առկախէ բանակցութիւնները Ազրայէճանի հետ, մինչեւ որ վերջ գտնէ Արցախի շրջափակումը: Հարկ է շարունակ յիշեցնել բոլորին, որ մարդասիրական աղետ ստեղծելով քաղաքական շահեր հետապնդելը համամարդկային ոճիր է, եւ՝ հակառակ միջազգային օրէնքին: Երրորդ, ճիշդ է, հարկ է խուսափիլ նոր պատերազմէն. սակայն, այս չի նշանակեր տեղի տալ Ազրայէճանի տակաւ բազմացող պահանջներուն: Անհրաժեշտ է որդեգրել ճկուն, բայց մարտունակ գործելաճ՝ միշտ մեկնելով պատմականօրէն հաստատուած եւ միջազգային ճանաչում ստացած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակէն: Այլ խօսքով, պետք է մերժել որեւէ մօտեցում, որ Արցախը կը նկատէ Ազրայէճանի տարածքային ամբողջականութեան անբաժան մասը: Հետեւաբար, կ'ուզենք կարեւորութեամբ շեշտել, թէ շրջափակումին կարելի փութով վերջ տալը եւ Արցախի ինքնորոշման կարգավիճակը առաւել շեշտաւորումով միջազգային հարթակ բերելը, պետք է կիզակետը դառնան Հայաստանի իշխանութեան արտաքին քաղաքականութեան: Այս համահայկական

հրամայականին լոյսին տակ եւ ներկայ ճակատագրական պայմաններուն մէջ, Մեր առաջարկն է, որ իշխանութեան, ընդդիմութեան ու Սփիւռքի ներկայացուցիչներէ բաղկացած քաղաքական ու դիւանագիտական հարուստ փորձառութիւն ունեցող մարմին մը, իր ետին ունենալով մեր ողջ ժողովուրդին նեցուկն ու վստահութիւնը, ամբողջական պատասխանատուութիւնը ստանձնէ վարելու Ազրպէյճանի հետ տարուող բանակցութիւնները, բնականաբար՝ նոր ոճով ու նոր մօտեցումով:

- Մեր երկրորդ պատգամը ուղղուած է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ: Մեզի համար տարօրինակ է, Արցախի ժողովուրդին պարզած ներկայ ողբերգական կացութեան դիմաց Հայաստանի ժողովուրդին լռութիւնը, աւելի ճիշդ՝ անտարբերութիւնը: Մեր եղբայրներն ու քոյրերը եւ մեր երեխաները, սովամահ ըլլալու վիճակին մէջ կը գտնուին. դուք ի՞նչ կ'ընէք. փողո՞ց իջէք, ինչի՞ կը սպասէք. աշխարհը մեզ կը դիտէ. ժողովուրդին ձայնը գերիվեր է բոլոր տեսակի ձայներէն ու տեսակետներէն: Ձեր ժամանակը մի՛ վատնէք՝ ապառոջ քննադատութիւններով, փոխադարձ մեղադրանքներով, բացուած ճեղքերը աւելի խորացնելով: Ոտքի՛ ելէք, արդարութի՛ն պահանջեցէք աշխարհէն: Հայաստանի մէջ կեանքը չի կրնար բնական ըլլալ, երբ անդին ծայրայեղօրէն անբնական է կեանքը Արցախի մէջ: Մեր ազգին միասնականութիւնը ու հաւաքական վճռակամութիւնը ցոյց տուէք գործնապէս՝ ձեր դիմաց կանգնած արիւնարբու ազերիին:

- Մեր երրորդ պատգամը ուղղուած է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ: Երբ 1915-ին ծրագրուած կերպով Օսմանեան Կայսրութեան սահմաններէն ներս ցեղասպանութիւն կը կատարուէր Հայ ժողովուրդին դէմ, ըսինք ու միշտ պիտի ըսենք՝ ո՞ր էր Միջազգային Համայնքը: Ցեղասպանութեան վտանգին ենթակայ Արցախին դիմաց նո՛յնը կը կրկնենք. ո՞ր է Միջազգային Համայնքը: Ազրպէյճան կը շարունակէ խախտել իր ստորագրած համաձայնագրին պայմանները՝ ու նոյնիսկ ազատօրէն մուտք կը գործէ Հայաստանի սահմաններէն ներս. ո՞ր է Միջազգային Համայնքը: Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը, Եւրոպական Խորհուրդը, միջազգային իրաւական կառոյցները կը պահանջեն Արցախի շուտափոյթ ապաշրջափակումը. սակայն, Ազրպէյճան կը մնայ խուլ՝ անտեսելով միջազգային օրէնքի հիմնական սկզբունքները: Ազրպէյճանի անպատժելիութեան գիւնը փաստօրէն կը վճարեն Արցախն ու Հայաստանը: Միւս կողմէն, Թուրքիան Չանգեզուրի միջանցքին անյապաղ բացումը կը նկատէ հրամայական, իսկ Լաչինի գծով իրաւունք կու տայ Ազրպէյճանին իր ուզածը կատարելու...: Ծի՛շո՞ է, կարգ մը բարեկամ

երկիրներ իրենց համակրանքը ու զօրակցութիւնը յայտնեցին, ոմանք նոյնիսկ մարդասիրական օժանդակութիւն կատարեցին Արցախին: Ձերմ շնորհակալութիւն բոլորին: Սակայն հաց եւ դեղ դրկելով Արցախ, ստեղծուած տագնապը չի լուծուիր: Մարդասիրական ճիգերէ անդին հրամայական է Արցախին անվտանգութիւնը ապահովել՝ ինքնորոշման իրաւունքը ճանչնալով: Դետեւաբար, Մեր սպասումն է, որ յատկապէս մեծ պետութիւններ դիմեն գործնական քայլերու՝ առաջին հերթին ստիպելով Ազրայեճանը, որ վերջ տայ Արցախի շրջափակումին եւ ապա քաղաքական բանակցութիւններու ճամբով ճանչնան Արցախի ինքնորոշումը՝ միջազգային հովանաւորութեան ներքեւ:

- Մեր չորրորդ պատգամը ուղղուած է ՍՓԻՌՔԻՆ: Սփիւռքը միշտ գործնապէս եղած է Արցախի կողքին. տնտեսական, բարեսիրական, քաղաքական ու քարոզչական հսկայ ներդրում կատարելով ի խնդիր Արցախի հզօրացման ու զարգացման: Սփիւռքին կողմէ ցարդ կատարուած զօրակցութիւնը անհրաժեշտ է որ անելի լայն ծաւալ ստանայ: Արցախը կ'ուղղուի դեպի կործանում: Արցախը առանձին պետք չէ ձգել: Իւրաքանչիւր Հայ եւ ողջ Հայութիւնը նուիրական պարտաւորութիւն ունի Արցախին նկատմամբ: ԱՐՅԱԽԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹԻՒՆ Է: Սփիւռքը, իր աշխատանքը ներդաշնակելով Արցախի իշխանութեան հետ, կոչուած է դիմելու այնպիսի ազդու միջոցներու, որոնք կարենան Արցախի ներքին ոյժականութիւնը ամրապնդել եւ արտաքին աշխարհէն ներս Արցախի ժողովուրդին ինքնորոշման անյետաձգելի հրամայականը շեշտել: Այս ուղղութեամբ անհրաժեշտ է առաջին հերթին՝ Սփիւռքի մարդոյժը ու ներոյժը համախմբել. երկրորդ, աշխատանքային յստակ օրակարգ կազմել ու թիրախներ ճշդել. երրորդ, տեղեկատուական մարզէն ներս ծրագրուած լայնածաւալ քարոզչութիւն կատարել՝ արաբական, իսլամական, երոպական, ամերիկեան, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէն ներս, համապատասխան շեշտաւորումներով:

- Հայրապետական մեր վերջին պատգամը ուղղուած է ԱՐՅԱԽԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ: Սիրելի՛ Արցախի Հայութիւն, Արցախը պարտուած չէ՛, յաղթական է Արցախը ու պիտի մնայ յաղթական՝ այնքան ատեն որ ձեր կեանքը շաղախուած է ամուր հաւատքով, կռանուած անխորտակելի կամքով ու թրծուած պայծառ ապագայի տեսլականով: Դուք առանձին չէք. ողջ Հայութիւնը ձեզի հետ է. իւրաքանչիւր Հայ, ուր որ ալ գտնուի, Արցախցի է՝ բառին ամբողջական իմաստով: Իր պատմութեան դաժան պայմաններուն մէջ գոյատեւած եւ իր հայրենի հողը նահատակներու


արիւնով, սուրբերու աղօթքով, հոգեմտաւոր ստեղծագործութեամբ եւ հայկական աւանդութիւններով, ապրումներով ու արժէքներով սրբագործած Արցախը պիտի մնայ հայկական՝ ինչ ալ ըլլան զինք շրջապատող տագնապները: Ժողովուրդ մը կը կորսուի պատմութեան փոշիին տակ, երբ կը նահանջէ տագնապներուն դիմաց, երբ կը կորսնցնէ իր վճռականութիւնը իր իրաւունքներուն նկատմամբ: Արցախը իր ժողովուրդով, իր իշխանութեամբ ու իր բանակով փաստած է թէ կը մնայ ամբօրէն կառչած իր արդար իրաւունքներուն:

Արցախի ժողովուրդը հորհրդարանին ճամբով արտայայտած է իր հաւաքական կամքը՝ *«Ճանաչում յանուն փրկութեան»*: Արդար պահանջք մը, որ իրաւական հիմք ունի եւ կը համապատասխանէ պատմական իրողութեան ու միջազգային օրէնքին: Սա պահուն, Մենք եւս Մեր ձայնը միացնելով Արցախի հորհրդարանին կը յայտարարենք, թէ *«խորապէս համոզուած ենք, որ վերահաս ողբերգութիւնը կանխելու միակ միջոցը Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումն է՝ ՃԱՆԱԶՈՒՄ ՅԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ սկզբունքի հիման վրայ»*: Արցախին դիմաց այլ ճանապարհ չկայ: Եկէ՛ք, ժողովուրդ Հայոց, միասնաբար եւ արհաբար քալենք այս ճամբէն:

Բի՛ւր պատիւ ու յարգանք Արցախի մեր սիրելի ժողովուրդին:



## ԿՈՆԴԱԿՆԵՐ



### ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ\*

#### ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիկին Շաքե Էլմասեանին, «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Յունաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խորեն Եպս. Տողրամաճեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ եւ հոգեկան գոհունակութեամբ իրազեկ դարձանք Յունաստանի հայութեան կեանքէն ներս Ձեր ունեցած ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային ու ընկերային երկարամեայ ծառայութեան մասին:

Արդարեւ, դուք եղած էք մէկը մեր ժողովուրդի այն զաւակներէն, որոնք իրենց սեփական ընտանիքի կողքին գործած են ի սպաս իրենց Մեծ Ընտանիքին՝ հայ գաղութին: Օտար հողերու վրայ մեր ժողովուրդի զաւակներուն քրիստոնէական ու հայեցի դաստիարակութիւնը կը կարօտի մեծ գոհողութիւններու: Այդ աշխատանքին են լծուած մեր եկեղեցին, դպրոցն ու մշակութային միութիւնները: Երկար տարիներ շարունակ դուք գործեցիք այս դաշտերուն մէջ, եւ անկասկած, այժմ կ'ապրիք ուրախութիւնը ի տես ձեր ցանած հունտերու արդիւնատրման Յունաստանի հայութեան կեանքէն ներս:

\* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

Արդ, ընդառաջելով Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Վարչութեան խընդրանքին, եւ ի գնահատութիւն ձեր ազգանուէր ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

### Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՇՔԱՆՇԱՆ

Կաղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Իր հովանին անպակաս ընէ ձեր եւ ձեր ընտանիքի անդամներուն վրայէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս  
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
Որ յԱնթիլիաս, Լիբանան  
Ի 21-ն Փետրուարի 2014 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.  
Ընդ համարաւ Շ/ՅԽԴ.*



### ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Յարութ Պերպերեանին,  
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Հոգեկան խոր գոհունակութեամբ կարդացինք Քանատայի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի վկայութիւնը՝ թեմէն ներս քսանըհինգ տարիներու Ձեր կրթական-դաստիարակչական եւ գրական-մշակութային գործունէութեան մասին:

Բարձր կը գնահատենք Ս. Յակոբ Ազգային Վարժարանէն ներս Ձեր կատարած ազգանուէր ծառայութիւնը: Արդարեւ, դուք գործեցիք ի խնդիր մեր լեզուի առողջ պահպանման՝ ուսուցչական ասպարեզի կողքին, բանաստեղծի Ձեր միտքն ու հոգին մատուցիք մեր գրականութեան բազինին, եւ որպէս խմբագրական կազմի անդամ ծառայեցիք նաեւ "Բազին" գրական ամսագրին՝ Լիբանանի մէջ Ձեր պատանեկութեան օրերէն սկսեալ:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի խնդրանքին, եւ անոր միացնելով Մեր բարձր գնահատանքը, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

### Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ վարձահատոյց ըլլայ Ձեզի



երկար տարիներու Ձեր կրթական-մշակութային վաստակին համար: Թող Աստուծոյ հովանին անպակաս ըլլայ Ձեր եւ Ձեր հարազատներուն վրայէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս  
Ի դռուն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
Որ յԱնթիլիաս, Լիբանան  
Ի 21-ն Փետրուարի 2014 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.  
Ընդ համարաւ Շ/ՅԽ.*



### **ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**

(Տ. Սարգիս Քհնյ. Ագթաւուզեանին,  
Ծաղկեայ սեւ փիլոն կրելու արտօնութիւն ստանալու իրաւունք)

Ընդառաջելով Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Չոլոյեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

#### **ԾԱՂԿԵԱՅ ՍԵՒ ՓԻԼՈՆ**

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս  
Ի դռուն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
Որ յԱնթիլիաս, Լիբանան  
Ի 15-ն Յունուարի, 2013 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.  
Ընդ համարաւ Շ/ՅԸԷ.*

**ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**

(Տ. Վազգեն Քհնյ. Քեօշկերեանին,  
Ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն ստանալուն առթիւ)

Ընդառաջելով Սպահանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգեն Եպս. Չարեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

**ԾԱՂԿԵԱՅ ՓԻԼՈՆ**

կրելու արտօնութիւն՝ յընթաց տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս  
Որ յԱնթիլիաս, Լիբանան  
Ի 8-ն Մարտի, 2013 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.  
Ընդ համարաւ Շ/ՅԲ.*



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

## ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Զորեփշաքթի, 27 Մայիս 2020

Փորձութեան այս դժուար ժամանակներուն, մեծ գոհունակութեամբ կը հետեւէի մեր եկեղեցականներուն եւ համայնքային կազմակերպութիւններուն կատարած յանձնառու եւ կորովի աշխատանքին՝ իրենց սահմանափակ միջոցներով օժանդակութեան հասնելու ժողովուրդի կարիքներուն: Դժուար է մի քանի բառերով գնահատել կատարուած աշխատանքին ծաւալը ու կարելութիւնը: Կ'ուզեմ նաեւ յիշել այն ազգայիններն ու կազմակերպութիւնները, որոնք օժանդակելով մարդասիրական միութիւններուն եւ բարեսիրական ծրագիրներուն, հասան համաճարակէն ազդուած մեր ընտանիքներու շտապ կարիքներուն:

Մարդկային կեանքը իր ճշմարիտ իմաստն ու նպատակը կը ստանայ, երբ հաւատքով կը խարսխուի, յոյսով կը պահպանուի եւ սիրով կ'արտայայտուի: Կարիքաւորներուն օժանդակելը՝ սէրէն մղուած, բոլոր կրօններուն հասարակաց արժէքներէն մէկն է: ԶԱստուած սիրել կը նշանակէ սիրել ուրիշը: Աստուծոյ ծառայել կը նշանակէ հոգատար ըլլալ ուրիշին: **Յոգատարութիւնը** սիրոյ շօշափելի մէկ արտայայտութիւնն է: Աստուած մեզ կը հրաւիրէ մեր անձերուն ընդմէջէն իր սէրը արտայայտելու մեր նմանին հանդէպ՝ մեր հոգատարութեամբ ու խնամքով, առանց խտրութիւն դնելու կրօնի, գոյնի եւ ցեղային պատկանելիութեան միջեւ:

Հարկ է նշել, որ Ուղղափառ աստուածաբանութեան մէջ, «պատարագ յետ պատարագի» հասկացողութիւնը խորունկ ծառայական եւ աւետարանչական խորունկ իմաստ ունի: Սուրբ պատարագի աւարտին, պատարագիչը կ'ըսէ. «երթայք խաղաղութեամբ», որ կը նշանակէ թէ հաւատացեալները Սուրբ Հաղորդութեամբ զօրացած՝ լիազօրուած են երթալ աշխարհի մէջ առաքելութիւն

եւ ծառայութիւն կատարելու: Սուրբ Հաղորդութեամբ հաւատացեալը կը ստանայ Աստուծոյ պարգեւներն ու շնորհքը եւ զանոնք ուրիշներուն հետ կը բաժնէ: Այսպիսով, Սուրբ Հաղորդութեամբ լիազօրուած, եկեղեցւոյ համայնքը ուրիշներուն հասնելու առաքելութեան ճամբով կը դառնայ վկայող, ծառայող եւ հոգատար համայնք:

Հոգատարութիւնը եկեղեցւոյ վերապահուած պաշտօն մը չէ, այլ անոր էութիւնն իսկ է: Եկեղեցւոյ լինելութիւնը «ուրիշներուն համար լինելութիւն» է: Այն եկեղեցին, որ ինքնամոռի է եւ չի հասնիր աղքատին, հիւանդին եւ անտեսուածին, կը կորսնցնէ իր իսկական կոչումը եւ կը վտանգէ իր վաւերական ինքնութիւնը:

Հնկերային ցանցերու վրայ եւ հեռուստատեսիլի պաստառներէն կը լսեմ անհատնում աղաղակները տառապող մարդոց եւ կը տեսնեմ արցունքները՝ անոնց, որոնք ձայն չունին եւ անտեսուած են: Ժամանակն է օժանդակութեան հասնելու լքեալներուն եւ զրկեալներուն կարելի բոլոր միջոցներով: Ուրիշին հոգալ՝ բաժնելով անոր տառապանքը, մենք մեր աստուածատուր նպատակը կ'արտայայտենք եւ ճշմարտապէս մարդ կ'ըլլանք: Հոգատարութիւնը բարոյական եւ հոգեւոր պարտաւորութիւն մըն է. «այն մարդը, որ նիւթական ամէն բարիք ունի, եւ տեսնելով հանդերձ թէ իր մէկ եղբայրը օգնութեան կարօտ է՝ իր գութը չի շարժիր՝ ի՞նչպէս կրնայ ըսել՝ թէ Աստուծոյ սէրը ունի իր մէջ» (Ա.ՅԳ 3.17):

Հոգատար ըլլալը չի սահմանափակուիր սոսկ մարդասիրական արարք մը կամ ընկերային ծառայութիւն մը մատուցելուն մէջ: Կրնանք հոգատար ըլլալ՝ խաղաղութեան եւ արդարութեան համար աշխատելով եւ նաեւ՝ հասնելով աղքատին, հալածուածին, հարստահարուածին եւ անոնց, որոնք կարեկցութեան եւ օժանդակութեան կը կարօտին: Հոգատարութեան մէջ տուողներ եւ ստացողներ չկան, այլ՝ միայն հաւասար կողմեր: Մենք յանձնառու կ'ըլլանք հոգատարութեան՝ ո՛չ միայն տալով այն ինչ որ ունինք, այլ նաեւ՝ ինչ որ ենք: Հոգատարութիւնը ինքնին պէտք չէ նպատակ ըլլայ, ան պէտք է խթանէ ի խնդիր արժանապատուութեան մղուած պայքարը: Եթէ եկեղեցւոյ առաքելութեան մաս կը կազմէ անօթիները կերակրել, անտուններուն ապաստան ապահովել, միւս կողմէ ան նաեւ պէտք է աշխատի արմատախիլ ընել այս շարիքներուն տուն տուող պատճառները. եւ այդ աշխատանքը պէտք է դառնայ եկեղեցւոյ ծառայական յանձնառութեան կիզակէտը:

Քրիստոս ինքզինք ընծայաբերեց ամբողջ մարդկութեան նկատմամբ իր ունեցած սէրէն մղուած, ի շարս որոնց՝ նաեւ անառակ որդիին: Քրիստոս ինքզինք նոյնացուց աղքատին հետ երբ ըսաւ. «կ'ըսեմ ձեզի, որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէն մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք» (Մտ 25.40): Իրաւամբ, հոգատար ըլլալը մեզ Քրիստոսի կը մօտեցնէ. ան մեզ Աստուծոյ ճշմարիտ «գործակից» (Ա.Կր 3.9) եւ Քրիստոսի «դեսպան» (Բ.Կր 5.20) կը դարձնէ: Ար-

դարեւ, առաքեալին պատգամը պէտք է դառնայ առաջնորդը բոլոր անոնց, որոնք զՔրիստոս կը դաւանին: Հարկ է աշխատիլ եւ տկարներուն օգնել, յիշելով այն խօսքը որ Տէր Յիսուս ինք ըսաւ, թէ՛ «աւելի երջանկաբեր է տալը, քան առնելը» (ԳրԺ 20.35):

Պօղոս առաքեալ կը թելադրէ հաւատացեալներուն որ գթասիրտ ըլլան (Կղ 3.12) եւ կը բացատրէ տալու ձեւերը՝ ինչպէս օրինակ, սիրայօժար տալ, ինքնաբուխ տալ, յանձնառութեամբ տալ, բաց ձեռքով ու սրտով տալ, հաւատարմութեամբ տալ, ուրախութեամբ տալ, առանց սեփական կարիքներու մասին մտածելու տալ, իբրեւ հոգեւոր կոշումի մէկ մասը տալ (Բ.Կր 8-9, CF. Faith in Action-Study Bible, p. 1913):

Համաճարակը մարդոց մօտ ուրիշին հանդէպ պատասխանատուութեան ու առատաձեռն եւ գթասիրտ ըլլալու գիտակցութիւնը զօրացուց: Հոգատար ըլլալը, իր կարգին, միասին ըլլալու ցանկութիւնը խորացուց, հակառակ համաճարակի պատճառով պարտադրուած արգելափակումի եւ ընկերային հեռաւորութեան միջոցառումներուն: Երբ հարուստը կ'արհամարհէ աղքատը, Աստուած կը սաստէ զայն (Ղկ 1.53): Աստուած իր սէրն ու գութը կը բաժնէ իւրաքանչիւրիս հետ եւ մեզ կը հրաւիրէ մեր սէրն ու հոգատարութիւնը բաժնելու մեր դրացիին, համաքաղաքացիին, ընկերոջ, դասընկերոջ, բարեկամին եւ նոյնիսկ օտարին հետ: Աստուծոյ տուածը ուրիշներուն հետ անսակարկ կերպով բաժնելը, իրաւամբ ճշգրիտ ձեւն է վաւերական մարդ ըլլալու:

Մինչ ֆիզիքական եւ ընկերային հեռաւորութիւն կը պահենք, եկէք աւելի խորացնենք ուրիշին հանդէպ մեր հոգատարութիւնը: Եկէք յիշենք առաքեալին խօսքերը. «այն մարդը որ կ'ըսէ՝ "ես կը սիրեմ զԱստուած", բայց իր եղբայրը կ'ատէ, ստախօս մըն է: Ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ի՞նչպէս կրնայ սիրել զԱստուած որ չի տեսներ» (Ա.ՅԳ 4.20): Բոլոր իրաւագրկուած, մոռցուած, անտեսուած եւ ճնշուած ու հարստահարուած անձերը մեր քոյրերն ու եղբայրներն են:

Քովիտ-19 համաճարակը նաեւ շեշտեց կենսոլորտին նկատմամբ հոգատար ըլլալու անհրաժեշտութիւնը: Ես կը հաւատամ, որ մենք պէտք է ստեղծենք համաշխարհային հոգատարութեան մշակոյթ մը՝ հանդէպ տիեզերքին եւ մեր նմանին:

## Հիմնգաղափար, 28 Մայիս 2020

Իմ քարոզներուս, հովուապետական նամակներուս եւ հայրապետական պատգամներուս մէջ միշտ շեշտած եմ, որ դատարկ եկեղեցին պարզապէս շէնք մըն է: Եկեղեցին, որ հիմնականօրէն հաւատքի համայնք մըն է, իր ճշմարիտ իմաստն ու վաւերական ինքնարտայայտութիւնը կը ստանայ իր ծիսական կեանքին ու վկայութեան ժողովուրդին գործօն մասնակցութեամբը:

Ուստի, ցաւալի որոշում մըն էր համաճարակի պատճառով, եկեղեցւոյ դռները հաւատացեալներուն առջեւ փակելը: Այս անխուսափելի կացութեան մէջ, մտաբերեցի այն աղիտալի վիճակը, որուն դատապարտուեցան մեր ծնողները, քոյրերն ու եղբայրները ցեղասպանութեան ընթացքին եւ անոնց յաջորդող տարիներուն, երբ մեր ժողովուրդի զաւակները ստիպուած էին իրենց տուններուն մէջ, վրաններու տակ եւ կամ գաղթակայաններուն մէջ կազմակերպել եկեղեցական արարողութիւնները: Այսօր, համաճարակի այս դժուար ժամանակներուն, անգամ մը եւս մեր տունները եկեղեցիներու վերածուեցան: Մեր Տիրոջ խօսքերով՝ «ուր ու երկու կամ երեք հոգի հաւաքուիմ իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց միջեւ» (Մտ 18.20):

Եկեղեցին չէ դադրեցուցած իր հոգեւոր, ազգային թէ ընկերային արարողութիւններն ու գործունէութիւնը: Ուղիղ պատկերասփռումով թէ առցանց, սուրբ պատարագը, գիշերային, առաւօտեան ու երեկոյեան ժամերգութիւնները, Աստուածաշնչական սերտողութիւնները, աղօթքներն ու խորհրդածութիւնները ծիսական եկեղեցիներու կողմէ հասանելի դարձան ժողովուրդին: Համացանցին ճամբով եկեղեցին դուրս եկաւ իր պատերէն եւ ծխային սահմանէն անդին անցնելով հասաւ ժողովուրդին՝ աշխարհի շորս ծագերուն: Եկեղեցին նաեւ վերաշեշտեց իր ծառայական գործունէութիւնը՝ յատկապէս ընկերային ծառայութեան եւ առողջապահական օգնութեան ծիրէն ներս: Եկեղեցականներ այցելեցին բարեսիրական հաստատութիւններ, հիւանդանոցներ եւ կարիքաւոր ընտանիքներու եւ Աստուծոյ խօսքը քարոզեցին, յորդորելով ժողովուրդին, որ յարգէ համաճարակի պարտադրած սահմանափակումները. անոնք նաեւ աննդամթերք բաշխեցին կարիքաւոր ընտանիքներուն: Այս աշխատանքները հարազատ արտայայտութիւններն են եկեղեցւոյ հովուական եւ ծառայական կոչումին, մասնաւորաբար տեղական մակարդակի վրայ: Հարկ է յիշել, թէ այս բոլոր նախաձեռնութիւններուն մէջ, ընկերային ցանցերու ճիշդ օգտագործումը մեծապէս օգտակար դեր ունեցաւ:

Քանի մը տարիներ առաջ, առիթով մը ըսած եմ, որ շուտով, հաղորդակցութեան ճարտարարուեստի արագ յառաջընթացին պատճառով, եկեղեցին անխուսափելիօրէն պիտի վերածուի **առցանց եկեղեցիի**: Բան մը, որ իրականացաւ համաճարակի ընթացքին, որովհետեւ ընկերային ցանցը եկեղեցւոյ համար միակ միջոցն էր հասնելու իր հաւատացեալներուն: Եկեղեցին, որ գրեթէ վերածուած է համակարգչային ընկերութեան (cyber-community) եւ անբաժան մէկ մասը տիրող իրողութեան, անկասկած պիտի շարունակէ օգտագործել համացանցը՝ նման շտապ պարագաներու ըլլալու ուղիղ հաղորդակցութեան մէջ իր հօտին հետ: Յամենայն դէպս, եկեղեցւոյ «առցանց» ըլլալու անհրաժեշտութիւնը ներկայ կացութեան պարտադրանքով, հարկ է որ ըլլայ ժամանակաւոր երեւոյթ, եւ մնայուն սովորութեան չվերածուի: Միատէր քահանայ մը ըսաւ ինծի, որ եկեղեցւոյ արարողութիւններուն առցանց

հետեւող հաւատացեալներու թիւը շատ աւելի է քան անոնց, որոնք սովորական օրերուն եկեղեցի կը յաճախեն...:

Այս իրողութեան դիմաց, հարկ է նկատի ունենալ հետեւեալ մտահոգութիւնները.-

Առաջին, եկեղեցին պէտք չէ վերածուի լոկ հանրային հանդիսութեան մը, որ կրնաս դիտել նաեւ հեռատեսիլի մը կամ համակարգիչի պաստառին վրայ: Եկեղեցին հաւատացեալներու համայնք մըն է եւ քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ մասնակցիլ համայնքի կեանքին ու առաքելութեան:

Երկրորդ, սուրբ պատարագը պարզ հոգեւոր արարողութիւն մը չէ. ան Քրիստոսի երկրաւոր առաքելութեան հիմնական երեւոյթներուն ու յատկանշական եղելութիւններուն վերամարմնաւորումն է: Հետեւաբար, կենդանի եւ գործօն մասնակցութիւն ունենալ եկեղեցւոյ ծիսական կեանքին, կը նշանակէ մասնակից դառնալ Քրիստոսի կեանքին ու առաքելութեան: Ուստի, կը յուսամ, որ ներկայ իրավիճակը շուտով թոյլ պիտի տայ հաւատացեալներուն գործնապէս արտայայտելու եկեղեցւոյ իրենց պատկանելիութիւնը:

Ներկայ ստիպողական պայմաններուն մէջ, չկարենալով եկեղեցի յաճախել, ժողովուրդը անդրադարձաւ այն կարեւոր դերին, զոր եկեղեցին կը խաղայ աշխարհի մը մէջ, որ հեռացած է Աստուծմէ: Ասիկա նաեւ հրաւէր մըն էր եկեղեցիին, վերատեսութեան ենթարկելու իր առաքելութիւնը՝ արագ եւ աննախընթաց կերպով փոխուող աշխարհի մը մէջ: Որպէս համայնք, եկեղեցին անբաժանելի մէկ մասն է ընկերութեան: Ան պէտք է պահպանէ իր հաւատքի առաքելութիւնը՝ վերատեսութեան ենթարկելով իր ծէսը եւ իր աւանդական արժէքներն ու սկզբունքները ներդաշնակելով ստեղծուած նոր կացութիւններուն հետ: Եկեղեցին կոչուած է յարատեւ ինքնարժեւորումի՝ նոր պայմաններու եւ պահանջներու լոյսին տակ:

## Ուրբաթ, 29 Մայիս 2020

**Բռնութիւնը**, առաւել կամ նուազ չափով առկայ է բոլոր ընկերութիւններու կեանքին մէջ: Յաճախ հակամէտ ենք յարմարիլ բռնութեան հետեւանքներուն եւ կը խուսափինք դարմանել անոր տուն տուող հիմնական պատճառները: Բոլոր կրօնները կը մերժեն բռնութիւնը եւ կը քարոզեն հեռու մնալ անկէ: Իր ուսուցումներուն մէջ, Քրիստոս շեշտեց՝ որ մենք բարի գործերով պէտք է յաղթենք չարին (Ղկ 10):

Ես ուզեցի անդրադառնալ այս այժմէական հարցին, որ վերստին ի յայտ կու գայ Ամերիկայի մէջ ծայր առած ցոյցերուն պատճառաւ, որոնք կը միտին պաշտպանել սեւամորթ ամերիկացիներու իրաւունքները եւ թիկունք կը կանգնին անոնց պահանջներուն: Այս բողոքները համաշխարհային արձագանգ գտան: Քովիտ-19 համաճարակի այս օրերուն, հին համաճարակ մը՝

ցեղապաշտութիւնը քառս ստեղծեց Ամերիկեան եւ Եւրոպական բազմաթիւ քաղաքներու մէջ: Անարդարութիւն՝ արդար համակարգին մէջ, ուստիկանութեան բռնութիւնը՝ սեւամորթներուն նկատմամբ, անգործութիւնը եւ բնակարանային կարելիութիւններու եւ ուսման հնարաւորութիւններու պակասը ժամանակ առ ժամանակ պատճառ դարձած են ժողովուրդներու ըմբոստացման: Ասիկա դառն իրողութիւն մըն է, որ ի յայտ կը բերէ, թէ ցեղապաշտութիւնը իր բոլոր ձեւերով կը շարունակէ խորացնել տնտեսական անհաւասարութիւնները՝ Միացեալ Նահանգներու ինչպէս նաեւ այլ հարուստ երկիրներու մէջ: Ցեղապաշտութիւնը սոսկ Ամերիկեան խնդիր մը չէ. ան համաշխարհային հարց մըն է, եւ մենք կ'ապրինք ճնշուած ընկերութիւններու մէջ, որոնք կը տառապին աղքատութենէ, լքուածութենէ, առողջական եւ բնակարանային մտահոգութիւններէ: Ցեղապաշտութիւնը դարձած է գաղափարախօսութիւն մը՝ յաճախ օրէնքի ուժով հովանաւորուած:

Չենք կրնար անտարբեր մնալ այս շարիքին նկատմամբ. լուծումը լուծում մը չէ: Բոլոր մարդ արարածները հաւասար են Աստուծոյ առջեւ. հետեւաբար ցեղապաշտութիւնը մեղք մըն է Աստուծոյ դէմ: Ոչ միայն պէտք է պայքարիլ ցեղապաշտութեան դէմ, այլ՝ հարկ է արմատախիլ ընել զայն բոլոր ընկերութիւններու կեանքէն, արմատախիլ ընելով անոր տուն տուող հիմնական պատճառները: Այս շարիքին միակ պատուաստը՝ արդարութիւնն է: Մարթին Լուտէր Քինկ (1929-1968), որ Ամերիկացի քրիստոնեայ քարոզիչ մըն էր, դարձաւ ամենէն ակնառու ղեկավարը՝ Ամերիկացիներու քաղաքացիական իրաւունքները պաշտպանող շարժումին: Ան սպաննուեցաւ քանի մը շաբաթներ առաջ միայն Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ուփսալայի Համաժողովէն (1968), որու ընթացքին իր խօսքը պիտի արտասանէր: Քինկի սպանութիւնը պատճառ դարձաւ, որ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը նախաձեռնէ «Պայքար ցեղապաշտութեան դէմ» ծրագրին: Յաջորդող տասնամեակներուն, Աւետարանական արժէքներէն ու մարդկային իրաւանց սկզբունքներէն թելադրուած, Խորհուրդը այլազան, ոչ-զինուորական, օժանդակութիւններ յատկացուց Հարաւային Ափրիկէի ազատութեան մարտիկներուն, ցեղային խտրականութեան դէմ իրենց պայքարին մէջ: 1994-ին, Հարաւային Ափրիկէի Փրէթորիա քաղաքին մէջ, Նելսըն Մանտելլայի՝ Հարաւային Ափրիկէի նախագահական պաշտօնը ստանձնելու արարողութենէն ետք, հանդիպում ունեցայ անոր հետ, իբրեւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան ատենապետ: Ան գնահատանքով արտայայտուեցաւ եկեղեցիներու եւ միջ-եկեղեցական շարժումին բերած կարեւոր նպաստին՝ Հարաւային Ափրիկէի մէջ ցեղային խտրականութեան դէմ մղուող պայքարին գծով, եւ շեշտեց «բառի պատեւագմը» (Ա.Տմ 1:18) շարունակելու կարիքը:



Ցեղապաշտութեան դէմ բարձրացող բողոքները ես կը նկատեմ հրաւեր մը՝ ուղղուած բազմաթիւ ազգերու, վերարժեւորումը կատարելու իրենց ազգային պատմութեան ինչպէս նաեւ իրենց ինքնըմբռնումը՝ համաշխարհայնացած աշխարհին մէջ, ուր բազմակառավարումը յարաճուն կերպով իր ներկայութիւնը պիտի պարտադրէ բոլոր ընկերութիւններուն վրայ: Ինքնութեան եւ ամբողջականութեան առնչուած հարցերը պէտք է առարկայական մօտեցումով վեր առնուին պետութիւններու, ազգերու եւ կրօններու կողմէ: Բռնութիւնը անարդարութեան դէմ պայքարելու միջոց մը չէ, ոչ ալ արդարութիւն վերահաստատելու միջոց մը: Ոչ բռնի պայքար մը՝ ամենէն ազդու միջոցն է արդարութիւն հաստատելու համար: Ինչպէս Մարթին Լուտէր Քինկ կ'ըսէ. «երբ արդարութիւն կը հետապնդես՝ արժանապատուութեամբ եւ օրինապահութեամբ ջանայ հասնիլ, միայն սիրոյ մղումով զինուած. միշտ խուսափիր բռնութենէ» (6 Նոյեմբեր, 1956): «Այո՛, մենք պիտի յաղթենք» (Ափրիկեցի Ամերիկացիներու կարգախօսը) ոչ-բռնի եւ աշխոյժ դիմադրութեամբ: Մահաթմա Կանտին (1869–1948), որ խաղաղ միջոցներով պայքարելով անկախացուց Հնդկաստանը Անգլիական տիրապետութենէն, եւ Մ. Լ. Քինկը պատմութեան մէջ պիտի յիշուին որպէս ոչ-բռնի պայքարի ռահվիրաներ:

Անգլերէնէ թարգմանեց՝  
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 13)



ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ
--------------

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (3.5-10)

«Երուսաղեմէն, ամբողջ Հրէաստանէն եւ Յորդանան գետի բոլոր շրջաններէն մարդիկ իրեն կ'երթային եւ իրենց մեղքերը խոստովանելով, անոր ձեռքով կը մկրտուէին Յորդանան գետին մէջ» (Մտ 3.5-6):

1) Նոր Կտակարանին մէջ Յովհաննէս կոչուած ու ճանչցուած է «Մկրտիչ» անունով՝ ո՛չ թէ անոր համար որ մկրտեց Յիսուսը, ինչպէս ոմանք կը խորհին, այլ անոր համար՝ որ ինք Աստուծոյ կողմէ կոչում ստացած էր ապաշխարութեան մկրտութիւն պարգեւելու իրենց մեղքերը խոստովանողներուն: Արդար պիտի ըլլար սակայն, որ ան կոչուէր նաեւ «խոստովանահայր», որովհետեւ ան Նոր Կտակարանի ժողովուրդին առաջին ու գրեթէ միակ խոստովանահայրը հանդիսացաւ: Բոլորը իրեն կու գային իրենց մեղքերը խոստովանելու (Մր 1.4-5), եւ ոչ միայն այսքան, այլեւ ան հնրաժեշտ խրատը կու տար իրենց մեղքերը խոստովանողներուն (Ղկ 3.10-14), եւ արդ ի՛նչ է խոստովանահօր մը կոչումը եթէ ոչ լսել մեղքերու խոստովանութիւններ, եւ տալ անհրաժեշտ խրատները:

2) Իրենց մեղքերը խոստովանելու եկողները՝ անհատաբար կը խոստովանէին եւ ոչ թէ հաւաքաբար, ինչ որ մեր եկեղեցին կ'ընէ այսօր: Հաւաքական խոստովանութիւնը օգուտ չ'ըներ մարդուս, բացի եթէ երբեք հաւաքական խոստովանութեան պահուն անձ մը Սուրբ Հոգիին հպումը զգայ ու դառնապէս լայ իր մեղքերուն համար: Անհատական խոստովանութեան պահուն է որ մարդը կանդրադառնայ մեղքին տգեղութեան ու զգուելիութեան, որովհետեւ երբ իր բերանով խոստովանի իր գործած մեղքերը՝ ամօթը զինք կը պատէ, ինքնիրմէ ու ինքնիր ըրածէն կամչնայ եւ աչքերը վեր բարձրացնելու համարձակութիւն չ'ունենար, եւ ճիշդ հո՛ս է որ ան կ'անդրադառնայ թէ որքա՛ն տգեղ ու ահուելի բան է մեղքը, որ մարդը ամօթի ու քրտինքի կը մատնէ. մինչդեռ հաւաքական խոստովանութեան պահուն այս բանը տեղի չ'ունենար<sup>1</sup>:

<sup>1</sup> Եկեղեցին վերցուց անհատական խոստովանութիւնը, որովհետեւ անցեալին կարգ մը եկեղեցականներ իրենց խոստովանուած մեղքերը հրապարակեցին: Ըստ եկեղեցոյ հայրերուն, այդպիսիները պէտք է կարգալոյծ ըլլան:

3) Մեղքերու խոստովանութիւնը մկրտութեան եկող անձին ազատ կամքին չէր ձգուած: Ատիկա Յովհաննէսին կողմէ դրուած պահանջք էր: Մեղքը կապ ու կապանք է, որով կը կապուի ու իր ազատութիւնը կը կորսնցնէ մարդը: Այդ կապէն ու կապանքէն ձերբազատելու միակ միջոցը՝ մեր մեղքերը խոստովանիլն է: Դաւիթ կ'ըսէ. «Երբ մեղքերս շխտատվանեցայ, ոսկորներս մաշեցան» (Սղ 32.3): Զխոստովանուած մեղքը կը մաշեցնէ մարդը: Մեղքը բե՛ն է. խոստովանիլ մեր մեղքերը՝ այս բեռէն ազատիլ կը նշանակէ:

4) Յովհաննէս քաղաքները չգնաց, այլ քաղաքներու մարդիկը իրե՛նք էին որ քովը եկան, երբ լսեցին թէ կը քարոզէր որ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է: Անոնք որոնք հետաքրքրուած են Աստուծոյ թագաւորութեամբ՝ իրե՛նք է որ անձնապէս պէտք է փնտռեն զանիկա:

«Երբ Յովհաննէս տեսաւ շատ մը Սաղուկեցիներ եւ Փարիսեցիներ, որոնք իրմէ մկրտուելու եկած էին, ըսաւ անոնց. "Իժերո՛ւ ծնունդներ, ո՞վ ըսաւ ձեզի թէ կրնաք Աստուծոյ տալիք պատիժէն փախչիլ: Ասկէ ետք՝ գործո՛վ ցոյց տուէք թէ ապաշխարած էք"» (Մտ 3.7-8):

1) Յովհաննէս իրենց մեղքերը խոստովանողները միայն կը մկրտէր: Սաղուկեցիներն ու Փարիսեցիները իրենք զիրենք արդար կը նկատէին, եւ իրենց ըմբռնումով՝ չունէին յատուկ մեղքեր զորս պէտք էր խոստովանէին, եւ անոր համար ալ, Յովհաննէս յանդիմանական շեշտով մը զիրենք «իժերու ծնունդ» կոչեց:

2) Ինչո՞ւ Յովհաննէս «իժերու ծնունդ» կոչեց Սաղուկեցիներն ու Փարիսեցիները: Երեք պատճառներով.-

ա) «Իժ»ը օձերու ընտանիքին կը պատկանի: Յովհաննէս զիրենք օձերու ծնունդներ կոչեց, որովհետեւ, ինչպէս օձը իր թոյնը կը պահէ, այնպէս ալ, Սաղուկեցիներն ու Փարիսեցիները իրենց մեղքերու թոյնը կը պահէին, Յովհաննէսի նկատմամբ իրենց շար դիտաւորութիւնները կը ծածկէին, եւ հետագային ալ, Քրիստոսի հանդէպ իրենց ունեցած շար ծրագիրները պիտի պահէին:

բ) Աստուածաշունչին մէջ Սատանան յաճախ «օձ» կոչուած է (Մն 3.1-2,4,13,14: Ես 27.1: Ա.Կր 11.3: Յլտ 12.9,14,15, 20.2): Մէկը «օձ» կամ «իժի ծնունդ» կոչել, կը նշանակէ զայն Սատանայէն ծնած, եւ ուստի՝ Սատանայի գաւակ կոչել: Յիսուս առիթով մը խօսքը ուղղելով Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն՝ ըսաւ. «Դուք ձեր հօր՝ Սատանային գաւակներն էք» (Յհ 8.44): Այլ առիթով մը զանոնք «օձեր, իժերու ծնունդներ» անուանեց (Մտ 23.33): Անոնք իրենք զիրենք Աբրահամի գաւակ կը դաւանէին. Յովհաննէս զանոնք «իժերու ծնունդներ» կոչելով, պարզեց անոնց, թէ իրենք ո՛չ թէ Աբրահամին՝ այլ Սատանային գաւակներն էին:

գ) Ինչպէս Սատանան թոյլ չի տար որ մարդոց ոտքերուն առջեւ իր լարած ծուղակները երեւին, նոյնպէս ալ, Սաղուկեցիներն ու Փարիսեցիները կը փորձէին աներեւելի դարձնել Յովհաննէսին ու Յիսուսին համար իրենց լարած ծուղակները, եւ անոր համար ալ Յովհաննէս զանոնք կոչեց «իժերու ծնունդներ»:

3) «Ո՞վ ըսաւ ձեզի թէ կրնա՞ք Աստուծոյ տալի՞ք պատիժէն փախչիլ»: Տրուած ըլլալով որ Սաղուկեցիներն ու Փարիսեցիները իրենք զիրենք Աբրահամ նահապետի զաւակներ ու հետեւորդներ կը նկատէին, անոնք երբեք չէին կրնար պատկերացնել թէ Աստուած ոեւէ պատճառով կրնար զիրենք պատիժի ենթարկել: Իր այս հարցումով, սակայն, Յովհաննէս ցոյց տուաւ անոնց, թէ չէին կրնար «Աստուծոյ տալի՞ք պատիժէն փախչիլ», եթէ երբեք գործով ցոյց չտային որ ապաշխարած էին: Յովհաննէսի այս հաստատումը մեզ զգաստութեան պէտք է հրաւիրէ. ան կը բացայայտէ, թէ Աստուած ի հարկին կրնայ պատժել մարդը: Ճիշդ է որ Աստուած ողորմած է, բայց պէտք չէ մոռնալ նաեւ որ ան արդար է: Ողորմած է՝ մեղքի մէջ ինկող եւ իր ողորմութիւնը խնդրողներուն հանդէպ, բայց արդար է՝ կամովին մեղքի մէջ մնացողներուն հանդէպ:

4) «Ասկէ ետք՝ գործով ցոյց տուի՞ք թէ ապաշխարած է՞ք»: Սաղուկեցիներն ու Փարիսեցիները իրենք զիրենք արդար կը նկատէին, բայց երբ Յովհաննէսի մօտ եկան մկրտուելու՝ ապաշխարողի պատկեր առին: Յովհաննէս տեսա՛ւ անոնց կեղծաւորութիւնը, եւ պատուիրեց որ գործով ցոյց տան որ ապաշխարած են: Մարդը կրնայ տարբեր ցոյց տալ իր անձը, բայց Տէրը կը տեսնէ անոր խորքը: Այսօր ալ մեր կեանքին մէջ կան Փարիսեցիներ ու Սաղուկեցիներ, այլ խօսքով՝ հոգեւորներ ու հոգեւորականներ, որոնք կը խօսին ապաշխարութեան մասին, որոնց կեանքը սակայն ցոյց չի տար որ ապաշխարած են. կը խօսին մաքրութեան մասին, որոնք սակայն մեղքի աղտին մէջ կը թաւալին. կը խօսին արդարութեան մասին, որոնց ձեռքերը սակայն դատարկ են արդարութեան գործերէն: «Ասկէ ետք՝ գործով ցոյց տուի՞ք թէ ապաշխարած է՞ք»: Այս խօսքը մեզի՛ ալ ուղղուած է. մեզի՛ հոգեւորականներուս, եւ ձեզի՛ դուք ձեզ հոգեւոր կարծողներուդ: Գործով ցոյց տանք որ Յիսուսի աշակերտներն ենք. սիրո՛յ գործերով. Սէ՛րն է ապացոյցը որ մենք Յիսուսի աշակերտներն ենք. «Զեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս է՞ք» (Յ՛ 13.35): Գործով ցոյց տանք որ մենք Տիրոջմով սրբուած ենք. Տիրոջմով սրբուած մարդը կ'ատէ՛ մեղքը, կը զզուի՛ մեղքէն: Այսօրուան հոգեւորականներն ու հոգեւորները ո՛չ կ'ատեն մեղքը եւ ո՛չ ալ կը զզուին մեղքէն. ընդհակառակը, կը սիրեն մեղքը, եւ իրենց կեանքով կը սնուցանեն զայն:

«Դուք մի՛ խորհի՛ք թէ կրնա՛ք պատիժէն ազատիլ, ըսելով. "Մենք Աբրահամի որդիներ ենք": Կըսեմ ձեզի, որ Աստուած այս ֆարերէն ալ կրնայ Աբրահամի որդիներ հանել» (Մտ 3.9):

1) Փարիսեցիներն ու Սադուկեցիները կը հպարտանային որ իրենք Աբրահամի սերունդէն էին եւ Աբրահամի հետ իրենց ունեցած այդ մարմնական կապին մէջ կը տեսնէին իրենց փրկութիւնը: Յովհաննէս Մկրտիչ եկաւ յիշեցնելու անոնց, թէ Աբրահամի սերունդէն իրենց ըլլալը չէր կրնար զիրենք փրկել Աստուծոյ պատիժէն, եթէ հեռու էին Աբրահամի հաւատքէն: Սուրբերու յետնորդներ ըլլալը մեզ չի փրկեր: Այսօր կան հայեր, որոնք կը հպարտանան որ իրենք Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Գրիգոր Նարեկացիի, Ս. Ներսէս Շնորհալիի յետնորդներ են, բայց կը մոռնան, որ այդ յետնորդութիւնը ո՛չ թէ փրկութիւն, այլ՝ պատիժ կը բերէ իրենց վրայ. որովհետեւ, ինչո՞վ կ'օգտուինք եթէ նման սուրբերու յետնորդներ ենք, բայց անոնց հաւատքին հետեւողներ չենք:

2) Ինչպէս Աստուած ամուլ Սառայի քարացած արգանդէն կրցաւ Իսահակը պարգեւել Աբրահամին, եւ Իսահակին միջոցաւ Աբրահամը դարձուց բազմաթիւ զաւակներու հայր, նոյնպէս ալ, ան կրնայ քարացած սիրտ ունեցող հեթանոսներէն Աբրահամի որդիներ հանել: Աստուած կրնայ քարերը պաշտող հեթանոսները դարձնել Աբրահամի հաւատքի որդիներ (Ներսէս Շնորհալի): Աստուած կրնայ քարապաշտ հեթանոսը՝ Աստուածապաշտ դարձնել, ճիշդ ինչպէս աստղապաշտ մոզերը՝ Քրիստոսապաշտ դարձուց:

3) Սատանան ուզեց որ Յիսուս քարը հաց դարձնէր (Մտ 4.3), բայց Յիսուս չէր եկած քարը հաց դարձնելու, այլ՝ մարդոց քարացած սիրտերը կեանքի Հացով կշտացնելու եւ զանոնք կենսատու հացերու փոխակերպելու:

4) «Աստուած այս ֆարերէն ալ կրնայ Աբրահամի որդիներ հանել»: Յովհաննէսի այս հաստատումը Աստուծոյ ամենակարողութիւնն է որ հանդէս կը բերէ: Արդարեւ, Աստուած կրնայ մեղքով քարացած սիրտերը՝ իր Որդիին սիրով փափկացած սիրտերու փոխակերպել. կրնայ դեւերու բնակարան դարձած հոգիները՝ Սուրբ Հոգիի տաճար դարձնել. կրնայ ստութեան վկայ լեզուները՝ ճշմարտութեան վկայ լեզուներու վերածել:

«Կացի՛նը արդէն իսկ պատրաստ է ծառերը իրենց արմատներէն կտրելու: Այն ծառը որ բարի պտուղ չի տար, պիտի կտրուի եւ կրակ նետուի» (Մտ 3.10):

1) Կացի՛նը ծառերուն արմատին քով դրուած է, եւ ո՛չ թէ անոնց կոճղերուն, ճիւղերուն, կամ տերեւներուն քով, որպէսզի եթէ պտուղ չտան՝ արմատէն խլուին, եւ վերստին ընձիւղելու առիթ չունենան: Կացի՛նին դրուելը

ծառերուն արմատին քով, փոխանակ դրուելը անոնց արմատին վրայ եւ զանոնք կտրելը՝ կը պարզէ Աստուծոյ ներումն ու համբերութիւնը անպտուղ Փարիսեցիներուն եւ Սադուկեցիներուն հանդէպ, մինչեւ որ պտուղ բերէին (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

2) Բառացիօրէն կը կարդանք. «Հիմա կացինը ծառերուն արմատին քով կը դրուի»: Ծառը իր կեանքը կը ստանայ իր արմատներուն միջոցաւ: Կացինը ծառին արմատին քով դնելը՝ անոր կեանքը խլելու պատրաստ վիճակ մը կը ներկայացնէ: «Կացին»ը կը պատկերացնէ Աստուծոյ դատաստանական խօսքը: Յովհաննէս բացայայտեց, թէ հասած էր ժամանակը երբ Աստուած իր խօսքի կացինով անպտուղ Հրեաները արմատախիլ պիտի ընէր իր այգիէն եւ անոնց փոխարէն՝ հեթանոսներէ կազմուած ու քարերէն հանուող նոր ժողովուրդ մը պիտի կազմէր, զանոնք իր այգիին մէջ պիտի տնկէր, եւ Աբրահամի որդիներ դարձնէր:

3) Յովհաննէս ցոյց տուաւ Փարիսեցիներուն եւ Սադուկեցիներուն, թէ եկած էր ժամանակը երբ կացինը ծառերուն արմատին քովէն պիտի հանուէր եւ դրուէր արմատին վրայ: Գալով մեզի, ո՞ւր դրուած է Աստուծոյ խօսքին կացինը մեր կեանքին մէջ: Մեր կեանքի ծառին արմատին քով, թէ՛ արդէն իսկ արմատին վրայ կը գտնուի կացինը: Եթէ շարունակենք յամառօրէն մեղքի մէջ մնալ, պիտի գայ ժամանակ երբ Աստուած իր խօսքի ու վճիռի կացինը ծառին արմատին քովէն պիտի հանէ եւ ծառին արմատին վրայ պիտի դնէ ու կտրէ զայն:

4) «Կտրել»ը՝ անպտուղ մարդը Աստուծոյ հեռացնել կը նշանակէ, իսկ «կրակ»ը՝ Աստուծոյ պատիժն ու բարկութիւնը կ'արտայայտէ: Յովհաննէս ուզեց ցոյց տալ Փարիսեցիներուն եւ Սադուկեցիներուն, որ եթէ շարունակեն անպտուղ մնալ՝ պիտի կտրուին եւ կրակ նետուին: Համարը միայն անպտուղ ծառը կտրելու մասին չի խօսիր, այլ նաեւ՝ կը խօսի զայն կրակին մէջ նետելու մասին. եւ սա ցոյց կու տայ, թէ Աստուած անպտուղ մարդը իրմէ հեռացնելով պիտի շքաւարարուի, այլ՝ զայն պիտի պատժէ նաեւ:

5) Յովհաննէս մարդը կը նմանցնէ ծառի, ցոյց տալու համար թէ անոր կոշումն է պտուղ տալ: Ինչպէս ծառը բնութեամբ Աստուծոյ կողմէ պտուղ բերելու ատակութեամբ ստեղծուած է, նոյնպէս ալ, մարդը ինք եւս պտուղ բերելու ատակութեամբ ստեղծուած է: Եթէ դուն քեզ Քրիստոսի կողմէ իր արտին մէջ տնկուած ծառ կը սեպես՝ ո՞ւր են պտուղներդ, որով մարդիկ կարենան կշտանալ: Եթէ դուն քեզ Տիրոջ ձեռքով կառուցուած տաճար կը նկատես՝ ո՞ւր են սրտիդ տաճարէն արտաբերուող փառաբանութիւնները, որով կարենաս ներշնչել ու քաջալերել մարդիկը Աստուծոյ փառաբանութեան ու պաշտամունքին դառնալու:

6) Յովհաննէս միայն պտուղ տալու մասին չէ որ կը խօսի, այլ՝ բարի՛ պտուղ տալու մասին, որովհետեւ չա՛ր պտուղներ ալ կան: Օրինակ, երբ մէկը կը ձեւացնէ որ քեզ կը սիրէ բայց խորքին մէջ չի սիրեր՝ չա՛ր պտուղ մըն է: Երբ մէկը կը ձեւացնէ թէ ինք խոնարհութեան պտուղը ունի, բայց իր սրտին մէջ հպարտութեան պտուղը կը կրէ՝ չա՛ր է իր պտուղը:

7) Թէպէտ Փարիսեցիներն ու Սադուկեցիները երկար ժամանակէ ի վեր անպտուղ էին, բայց Յովհաննէս չխօսեցաւ անոնց անմիջապէս կտրուելու ու կրակին մէջ նետուելու մասին, այլ՝ քաջալերեց որ պտուղ բերեն: Ծառը իր ժամանակը ունի պտուղ բերելու, իսկ մարդը ամէն ատեն կրնայ պտուղ բերել: Ծառը իր ազատ կամքով պտուղ չի բերեր, այլ՝ ինքնաբերաբար կը բերէ. մինչդեռ մարդը անձնիշխան է, ազատ կամք ունի, եւ իր ազատ կամքով պէտք է պտուղ բերէ (Ներսէս Շնորհալի):

8) Կարգ մը մեկնիչներ հոս յիշուած կացիներ կը նկատեն խորհրդանիշ Տիրոջ խաչին. «Անպտուղ ծառերը կամ վատ պտուղ բերող ծառերը հարուածող կացիներ կը ներկայացնէ Քրիստոսի խաչը, որ շուտով պիտի հարուածէ մեր ապականած բնութեան արմատը, որպէսզի մեռնի մեր մէջ հին մարդը, եւ յարութիւն առնէ Աստուծոյ պատկերով ստեղծուած նո՛ր մարդը, որ կարող պիտի ըլլայ Սուրբ Հոգիին ուրախարար պտուղները բերել» (Դադրոս Մալթի):

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 6)



ՔԱՐՈԶԱԽՕՍԱԿԱՆ

## ԾԱՌԱՅԱԿԱՆ ՏԻՐՈՒԹԻՒՆ\*

«Ականջ դի՛ր, Տէ՛ր, իմ աղօթքիս, նկատի՛ առ  
բարձրադադակ խնդրանքներս» (Սղ 86.6):

Այսօր կրկնակի հոգեւոր ուրախութեան օր է մեր ժողովուրդի զաւակներուն համար, երբ, նախ, Հայ եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագին կը մասնակցինք եւ մեր Տէր ու Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Մարմինով ու Արիւնով կը հաղորդուինք, ապա, միաժամանակ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Սրբազնագոյն Կաթողիկոսին ընտրութեան ու օծումին շքանշան տարեդարձը կը նշենք:

Քիչ առաջ, Հայրապետական Մաղթանք-աղօթքով Աստուծոյ դիմեցինք եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին ու անոր Արժանընտիր Գահակալին վաստակը Հայ եկեղեցոյ ծառայական կեանքի համապարփակ շրջագիծին մէջ գնահատեցինք: Այժմ, սաղմոսերգուին բառերը փոխ առնելով եւ մեր Միաբանութեան ու աշխարհացրիւ հաւատացեալներուն թարգմանը հանդիսանալով, աղօթական խնդրանքներս կ'ուղղեմ մեր Արարիչին եւ կը մաղթեմ, որ Վեհափառ Հայրապետը քաջառողջութեամբ ու ծով համբերութեամբ ընդ երկար աւուրս շարունակէ Քրիստոսատիպ ծառայական տիրութեամբ հովուել իր հոգեւոր խնամքին վստահուած բանաւոր հօտը: Վստահեմ, որ Նորին Սրբութիւնը մեր բոլորին սրտաբուխ բարեմաղթութիւններուն իր աղօթք-խնդրանքը կը միացնէ եւ կը դիմէ Աստուծոյ, ըսելով. «Զօրացո՛ւր զիս՝ քու ծառայ» (Սղ 86.16):

Այս օրհնեալ պահուն, երբ Անթիլիասի Մայր Տաճարին խնկաբոյր կամարներուն տակ համախմբուած հաւատացեալներս, կը միանանք յատկապէս Հայրապետական Մաղթանքով մեզի աղօթակից դարձած մեր Թեմերու արիւ-

\* Քարոզ, խօսուած Անթիլիասի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ, Կիրակի, 2 Յուլիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան ու օծման 28-րդ տարեդարձին առթիւ:



նակից ու հաւատակից եղբայրներուն ու քոյրերուն, եկէք հարց տանք, թէ ի՞նչ կը նշանակէ մեր սիրեցեալ Հայրապետին ընտրութեան ու օծումին 28-րդ տարեդարձը տօնելը. այս առթիւ Աստուած ի՞նչ կ'ակնկալէ մեզմէ՝ որպէս Կիլիկեան Միաբանութիւն ու հաւատացեալ հայորդիներ:

Այս հարցումին պատասխանը Աստուածաշունչը կու տայ մեզի, երբ մեր Հայրապետներուն կողմէ այս կիրակիին համար սահմանուած ճաշու աստուածաշնչական ընթերցուածները Հայրապետական Մաղթանքին հիւսելով, երեք ընդգծումներով յորբելեար Հայրապետով գլխաւորուած Հայրապետական Ս. Աթոռին էութիւնը փորձենք ըմբռնել՝ մեր հոգեւոր Հօր առաքելակից զաւակները դառնալու պինդ ձգտումով:—

1) Աւետարանչութիւն: Արամ Ա. Կաթողիկոս, իր քահանայական ձեռնադրութեան օրերէն մինչեւ այսօր, մեր ու իր հոգեւոր ուշադրութիւնը սեւեռելով Երկինքի արքայութիւնը ժառանգելուն վրայ՝ կը շարունակէ մեր եկեղեցւոյ արտին մէջ բարի սերմ ցանել, հակառակ այն իրողութեան որ երեւելի ու աներեւոյթ թշնամիներ կը ճգնին որո՞մ սերմանել, ինչպէս Քրիստոս կը պատմէ մեզի իր առակին մէջ (տե՛ս Մտ 13.24–30): Փա՛ռք կու տանք Աստուծոյ, որ Անթիլիասի փոքր ածուին մէջ ցորենը աւելի շատ է եւ մեր ազգի զաւակները կը վայելեն անոր բարիքները հանապազօրեայ հոգեւոր-ազգային թարմ հաց ունենալով իրենց սեղաններուն վրայ:

Նո՛յն աւետարանչութեան ճառագայթումն է Վեհափառ Հայրապետին այս տարի մեր թեմերուն շնորհած այցելութիւնը՝ Հայ Սփիւռքը վերակազմակերպելու հրամայականին կշռոյթով, որպէսզի աստուածաշնչական արժէքներով ոռոգուն Հայ կեանքը մշտադալար մնայ:

2) Առաքելութիւն: Արձագանգելով առաքելական նամակին (տե՛ս Հո 9.30–10.4) եւ զայն մեր ազգին ուղղելով, Վեհափառ Հայրապետը իր աղօթքն ու առաքելութիւնը իրար շաղախելով՝ կ'ըսէ. «Սրտանց կը մաղթեմ ու կ'աղօթեմ, որ Աստուած փրկէ նոր իսրայէլացիները՝ Հայ ազգը»: Փրկութիւնը տէրունի պարգեն է բոլոր քրիստոնեաներուն. սակայն մեր պարագային անոր նախահամը կ'առնենք Հայ քրիստոնեայի մկրտութեան եւ Սրբալոյս Միւռոնի դրոշմին ամէնօրեայ ապրումով, որ է մեր «գոյն մորթոյ» ինքնութիւնը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմածաւալ առաքելութեան ծիրին մէջ կ'իշնայ նաեւ մեր անկապտելի իրաւունքներու ձեռքբերումի արդար պայքարը, որ Հայոց Յեղասպանութեան հետեւանքով սփիւռքացած, շրջափակուած Արցախի մէջ բանտուած եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան մէջ ապրող մեր ժողովուրդի զաւակները մէ՛կ ազգ, մէ՛կ եկեղեցի եւ մէ՛կ պահանջատիրութիւն կարգախօսով կը միազանգէ:

Այս հայակնիք ինքնութեան անաղարտ պահպանումը մեր Ս. Աթոռին առաքելութեան մղիչ ոյժն է, որպէսզի Հայ քրիստոնեան շմոլորի փրկութեան լուսաշող ճանապարհէն:

3) Մարգարէութիւն: Մարգարէին (տե՛ս Ես 2.5-11) յայտնած «Տիրոջ օր»-ուան խորհուրդը բացայայտելով, Վեհափառ Հայրապետին մարգարէական ձայնը մեզ կը հրաւիրէ երկրաւորէն անդին երկնաւոր կեանքին սեւեռելու մեր հոգիին աչքերը եւ խորապէս գիտակցելու, թէ երկիրը ոսկիրով ու արծաթով լեցնելը կրնայ մեզ մեր ձեռքերով իսկ կերտուած գարշելի շաստուածներու պաշտամունքին առաջնորդել, մինչ բոլորէս կ'ակնկալուի խոնարհիլ՝ Աստուծոյ կամքին հնազանդելով եւ այսպիսով ո՛չ թէ մեր անձերը, այլ Տէրը բարձրացնել այս աշխարհի վրայ ու Աստուծոյ թագաւորութեան մէջ:

Այս մէկը կարելի է լիապէս կատարել, մասնակցելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւաքական առաքելութեան, Աստուծոյ մեզի տուած բազմազան շնորհներն ու բարիքները Նորին Սրբութեան տրամադրութեան տակ դնելով՝ ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն Հայ եկեղեցւոյ եւ ի բարօրութիւն մեր բոլորին:

Ծիսականօրէն այսօր Հոգեգալուստին յաջորդող հինգերորդ կիրակին է: Քանի մը օր առաջ Անթիլիաս վերադարձայ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան ժողովէն: Գիտէք, թէ միջ-եկեղեցական շարժումը որքա՛ն սիրելի է Վեհափառ Հայրապետին եւ Նորին Սրբութիւնը ինչպիսի՛ յիշատակարժան ներդրում ունեցած է ու կը շարունակէ ունենալ միջ-եկեղեցական, միջ-կրօնական եւ միջազգային բեմերու վրայ: Առ այդ, միջ-եկեղեցական շարժումի ամէնէն ներկայացուցչական մարմինը հանդիսացող Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի 352 եկեղեցիներու հաւատացեալները երախտագիտութեամբ կը յիշեն Արամ Ա. Կաթողիկոսը եւ մեզի միանալով առաւել պտղառատ գահակալութիւն կը մաղթեն իրենց նախկին Ատենապետին ու այժմու Նախագահին, եւ առ Աստուած կ'առաքեն հետեւեալ միջ-եկեղեցական աղօթքը. –

Եկու՛ր Ս, Հոգի եւ վերանորոգէ ամբողջ ստեղծագործութիւնդ, եկու՛ր Ս, Հոգի եւ վերանորոգէ զիս, եկու՛ր Ս, Հոգի եւ վերանորոգէ մեզ, ամէն:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՃՄԷՋԵԱՆ

## ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

### 90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՉՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

#### Տ. ՓԱՌԵՆ ԵՊՍ. ՄԵԼԵՈՆԵԱՆ

Ծնած է 3 Օգոստոս 1873-ին, Էհնէշ (հայաբնակ գիւղ մը Եդեսիոյ Թեմին մէջ, Եփրատի աջ ափունքին): Աւագանի անունն է Ներսէս:

1875-ին ընտանեօք տեղափոխուած են Էհնէշէն Այնթապ: Նախնական կրթութիւնը ստացած է Այնթապի Ազգ. Ներսէսեան Վարժարանի եւ Վարդանեան Կրթարանին մէջ: 1890-ին, Արմաշի Դպրեվանք ուղարկուած է Կրօնասիրաց Ընկերութեան կողմէ: Աւարտելէ ետք դպրեվանքի Ժառանգաւորաց շրջանը, 26 Սեպտեմբեր 1893-ին Սարկաւազ ձեռնադրուած է ձեռամբ Արմաշի Դպրեվանքի վերատեսուչ Մաղաքիա Արք. Օրմանեանի, Զարխափան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

15 Սեպտեմբեր 1896-ին, կատարելով կուսակրօնութեան իր ուխտը, եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է դարձեալ ձեռամբ Մաղաքիա Արք. Օրմանեանի, վերակոչուելով Տ. ՓԱՌԵՆ ԱԲԵՂԱՅ, օծակից ունենալով Երուսաղէմի Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Գուշակեանը:

1 Մարտ 1898-ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է, իսկ 27 Ապրիլ 1908-ին՝ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ Կ. Պոլսոյ Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեանի, Կ. Պոլսոյ մէջ:

Փարէն Ծ. Վարդապետ վարած է առաջնորդական, ուսուցչական եւ զանազան այլ պաշտօններ:

1896-1897 եղած է ուսուցիչ Արմաշի Դպրեվանքէն ներս, նոյն ատեն ստանձնելով դպրեվանքի մատակարարապետութեան տեսչութիւնը:

1898-ին՝ քարտուղար Կ. Պոլսոյ Պատրիարքին անձնական դիւանին մէջ, միանգամայն քարոզիչ Պոյաճ գիւղի Ս. Երից Մանկանց Եկեղեցւոյ մէջ:

1899-1905 եղած է Առաջնորդ Սղերդի, որմէ ստիպուած է հրաժարիլ տընտեսական պատճառով:

1905-1907՝ Առաջնորդական Տեղապահ Մարաշի եւ շուգելով Առաջնորդ ընտրուել՝ հրաժարած է:

1908-ին՝ Արմաշի Դպրեվանքին ելեւմտից տեսուչ:

Ատանայի Եղեռնի հետեւանքով եկեղեցականներու անմիջական կարիքը պէտք եղած ըլլալով, Կ. Պոլսոյ Պատրիարք Եղիշէ Արք. Դուրեանի տնօրինութեամբ, եօթը քահանաներու ընկերակցութեամբ Կիլիկիա ղրկուած է: Սահակ Բ. Կաթողիկոսի կողմէ նշանակուած է Հաճնոյ Առաջնորդ: Ապա կանչուած է որբախնամի գործին եւ կարեւոր դեր ունեցած է Կիլիկեան Ազգային որբանոցներու կազմակերպութեան գործին մէջ, փոխարինելով Գնեկ Ծ. Վարդապետ Գալէմբէրեանը: Փառէն Ծ. Վարդապետ նուիրումով եւ ամբողջական յանձնառութեամբ ծառայած է Հայ Որբախնամին, նախ Տէօրթ-Յոլի Ազգ. Որբանոցին՝ որպէս տեսուչ, 1909-1911, ապա՝ Տէօրթ-Յոլի եւ Հասանպէյլի Որբանոցներուն միացումով՝ Հասանպէյլի մէջ, 1911-1913:

1913-ին անցած է Այնթապ՝ ստանձնելու համար Կիլիկեան ձեմարանի գիշերօթիկի բաժնի ներքին տեսչութիւնն ու մատակարարութիւնը:

1915-1917 եղած է Առաջնորդ Պաղտատի: Համաշխարհային Առաջին Պատերազմի դժուարին եւ տառապագին պայմաններուն մէջ, երկու տարի վարած է իրեն վստահուած այս պաշտօնը:

1917-ին, Հայաստան երթալու ջերմ զգացումներով եւ Մայր Աթոռի ու էջմիածնական թեմերու մէջ ծառայելու բաղձանքով, հրաժարած է Առաջնորդական իր պաշտօնէն եւ մեկնած՝ Ռուսաստան: Սակայն թաթար-պոլշեւիկ բախումներու պատճառաւ չէ կրցած Հայաստան անցնիլ, այլ՝ քահանայագործութեամբ ու գաղտնի ուսուցչութեամբ ապրած է Ռուսիոյ մէջ, Զարիձին (ապա՝ Ստալինկրատ) եւ Վորոնէժ քաղաքները, մինչեւ 1919 թ., ապա հրաժարելով Հայաստան երթալու մտադրութենէն՝ անցած է Պոլիս:

1920-1921 նշանակուած է քարոզիչ Նարլը Գափուի եւ ապա Գում Գափուի եկեղեցիներուն:

1921-ին, Տէօրթ-Յոլի Առաջնորդական Փոխանորդ կարգուած է մինչեւ Կիլիկիոյ հայաթափումը, ուրկէ Բէլէկեան եւ Սիսուան Որբանոցի որբերուն հետ ուղեւորուած է Ալեքսանտրէդ:

1923-1924 տազնապալի պայմաններու տակ վարած է Հալէպի Կաթողիկոսական Փոխանորդութիւնը:

1924-1925 նշանակուած է հոգեւոր հովիւ Թրիփոլի (Լիբանան):

1926-ին՝ հոգեւոր հովիւ Ճիւնիի (Լիբանան):

1926-1928՝ Կիպրոսի Մելքոնեան Կրթական Հաստատութեան մէջ, որպէս ուսուցիչ: 1929-1930 դարձեալ նշանակուած է հոգեւոր հովիւ Ճիւնիի Հայոց:

1930-ին, երբ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռը կայք հաստատած է Անթիլիասի գեղածիծաղ ափունքին, Փառէն Մ. Վարդապետ, Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսին հրաւերով անդամակցած է Կիլիկեան Միաբանութեան ուխտին եւ հաւատարմօրէն ծառայած՝ Ս. Աթոռին: Ան դպրեվանքէն ներս ստանձնած է դասապահեր եւ միանգամայն զանազան պաշտօններ մինչեւ իր եպիսկոպոսացումը (1947), ձեռամբ Գարեգին Ա. Կաթողիկոսի:

Փառէն Եպս. Մելքոնեան օրէնսգէտ ու ծիսագէտ հոգեւորական մը եղած է: Զերմ պաշտպան՝ Հայաստանեայց Ուղղափառ դաւանութեան եւ առ այդ իսկ յօդուածներով մաքառած է կաթողիկոսութեան խեղաթիւրումներու դէմ, ՀԱՍԿ Ամսագրի 1940-1949 տարիներու թիւերուն մէջ հմտալից յօդուածներ ստորագրելով: Գրած է Պատարագամատոյցի մասին ուսումնասիրութիւն մը: ՀԱՍԿ-ի մէջ ունի նաեւ անդենական կեանքի մասին խորհրդածութիւններու շարք մը: Սրբազան Հօր գրութիւններուն կարեւոր մէկ մասը՝ «Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ» խորագրեալ հատորով մը, 2006-ին հրատարակուած է Անթիլիասի մէջ, Ատրպատականի Առաջնորդ Գրիգոր Եպս. Զիֆթճեանի խմբագրութեամբ:

1956-ի ազգային-եկեղեցական տագնապի օրերուն հեռացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանական Ուխտէն, որոշ ժամանակ մը մնալէ ետք Պէյրութ, նկատելով որ իր յառաջացեալ տարիքին փափաք յայտնած էր, որ իր կեանքի վերջակէտը դրուի Երուսաղէմի մէջ, զինք խնամողներ, զգալով որ իր երկարամեայ եւ արկածալից կեանքին պատրոյզը կ'առկայծի արդէն, զինք Երուսաղէմ փոխադրելու բարեմիտ փութկոտութիւնն ունեցած են: Ան Երուսաղէմ հասած է 20 Հոկտեմբեր 1957-ին՝ պատգարակով. մեծ հոգածութեամբ տեղաւորուած է Ս. Աթոռոյ Միաբանութեան սենեակներէն մէկուն մէջ. ուշքը թէեւ վրան եղած է, բայց հոգեվարքի հեւքը արդէն իսկ զգալի նշաններ ցուցաբերած է: Եւ 21 Հոկտեմբերի առաւօտեան հրաժեշտ տուած է իր կեանքին, նման կանթեղի մը, որ կը շիջի ձիթախիւղին սպառելովը:

Թաղման եւ Վերջին Օծման արարողակարգը կատարուած է Ս. Յակոբի խնկաբոյր կամարներուն ներքեւ: Եկեղեցական արարողութեանց նախագահած է Տիրան Արք. Ներսոյեան՝ ընտրեալ Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռոյն, ներկայութեամբ ողջ միաբանութեան:

Յաւարտ Ս. Պատարագի, մարմինը ամփոփուած է Մատենադարանի կից, եպիսկոպոսաց յատուկ գերեզմանատան մէջ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 14)

**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

## ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ\* THEOSOPHIA

### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Աստուածիմաստութիւն» հայերէն բառակերտումը յառաջացած է յունարէն "theosophía" (յուն.՝ θεοσοφία) եզրոյթի արմատական թարգմանութենէն եւ կարճ բացատրութեամբ ան կը նշանակէ «աստուածային իմաստ(ուն)ութիւն»:

«Աստուածիմաստութիւնը», որպէս բնորոշում, հաւաքական անուանումն է աստուածաբանական ու փիլիսոփայական ա՛յն մտածողութեան, ուր **խորհրդապաշտութեան** (Mysticism), **ներհայեցողութեան** (Intuition) կամ **հայեցողութեան** (Contemplation) միջոցներով, զԱստուած ճանչնալու կամ աստուածայինը իմանալու անմիջական ձգտում մը կայ:

Նախ պարզաբանեմ վերոյիշեալ երեք միջոցները.-

- **խորհրդապաշտութիւն** (Mysticism) հասկացութիւնը կը բնորոշուի՝ աստուածային կամ բացարձակ իրականութեան մը փորձառութեան վկայութիւններով կամ արտայայտութիւններով կամ նմանօրինակ փորձառութիւններ ունենալու ժրաջան ճիգով: Իսկ մեր ամենօրեայ օգտագործման եւ հանրամատչելի գրականութեան մէջ, խորհրդապաշտութիւն եզրոյթով կը հասկնանք ա՛յն հոգեկան եւ հոգեզմայլ ապրումները, զորս գիտականօրէն կարելի չէ առարկայացնել կամ բացատրել եւ հայեցողութեամբ (Contemplation) ու հասկացութիւններով (Concept, յղացք) կարելի չէ իմանալի ու ճանաչելի դարձնել:

- **Ներհայեցողութիւն** (Intuition) հասկացութեամբ կարելի է բնութագրել մտքի ա՛յն կարողութիւնը, որով կարելի է տարբեր իրավիճակները, տեսակէտները, օրինաչափութիւնները կամ ենթակայական համաձայնութիւնները արագօրէն եւ անմիջականօրէն (ուղղակիօրէն) ըմբռնել եւ յստակ որոշումներ կայացնել, առանց մտային-իմացական քննարկութիւններու եւ առանց գիտակից հետեւութիւններու կամ եզրայանգումի: **Ներհայեցողու-**

---

\* «Աստուածիմաստութիւն – Theosophia».- Ընդհանուր վերնագիրն է յօդուածաշարքի մը, որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ ՀԱՍԿին մէջ: Այս թիւով՝ ընդհանուր ներածութիւն մը:

**Թիւնը** անդրանցական (Transcendence) ընկալումն է, որ ստեղծագործական գործունէութիւն կրնայ յառաջացնել:

• **Հայեցողութիւն** (Contemplation) հասկացութեան կը համապատասխանէ յունարէն "theōría" եզրոյթը, որ հոգեւոր ու խորաթափանց տեսութիւնն ու դիտումն է: Հետագային, լատիներէնի մէջ ընդունուեցաւ "contemplatio" եզրոյթը, որ նոյնպէս խորաթափանց զննումն ու դիտումն է: Լատիներէն եզրոյթէն յառաջացան անգլերէն "Contemplation" եւ այլ լեզուներու նմանօրինակ եզրոյթերը:

Յունարէն "theosophía" եզրոյթը, որպէս ուսմունք եւ "theósophos" եզրոյթը, որպէս անձի վերաբերեալ ածական, շատ հաւանաբար յառաջացած են Հին Դարու (Antiquity) վերջաւորութեան (մ.թ. 2-րդ կամ 3-րդ դարերուն): Ժամանակաշրջանի եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն՝ փիլիսոփայ-աստուածաբան **Կլեմէս Ալեքսանդրացի** (Clement of Alexandria, 150-215 թ.) եւ պատմագէտ-աստուածաբան **Եւսեբիոս Կեսարացի** (Eusebius of Caesarea, 260-339 թ.), ինչպէս նաեւ Նոր-Պլատոնական փիլիսոփայ **Պորփիրիոս** (Porphyrios, 233-305 թ.) օգտագործած են վերոյիշեալ գոյգ եզրոյթները: Պորփիրիոսի համաձայն, աստուածիմաստութիւնը՝ զուտ Աստուծոյ կամ աստուածայինին վերաբերող իմաստ (ուն)ութիւնն է:

Եկեղեցւոյ առաջին շրջանի պատմահայր **Եւսեբիոսի**<sup>1</sup> համաձայն, Քրիստոնէութիւնը կարելի է նաեւ բնութագրել, որպէս «նոր ու ճշմարիտ աստուածիմաստութիւնը», իսկ "theósophos" վերադիրը կամ ածականը՝ պատուոյ վսեմ կոչումն էր «եկեղեցւոյ հայրերուն»<sup>2</sup>:

Պատմութեան ընթացքին (եւ մինչեւ այսօր) գոյութիւն ունեցած են (եւ ունին) բազմաթիւ աստուածիմաստական հոսանքներ, որոնք գերբնական, գերբնական, գաղտնուսոյց կամ խորհրդապաշտական (միստիկ, յուն.՝ mystikós) բնոյթ ունէին կամ ունին: Նաեւ միաստուածեան երեք կրօններու պարագային կը հանդիպինք երեք մասնայատուկ՝ **յուդայական, քրիստոնէական եւ իսլամական աստուածիմաստութիւններու**:

<sup>1</sup> **Եւսեբիոս Կեսարացի** (Eusebius of Caesarea, 260 – 339 թ.)- Կեսարիոյ եպիսկոպոս: Պատմարան-աստուածաբանի «Եկեղեցական Պատմութիւն» ("Church History") եւ «Ժամանակագրութիւն» ("Chronicon") երկերը, Միջնադարուն, թարգմանուած են նաեւ հայերէնի եւ օգտագործուած՝ հայ պատմիչներու կողմէ:

<sup>2</sup> **Եկեղեցւոյ Հայր** (լատ.՝ pater ecclesiae, անգլ.՝ Church Father, գերմ.՝ Kirchenvater).- Եկեղեցական բարձրագոյն տիտղոս, որ կը շնորհուի այն առաքինագարդ ու սրբակենցաղ եկեղեցականներուն, որոնք վճռական ու մեծ ներդրում ունեցած են Քրիստոնէութեան ուսուցման եւ ինքնընկալման մէջ: Թէ՛ Ուղղափառ եւ թէ՛ Կաթոլիկ եկեղեցիները ունին սրբադասուած բազմաթիւ *Եկեղեցւոյ Հայրեր*: Քրիստոնէութեան սկզբնական շրջանի չորս կարեւորները կը նկատուին.- **Ամբրոսիոս Միլանցի, Հիերոնիմոս, Օգոստինոս Երանելի** եւ **Մեծն Գրիգոր Ա. Պապը**: Հայ Եկեղեցին եւս ունի բազմաթիւ սրբադասուած *Եկեղեցւոյ Հայրեր*, որոնցմէ յայտնի է «*Երկոտասան Վարդապետք*» շարքը:

Այս նիւթի քննարկումը բաժնած ենք հինգ ժամանակաշրջաններու.–

- **Աստուածիմաստութիւնը Հին Դարաշրջանին**  
(Հնադար, Antiquity, 700 մ.թ.ա. - 476 թ.),
- **Աստուածիմաստութիւնը Միջին Դարաշրջանին**  
(Միջնադար, Middle Age, 476 - 1492 թ.),
- **Աստուածիմաստութիւնը Անցման Դարաշրջանին**  
(Վերածնունդ, Renaissance, 1400 - 1600 թ.),
- **Աստուածիմաստութիւնը Նոր Դարաշրջանին**  
(Նորադար, New Age, 17-րդ դարէն սկսեալ) եւ
- **Աստուածիմաստութիւնը Ժամանակակից Շրջանին**  
(Contemporary Era, 19-րդ դարու կէսէն սկսեալ):

## 1. ՀԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Հին Դարաշրջանի սկզբնաւորութեան, դեռ **աստուածիմաստութիւն** (յուն.՝ theosophía) եզրույթը չկազմուած, յոյն նշանաւոր փիլիսոփաներ **Պլատոն** (Plato, յուն.՝ Πλάτων, 427-347 մ.թ.ա.) եւ իր աշակերտը **Արիստոտէլ** (Aristotle, յուն.՝ Αριστοτέλης, 384-322 մ.թ.ա.) այս ուղղութեամբ, արդէն կատարած էին հիմնական հաստատումներ, որոնք պիտի մանրամասնուին հետագային:

Փիլիսոփայական այլ ուղղութիւններ եւս ունեցան իրենց յատուկ տեսակէտները, որոնք որոշ չափով կը տարբերին Պլատոնի եւ Արիստոտէլի տեսակէտներէն: Անոնցմէ յիշարժան են.-

- **Էպիկուրական<sup>3</sup> ուղղութիւնը** (Epicureanism), որու հիմնադիրն է յոյն փիլիսոփայ **Էպիկուրոսը** (յուն.՝ Epikouros, 342 – 271 մ.թ.ա.):
- **Ստոյիկեան<sup>4</sup> ուղղութիւնը** (Stoicism), որու հիմնադիրն է՝ յոյն փիլիսոփայ **Չենոն Կիտիոնցին** (Zeno of Citium, յուն.՝ Ζένων, 333 - 262 մ.թ.ա.):

<sup>3</sup> **Էպիկուրականութիւն** (Epicureanism), փիլիսոփայական ուղղութիւն մըն է, որու համաձայն, *Գերագոյն Բարին* նոյնինքն երջանկութիւնն է (երջանկապաշտութիւն - Eudaimonism), որուն կարելի է հասնիլ գլխաւորաբար հաճոյքի միջոցով, տառապանքէն (ցաւէն ու վախէն) խուսափելով եւ ներաշխարհի անդորրութեամբ կամ անխռովութեամբ (Ataraxia): Շեշտելով խոհեմ հաճոյքին կարելութիւնը, հոս կը զանազանուի օգտակար եւ ոչ-օգտակար հաճոյքներու միջեւ: Անարդարաբար Էպիկուրականութեան կը վերագրուի հաճոյապաշտութիւն (Hedonism) մը:

<sup>4</sup> **Ստոյիկութիւն** (Stoicism), փիլիսոփայական ուղղութիւն մըն է, որու համաձայն փիլիսոփայութեան 3 գլխաւոր ճիւղերն են.- տրամաբանութիւնը (Logic), բնագիտութիւնը (Physics) եւ բարոյագիտութիւնը (Ethics), որ նպատակա-բանական ըլլալով կը ձգտի՝ հանգիստ ու երջանիկ կեանքին, շեշտելով բանականութեան ուղին ու ձերբազատուելով բոլոր տեսակի յոյզերէն եւ գրգռներէն (տենչանքներ, մղումներ ու կիրքեր), որպէսզի կարենայ իր ճակատագրին հնազանդիլ եւ իր հոգեկան անդորրն ու անխռովութիւնը գտնել:



• **Պիրոնական<sup>5</sup> ուղղութիւնը** (Pyrrhonism), որու հիմնադիրն է յոյն փիլիսոփայ **Պիրոնը** (Pyrrho, յուն․՝ Pyrrhôn, 360 - 270 մ.թ.ա.):

Հետագային, Հռոմէական կայսրութեան շրջանին, նշանաւոր դարձան նաեւ հետեւեալ երկու փիլիսոփաները.-

• **Փիլոն Ալեքսանդրացի<sup>6</sup>** (յուն․՝ Philôn, մօտ. 20 մ.թ.ա. - 50 թ.), Պլատոնէն մեծապէս ազդուած հրեայ փիլիսոփան, առանց անտեսելու գործնական կեանքի առաջադրանքները, կը գերադասէր աստուածիմաստութեան ու աստուածտեսութեան նպատակները:

• **Պլոտինոս<sup>7</sup>** (յուն․՝ Plôtinos, 205-270 թ.), որ **Նոր-Պլատոնական** (Neoplatonism) փիլիսոփայական ուղղութեան հիմը դրաւ եգիպտական Ալեքսանդրիոյ<sup>8</sup> նշանաւոր դպրոցին (Museion) մէջ, ապա այս նոր ուղղութիւնը փոխադրեց Հռոմ: Պլոտինոս եւս մեծ կարեւորութիւն տուած է աստուածիմաստութեան ու աստուածտեսութեան:

Հին Դարաշրջանի վերջաւորութեան (մ.թ.ա. 100 մինչեւ մ.թ. 400 թ.) սկըսած աստուածիմաստութեան գլխաւոր նպատակը եղած է աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան համադրութիւնը:

Աստուածաբանութեան (Theology) եւ փիլիսոփայութեան (Philosophy) համադրութիւնը, թէ՛ վերոյիշեալ ժամանակաշրջանին (Հին Դարաշրջան) եւ թէ անկէ ետք եւ մինչեւ այսօր, այնքան ալ հեշտ չէ եղած, ինչպէս հետագային պիտի տեսնենք:

## 2. ՄԻՋԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Եւրոպայի մէջ, Միջնադարեան փիլիսոփայութիւնը անքակտելիօրէն կապուած է Քրիստոնէութեան, այն աստիճան, որ ժամանակաշրջանը կոչուած է նաեւ «**Քրիստոնէայ Միջնադար**»:

Ինչպէս Հին Դարու վերջաւորութեան, Միջնադարու առաջին շրջանին եւս, կը շարունակուին աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան համադրութեան լուրջ աշխատանքները: Արդէն կազմուած էր «աստուածիմաստութիւն» (theosophía) եզրոյթը:

Այդ ժամանակաշրջանին, **եկեղեցւոյ հայրերը** կը քննարկէին դիտումի

<sup>5</sup> **Պիրոնականութիւն** (Pyrrhonism) կամ **Կասկածապաշտութիւն** (Scepticism, Սկեպտիկութիւն), փիլիսոփայական ուղղութիւն մըն է, որ կասկածելի ու տարակուսելի կը գտնէ իմացութեան բոլոր կարելիութիւնները եւ որուն համաձայն իրականութեան եւ ճշմարտութեան ճանաչողութիւնը հարցական, յարաբերական կամ ընդհանրապէս անկարելի է:

<sup>6</sup> **Փիլոն Ալեքսանդրացիի** մասին դեռ մանրամասնութեամբ պիտի անդրադառնանք:

<sup>7</sup> **Պլոտինոսի** մասին եւս դեռ պիտի անդրադառնանք:

<sup>8</sup> **Ալեքսանդրիոյ** (եգիպտական քաղաքին) եւ իր նշանաւոր Ալեքսանդրիոյ դպրոցին (Museion) մասին եւս դեռ պիտի անդրադառնանք:

կամ հայեցողութեան նիւթերը, որոնք առնչուած էին՝ աստուածիմաստութեան եւ աստուածտեսութեան: Անոնք ընդհանրապէս համաձայն էին, որ այս երկրային կեանքի ընթացքին, ասդենականի մէջ, մարդոց համար կատարեալ ու ամբողջական աստուածիմաստութիւնը կամ աստուածտեսութիւնը բոլորովին անհնար է, բայց կարելի է Աստուծոյ մասին, սահմանափակ ձեւով, հայեցողութեան մը հասնիլ:

Միջնադարու փիլիսոփաները, ընդհանրապէս աստուածաբաններ եղած են. իսկ ժամանակաշրջանը կարելի է բաժնել երկուքի.-

- **Հայրաբանական շրջան** (Patristics), ուր հանրաձանօթ ու ազդեցիկ աստուածաբան փիլիսոփայ մըն է՝ հռոմէացի **Աւրելիոս Օգոստինոսը** (Երանելին, Aurelius Augustinus, 354 - 430 թ.), ապա՝

- **Դպրական շրջան** (կամ **Սքոլաստիկ**, Scholastics), ուր հանրաձանօթ ու ազդեցիկ աստուածաբան փիլիսոփայ մըն է՝ իտալացի դոմինիկեան միաբան **Թոմաս Աքուինացին** (Thomas Aquinas, 1224 - 1274 թ.):

Այնուհետեւ քննարկութեան նիւթ դարձած է Միջնադարեան **Քրիստոնէական խորհրդապաշտութիւնը** (Christian Mysticism), որ աստուածիմաստութեան նիւթին հետ անմիջական առնչութիւն ունի: «Քրիստոնէական խորհրդապաշտութիւն» բառակապակցութիւնը մէկէ աւելի իմաստներով կը ներկայանայ.-

- **խորհրդապաշտութիւն** կը գտնենք, օրինակ՝ նոյնինքն աստուածաշունչ մատենին մէջ, իր հին եւ նոր կտակարաններով, իր ներքին թագնուած, ծածուկ կամ հոգեւոր իմաստով եւ իր աստուածայայտնութեամբ (Revelation):

- **խորհրդապաշտութիւն** է նաեւ Աստուծոյ հետ միանալու (լատ.՝ unio mystica) մարդոց առեղծուածային կիրարկումը, այլ խօսքով՝ Աստուծոյ անմիջական ներկայութեան գիտակցումը:

Այս ոլորտի նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբաններէն յիշարժան են.-

→ **Կեղծ-Դիոնիսիոս Արիոպագացի** (յուն.՝ Pseudo-Dionysios Ariopagites),

→ **Հուլիօ Սբ. Վիկտորցի** (Hugh of Saint Victor, 1096 - 1141 թ.),

→ **Ռիչարդ Սբ. Վիկտորցի** (Richard of Saint Victor, մօտ. 1110 - 1173 թ.),

→ **Մայստեր Էքհարտ** (Meister Eckhart, 1260 - 1328 թ.) եւ

→ **Նիկոլայոս Կուզանացի** (Nikolaus Cusanus, 1401 - 1464 թ.):

Միջնադարու **Քրիստոնէական խորհրդապաշտութեան** մէջ ներկայ է նաեւ իգական սերունդը, իր բազմաթիւ միանձնուհիներով, որոնցմէ յիշարժան են.-

→ **Հիլդեգարդ Բինգէնցի** (Hildegard of Bingen, 1098 - 1179 թ.),

→ **Մեշտիլդ Մագդեբուրգցի** (Mechtild of Magdeburg, 1207 - 1282 թ.),

→ **Գերտրուդ Հաքեբորնցի** (Gertrud of Hackeborn, 1232 - 1292 թ.),

→ **Մեշտիլդ Հաքեբորնցի** (Mechtild of Hackeborn, 1241 - 1299 թ.),

→ **Գերտրուդ Հելֆտացի** (Gertrud of Helfta, 1256 - 1302 թ.),

- **Կատարինա Սիենացի** (Catarina of Siena, 1347 - 1380 թ.),
- **Յուլիանա Նորվիչցի** (Juliana of Norwich, 1342 - 1413 թ.) եւ
- **Թերեզա Աւիլացի** (Theresa of Avila, 1515 - 1582 թ.):

Միջնադարուն յատկացուած բաժնի վերջաւորութեան, յիշարժան կը գըտնեմ Աստուածիմաստութիւնը Հայ Միջնադարուն առանձին նիւթը, ուր իրենց կարեւորութիւնը կը շեշտեն հայաշխարհի նշանաւոր **Գլաձորի ու Տաթեւի** համալսարանները, որոնք որպէս կրօնական հաստատութիւններ կը քաջալերէին նաեւ փիլիսոփայական ուսմունքը եւ որոշ չափով ազդուած էին եւրոպական դպրական փիլիսոփայութենէն (Scholastics): **Տաթեւի** համալսարանի նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբաններէն յիշարժան են.-

- **Յովհան Որոտնեցի** (1315 - 1386 թ.),
- **Գրիգոր Տաթեւացի** (1346 - 1409 թ.),
- **Առաքել Սիւնեցի** (1350 - 1425 թ.) եւ
- **Մատթէոս Զուղայեցի** (1350 - 1411 թ.):

### 3. ԱՆՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Անցման Դարաշրջանին, որ նաեւ կը կոչուի **Վերածնունդի** (Renaissance) շրջան, Միջնադարու մշակոյթը որոշ չափով կը յաղթահարուէր, տեղի կ'ունենար Հնադարեան մշակոյթի վերածնունդ մը, բայց նաեւ կը պատրաստուէր Նոր Դարաշրջանը:

Անցման Դարաշրջանին մէջ յիշատակութեան արժանի է փիլիսոփայական **Մարդկայնութեան** (Humanism) եւ **կրօնական Բարեկարգութեան** (Reformation) շատ կարեւոր շարժումները:

- **Մարդկայնութիւնը**, մարդակեդրոն եւ աշխարհիկ փիլիսոփայութեան նոր ուղղութիւն մըն էր, որ կը հակադրուէր միջնադարեան Դպրականութեան (Scholastics), եւ փիլիսոփայութիւնը կ'անջատուէր աստուածաբանութենէն: Մարդկայնութիւնը շարժումը կը սկսէր Իտալիայէն, ապա կը տարածուէր ամբողջ Եւրոպայի մէջ: Մարդկայնութեան հիմնական սկզբունքը յարգանքի արտայայտութիւնն է՝ մարդու իրաւունքներուն եւ արժանապատուութեան, ինչպէս նաեւ կարելիութիւնը մարդու համար կենցաղային նպաստաւոր ու մարդավայել պայմաններ ստեղծելու նկատմամբ: Մարդկայնութեան հիմնական սկզբունքներուն մաս կը կազմեն նաեւ՝ խիղճի ազատութիւնը, հանդուրժողութիւնը եւ բռնութեան ջնջումը:

- **Կրօնական Բարեկարգութեան** շարժումը կը սկսէր Գերմանիոյ մէջ, **Մ. Լութերի** (Martin Luther, 1483-1546 թ.) գլխաւորութեամբ, որ պատճառ պիտի դառնար եկեղեցւոյ բաժանումին: Արդարեւ **Կաթոլիկ Եկեղեցին** կը տկարանար եւ նոր կը կազմաւորուէր **Բողոքական Եկեղեցին**, որ պիտի ունենար իր բազմաթիւ ճիւղաւորումները:

Անցման Դարաշրջանին աստուածիմաստութեան ոլորտին մէջ, յիշարժան անուն մըն է գերման խորհրդապաշտ (միստիկ) փիլիսոփայ ու աստուածաբան **Յակոբ Բէօմը** (Jakob Böhme, 1575-1624 թ.), որու ստեղծագործութիւնները հիմնուած են տեսլական լուսաւորութեան ու յարակից խորհրդապաշտական առեղծուածային փորձառութիւններու վրայ:

Անցման Դարաշրջանին **Մարտին Լութերի** անմիջական ազդեցութեան տակ սկսած Բողոքականեան Աստուածիմաստութիւնը պիտի շարունակուէր նաեւ նոր Դարաշրջանին:

#### 4. ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Բողոքականեան Աստուածիմաստութեան ոլորտին մէջ, **Յակոբ Բէօմըն** ետք, յիշարժան անուններ դարձան.-

- **Ջոն Պորդէճ** (John Pordage, 1607-1681 թ.),
- **Ե. Գ. Գիշտէլ** (Johan Georg Gichtel, 1638-1710 թ.),
- **է. Սվեդենբորգ** (Emanuel Swedenborg, 1688-1772 թ.),
- **Ֆ. Ք. Էօտինգէր** (Friedrich Christoph Oetinger, 1702-1782 թ.),
- **Լ. Կ. դը Սեն-Մարտին** (Louis Claude de Saint-Martin, 1743-1803 թ.) եւ
- **Ուիլիամ Բլէյք** (William Blake, 1757-1827 թ.):

Վերոյիշեալ անուններուն մասին հարկ է հետագային աւելի մանրամասն անդրադառնալ եւ բացայայտել անոնց խորհրդապաշտութիւնը (Mysticism):

Ներքրիստոնէական ոլորտին մէջ, փիլիսոփայութեան եւ բանականութեան առնչութիւնը աստուածաբանութեան հետ յոյժ վիճելի էր եւ է: Մինչ **Կաթոլիկ Եկեղեցին** (Catholic Church), փիլիսոփայութիւնը եւ բանականութիւնը կ'արժեւորէ, որպէս ճանաչողական ուղիներ, որոնցմով կարելի է զԱստուած ճանչնալ ու աստուածայինը իմանալ, հետագային, **Բողոքական Եկեղեցին** (Protestant Church), աւելի կեդրոնանալով Սբ. Գիրքին վրայ եւ կարեւորելով Յովհաննու Յայտնութիւնը (Revelation), բոլորովին կը մերժէ փիլիսոփայական բանական ուղիով զԱստուած ճանաչումի կարելիութիւնը, սա նոյնիսկ համարելով դաւաճանութիւն՝ հաւատքի հանդէպ:

Մնալով ներքրիստոնէական ոլորտին մէջ, այս նիւթի քննարկման ատեն, երբեմն կը հանդիպինք նոյնքան վիճելի «**Քրիստոնէական փիլիսոփայութիւն**» (Christian Philosophy) բառակապակցութեան, որ այնքան ալ յստակ սահմանումներ ու բնորոշում չունի:

«Քրիստոնէական փիլիսոփայութիւն» բառակապակցութեամբ կարելի է ընդհանրապէս երկու ուղղութիւն հասկնալ, նախ՝

1) Միջնադարեան փիլիսոփայութիւնը, որ կը կոչուի նաեւ **Դպրական փիլիսոփայութիւն**<sup>9</sup> (Սքոլաստիկ փիլիսոփայութիւն, Scholastic philosophy), եւ

2) «Քրիստոնէական փիլիսոփայութիւն» բառակապակցութեամբ, կարելի է հասկնալ նաեւ շատ աւելի ուշ, Նոր Դարաշրջանի 19-րդ. դարուն յառաջացած աստուածաբանական **Նոր-Թոմականութիւն**<sup>10</sup> (Neo-Tomism) ուղղութիւնը:

Մինչեւ այսօր, «Քրիստոնէական փիլիսոփայութեան» նիւթին շուրջ արծարծուած վիճաբանութիւնը տակաւին չէ աւարտած եւ այդ առնչութեամբ վերջնական եզրակացութիւն մը կարելի չէ ներկայացնել: Ստորեւ կարգ մը դիրքորոշումներ, մանաւանդ Նոր Դարաշրջանի նշանաւոր փիլիսոփաներէն. –

- Գերման աշխարհահռչակ փիլիսոփայ եւ «Երեւութաբանութիւն» (Phenomenology) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ **Մարտին Հայտեգէր** (Martin Heidegger, 1889 – 1976 թ.), իր ամբողջական երկերու 9-րդ (էջ 45-78) եւ 40-րդ (էջ 9) հատորներուն մէջ, կ'անդրադառնայ վերոյիշեալ բառակապակցութեան եւ քրիստոնէական փիլիսոփայութիւնը, որպէս «թիւրիմացութիւն», կը նմանեցնէ «փայտեայ երկաթ»ին<sup>11</sup>:

- Զուիցերիացի նշանաւոր բողոքական-աստուածաբան **Կառլ Բարթ** (Karl Barth, 1886 – 1968 թ.), իր 13-հատորեան «**Եկեղեցական վարդապետութիւն**» (գերմ. բնագիր՝ "Kirchliche Dogmatik") կարեւոր նկատուող երկին մէջ (հատոր 2/1, էջ 93), «փիլիսոփայական աստուածաբանութիւնը» ("Philosophical Theology") կը նկատէ «դաւադրութիւն՝ ընդդէմ քրիստոնէական 'Աստուած' հասկացութեան» (գերմ. բնագիր՝ "Attentat auf den christlichen Gottesbegriff"):

- Գերման նշանաւոր կաթոլիկ-աստուածաբան **էդմունդ Արենս** (Edmund Arens, \*1953 թ.) իր 2001 թուականին հրատարակուած «**Փիլիսոփայութիւն եւ Աստուածաբանութիւն**» (գերմ. բնագիր՝ Philosophie und Theologie) մենագրութեան մէջ կը յիշատակէ փիլիսոփայութեան կարեւորութիւնը՝ աստուածաբանութիւնը սերտելու համար:

<sup>9</sup> Դպրական փիլիսոփայութիւն (Scholastic philosophy).- Միջնադարեան փիլիսոփայութիւն, որ սկսած է 9-րդ դարուն եւ երկարած մինչեւ Միջնադարու աւարտը (15-րդ դար): Կը յատկանշուի դպրոցներու եւ համալսարաններու հաստատումով եւ ուսման իւրայատուկ եղանակով: Կը յատկանշուի նաեւ փիլիսոփայ-աստուածաբաններու կողմէ մատուցուած Աստուծոյ գոյութեան ապացոյցներով եւ անոնց քննարկումներով: Այս ոլորտին մէջ կան բազմաթիւ նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբաններ:

<sup>10</sup> Նոր-Թոմականութիւն (Neo-Tomism).- Փիլիսոփայ-աստուածաբան **Թոմաս Աքուինացի** (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.) ուսմունքին վրայ հաստատուած 19-րդ դարու աստուածաբանական նոր ուղղութիւն, որ կը շեշտաւորէր փիլիսոփայական բնագանցութեան (Metaphysics, մետաֆիզիկա) ոլորտի գոյութեան եւ էութեան իմաստները: Թ. Աքուինացի կարեւոր երկերէն կը նկատուի "De ente et essentia" («Գոյութեան եւ էութեան մասին»), որ կազմուած է նախաբանէ մը եւ 6 գլուխներէ:

<sup>11</sup> Մարտին Հայտեգէրի յիշեալ խօսքի գերմաներէն բնագիրը.- "Eine christliche Philosophie ist ein hölzernes Eisen und ein Mißverständnis".

• Վերջապէս, նախ 2003 թուականին հրատարակուած ու վերահրատարակութիւններու արժանացած «Հանրագիտարան՝ աստուածաբանութեան փիլիսոփայական հիմնական հասկացութիւններու» (գերմ. բնագիրը՝ "Lexikon philosophischer Grundbegriffe der Theologie") հաստատփոր ու կարեւոր երկին մէջ՝ «Քրիստոնէական փիլիսոփայութիւն» բառակապակցութիւնը ա՛լ չի յիշատակուիր:

Ժամանակակից քննարկումներու ընթացքին կը բացայայտուի նաեւ, որ «Քրիստոնէական փիլիսոփայութիւն» (Christian Philosophy) բառակապակցութիւնը ունի կրկնակի դժուարութիւն.-

• **Նախ՝** ան շունի իւրայատուկ մեթոտաբանութիւն մը (Methodology), որով կարելի ըլլայ որպէս կայացած փիլիսոփայական ուղղութիւն ընդունիլ, ինչպէս է պարագան փիլիսոփայական ընդունուած այլ ուղղութիւններուն (օրինակ՝ երեւութաբանութիւն = phenomenology կամ անդրանցական = transcendental ու վերլուծական = analytic փիլիսոփայութիւն, եւայլն...):

• **Ապա՝** ան ընդհանրապէս շունի հաստատուած նիւթերու կանոնաբանութիւն (Canonology) մը, որով կարելի ըլլայ անոր բովանդակութեան սահմանները գծել:

Այսուհանդերձ, կարելի է «Քրիստոնէական փիլիսոփայութեան»<sup>12</sup> մը մասին խօսիլ, երբ մենք խուսափինք զայն յայտնութեան աստուածաբանութեան հետ առնչելէ: Այս ձեւով կարելի է նաեւ փիլիսոփայութեան ոլորտի մէջ քննարկել քրիստոնէական մտքի իմաստասիրութիւնը, նիւթեր, որոնք եթէ սկզբունքով քրիստոնէական ծագում ունին, սակայն փիլիսոփայութեան մէջ նաեւ երկար ատենէ ի վեր հետաքրքրութեան եւ քննարկութեան առարկայ դարձած են: Ասոր կողքին, աստուածաբանութիւնը գիտականօրէն սերտելու համար շատ կարեւոր միջոց մըն է փիլիսոփայութիւնը, որմէ կարելի չէ հրաժարիլ:

## 5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇՐՋԱՆ

Ժամանակակից շրջանի սկիզբները, 19-րդ դարէն սկսեալ եւ 20-րդ դարուն, «աստուածիմաստութիւն» եզրոյթը կարեւոր դեր ունէր **Յուդայականութեան** (Judaism) մէջ եւ կը հանդիսանար **Կաբալայի** (Kabbalah) հետազօտութեան կեդրոնական հասկացութիւններէն մէկը:

<sup>12</sup> **Հ. Շմիդինգեր** (Heinrich Schmidinger, \*1954 թ.)- Աւստրիացի կաթոլիկ աստուածաբանը իր 1995 թ. հրատարակած փիլիսոփայական ակնարկներուն մէջ կը յիշէ, որ նկատի առնելով Քրիստոնէութեան ազդեցութիւնը փիլիսոփայութեան ոլորտին վրայ, փաստօրէն, կարելի է «քրիստոնէական փիլիսոփայութեան» մը մասին խօսիլ, նուազագոյն՝ փոխաբերական իմաստով:

**Կաբալայի** աստուածիմաստական գաղտնուսոյց առաջին գաղափարները շատ հաւանաբար յառաջացած են Հին Կտակարանի (յուդայական Թանախի – Tanach) գրութեան շրջանին, սակայն որպէս համակարգ ձեւաւորուած է 10-րդ դարուն: Այնուհետեւ, պատմութեան ընթացքին ունեցած է լաւ ու վատ շրջաններ, ինչպէս նաեւ տարբեր հոսանքներ ու ուղղութիւններ: Իսկ ժամանակակից 19-րդ դարէն ի վեր շատ աւելի այժմէական դարձած է:

Թէեւ Կաբալա – աստուածիմաստութիւնը սկսած է հնադարեան շրջանին եւ գաղտնուսոյց ըլլալով հասած է միայն ընտրեալ սակաւաթիւ անձերու, սակայն ժամանակակից շրջանին, ան դադրած է գաղտնուսոյց համակարգ մը ըլլալէ եւ նոյնիսկ ճիգ թափուած է, որ ան հասանելի ըլլայ բոլորին համար: Ժամանակակից շրջանին մէջ նաեւ հետազոտութիւններ ու մեկնաբանութիւններ կատարուած են, աւելի լաւ բացատրելու համար Կաբալան, իր զանազան խորհրդապաշտական (միստիկ, Mystic) ու հոգեզմայլանքի (Ecstasy) տարբեր ընթացքներով: Այս բոլորը պատճառ դարձան, որ Կաբալայի քննարկումը տեղադրուի ժամանակակից շրջանին մէջ:

Ժամանակակից շրջանի սկիզբները, 1875 թուականին, ամերիկեան Նիւ-Եորքի մէջ, կը հիմնադրուէր «Աստուածիմաստութեան ընկերակցութիւնը» (Theosophical Society), գլխաւորաբար Հ. Պ. Բլավատսկայայի (Helena Petrovna Blavatskaya, 1831-1899 թ.) կողմէ:

Ընկերակցութեան հիմնադրութենէն ետք, «աստուածիմաստութիւն» հասկացութիւնը կը հեռանար իր արեւմտեան աստուածիմաստութեան ոլորտի արդէն ծանօթ իմաստէն եւ նոր բնորոշում ու նոր իմաստ կը ստանար, որու հիմքը կը կազմէր ժամանակակից **թաքնապաշտութիւնն** (Occultism) ու **ոգեպաշտութիւնը** (Spiritism), օգտագործելով արեւելեան (գլխաւորաբար՝ հնդկական – Հինդուականութիւն եւ Բուդդայականութիւն) կրօնափիլիսոփայութեան աղբիւրները:

Զանազանելու համար աստուածիմաստութեան նախկին եւ նոր իմաստները, այս վերջինը կը ներկայանայ, որպէս «արդիական աստուածիմաստութիւն»:

«Աստուածիմաստութեան ընկերակցութեան» մասին, որոշ մանրամասնութեամբ պիտի անդրադառնաք հետագային:

20-րդ դարու սկիզբները, Գերմանիոյ մէջ, «Աստուածիմաստութեան ընկերակցութեան» մասնաճիւղի ղեկավարներէն խորհրդապաշտ (միստիկ) փիլիսոփայ Ռ. Շտայնէր (Rudolf Steiner, 1861-1925 թ.), բազմաթիւ համախոհներու հետ հեռանալով յիշեալ ընկերակցութենէն կը հիմնէր իր «Մարդիմաստութեան ընկերակցութիւնը» (Anthroposophical Society), որ պիտի տարածուէր, նախ Եւրոպայի մէջ ապա այլուր:

Նաեւ «Մարդիմաստութեան ընկերակցութեան» մասին, որոշ մանրամասնութեամբ պիտի անդրադառնաք հետագային:

Աստուածիմաստութեան ոլորտի քննարկման ընթացքին կը հանդիպինք որոշ եւ յատուկ նիւթերու, որոնք աստուածիմաստութեան գաղափարին հետ անմիջականօրէն առնչուած են եւ կը սատարեն նիւթի ընկալման: Այդ նիւթերը հաւաքուած են առանձին մասի մը մէջ, որ կը կրէ **ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ** անունը: Այդ նիւթերէն շատերը քննարկուած են աւելի մանրամասնութեամբ, անոնցմէ յիշարժան են.–

## 1. Անաստուածութիւնը (Atheism)

**Անաստուածութիւն**<sup>13</sup> կը նշանակէ, Աստուծոյ կամ աստուածներու հանդէպ հաւատքի բացակայութիւնը կամ ընդհանրապէս անոնց մերժումը (նաեւ՝ աստուածամերժութիւն): Անաստուածութիւնը, աւելի լայն իմաստով, կ'ընդգրկէ նաեւ **Անճանաչականութիւնը** (Agnosticism), որ եթէ մէկ կողմէն Աստուծոյ կամ աստուածներու գոյութիւնը, որպէս անհասկնալի կը ներկայացնէ, բայց միւս կողմէն նաեւ կը կը հաստատէ՝ մարդկային գիտութեան (կամ ճանաչութեան) սահմանափակ ըլլալը:

Ի հակադրութիւն Անաստուածութեան, առկայ են հաւատքի այլ ուղղութիւններ եւս.–

→ **Աստուածականութիւն** (Theism, յուն.՝ theós = աստուած եզրոյթէն), որ ընդհանուր ու վերին հասկացութիւն է եւ կը նշանակէ հաւատք՝ Աստուծոյ հանդէպ, որ ստեղծած է աշխարհը եւ միջամտելով՝ կը պահպանէ զայն,

→ **Աստուածադաւանութիւն** (Deism, լատ.՝ deus = աստուած եզրոյթէն), ուր կ'ընդունուի ստեղծագործ-արարիչ Աստուծոյ մը գոյութիւնը, սակայն աստուածաբանական վկայութիւնները օրինականացնելու համար կ'օգտագործէ բանականութիւնը եւ ոչ թէ յայտնութիւնը: Այստեղ Աստուած կը ստեղծէ աշխարհը, ապա չի միջամտեր անոր ընթացքին:

→ **Միաստուածութիւն** (Monotheism), որ մէկ աստուծոյ նկատմամբ հաւատքն է, ինչպէս օրինակ՝ Քրիստոնէութեան պարագային եւ

→ **Բազմաստուածութիւն** (Polytheism), որ բազմաթիւ աստուածներու նկատմամբ հաւատքն է, ինչպէս օրինակ հեթանոսութեան պարագային:

→ **Համաստուածութիւն** (Panthéism), կրօնափիլիսոփայական ուսմունքի պարագային գոյութեան ամբողջութիւնը կը գրաւէ աստուածութեան կամ անձնականացուած Աստուծոյ մը տեղը. այստեղ տիեզերքը, աշխարհը կամ բնութիւնը կը հաւասարեցուի «Աստուած» հասկացութեան հետ: Նկատի ունենալով գոյութեան ամբողջութեան ինքնին աստուածային կատարելութիւնը, հասկնալի է, որ այստեղ կարիքը չի տեսնուիր ստեղծագործ-արարիչ Աստուծոյ մը:

<sup>13</sup> **Անաստուածութիւն** (նաեւ՝ Աստուածամերժութիւն).- յուն.՝ atheismós, սնգլ.՝ Atheism, գերմ.՝ Atheismus ...



## 2. Ժխտական Աստուածաբանութիւնը (Negative Theology)

Ժխտական Աստուածաբանութիւնը<sup>14</sup> Պլատոնականութենէն ազդուած ու անկէ յառաջացած մեթոտ կամ հայեցակարգ մըն է, ուր աստուածութեան մը կամ Աստուծոյ մասին մտածելու ու արտայայտուելու պարագային, որոշ սահմանափակումներ կը դրուին եւ բոլոր դրական (Positive) մտածումներն ու յայտարարութիւնները կը քննադատուին ու կը մերժուին եւ միայն ժխտականները (Negative), որպէս ճշմարտութիւններ կ'ընդունուին: Այսուհանդերձ, Քրիստոնէութեան պարագային անսկիզբ ու անվախճան Աստուածը, մահկանացու մարդոց համար, կը մնայ անճանաչելի ու անհասանելի:

## 3. Աստուածարարացումը (Theodicy)

Աստուածարարացում<sup>15</sup> եզրոյթը բառացի թարգմանութիւնն է յունարէն theodikía եզրոյթին (theos = աստուած եւ dikê = արդարադատութիւն): Աստուածարարացումը կը փորձէ պատասխանել հարցադրումի մը, թէ ինչպէ՞ս Աստուած կարող է գիտակցաբար թոյլատրել, չխափանել, չկանխել կամ չվերացնել ընդհանրապէս չարն ու յատկապէս մարդոց տառապանքը, նկատի ունենալով որ ան ամենագէտ, ամենակարող ու ամենաբարի է:

## 4. Եսը, ուրիշը եւ անոնց հանդիպումը (The Ego, The Other and their meeting)

Եթէ մէկ կողմէն նկատի ունենանք փիլիսոփայական-հոգեբանական մարդը կամ անհատը (լատ.՝ individuum), որպէս «ես» (լատ.՝ ego), իսկ միւս կողմէն «ես»էն դուրս գտնուող մարդը, որպէս «ուրիշը» (լատ.՝ alter) կամ նոյնինքն Աստուած, որ նոյնպէս «ես»էն դուրս գտնուող «ուրիշ» մը կը նկատուի ու պահ մը փորձենք քննարկել յիշեալ երկու կողմերու փոխ-յարաբերութիւնները կամ անոնց մերձեցումն ու հանդիպումը, ի՞նչ արդիւնքի կրնանք հասնիլ:

ԴՈՒԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷԶԵԱՆԵԱՆ

Գերմանիա

(Շար. 1)

<sup>14</sup> Ժխտական Աստուածաբանութիւն.- յուն.՝ theologia apophatikê, լատ.՝ theologia negativa, անգլ.՝ Negative Theology, գերմ.՝ Negative Theologie ...

<sup>15</sup> Աստուածարարացում.- յուն.՝ theodikía, անգլ.՝ Theodicy, գերմ.՝ Theodizee, ֆրնս.՝ Théodicée ...

ՍՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ
--------------

## 21-ՐԴ ԴԱՐՈՒ ՍՓԻԻՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԻՐ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐՈՎ

Հազարամեակներու թաւալումին ընթացքին, Համաշխարհային հասարակութեան զարգացումը պայմանաւորուած է գիտելիքներու եւ տեղեկատուութեան փոխանակման եւ ընկալման հիմնական սկզբունքին վրայ: Տեղեկատուութեան մշակումն ու փոխանցման ձեւաչափը նաեւ պայմանաւորուած է արժէքային եւ բարոյական հիմնարար շափանիշներով: Մամուլի եւ թերթի առաքելութիւնը եղած է տարածել հաւաստի, շափակշոռուած եւ իրաւացի լրատուութիւն: Դարերու ընթացքին, մինչեւ 20-րդ դարու աւարտ, տպագիր մամուլը կատարած է այդ առաքելութիւնը. այսինքն, 1440 թուականի գերմանացի Կիլթէնպէրկի տպագրական մեքենայի գիւտէն ետք, մտաւորապէս հինգ հարիւրամեակ մարդկութեան տեղեկատուական հիմնասիւնը եղած է տպագիր մամուլը:

20-րդ դարուն, համակարգիչներու եւ համացանցերու տեղեկատուական յեղափոխութենէն ետք, համաշխարհային քաղաքակրթութեան զարգացման գործընթացը հունաւորած է նոր ուղի՝ տեղեկատուական նոր հասարակութիւն: Պետութեան, հասարակութեան եւ մարդ անհատի հոգեւոր, մտաւոր եւ կրթական ոլորտներու արդիւնաւէտ զարգացումը կախեալ է տեղեկատուական դաշտի որակական համակարգերէն, որոնք կը կերտեն հասարակութեան տարաբնոյթ զանգուածներու վարքն ու հոգեբանութիւնը: Մամուլի միջոցով կարծիքներու եւ տեսակէտերու հունաւորումներն ու կողմնորոշումները հասարակութեան խաւերուն վրայ յստակ ներազդեցութեան հիմնական լծակներ կը հանդիսանան:

Ժամանակակից քաղաքակրթութիւնը գիտարուեստի տեղեկատուական նորարութիւններու միջոցով ձեւաւորած է այնպիսի համակարգ, որ կարողականութիւնն ու հասանելիութիւնը ունի ներազդելու անհատի եւ հանրային կարծիքին վրայ՝ օգտագործելով կամ շահագործելով հաղորդակցութեան եւ տեղեկատուական ներազդեցութիւնը:

21-րդ դարուն, լսատեսողական հաղորդակցութեան գիտարուեստներու (Communication Technology) կողքին, տեղեկատուական աշխարհի միահեծան տէրն է համացանցը (Internet), որ ամէնօրեայ տեղեկութիւններու շրջանառութիւնը՝ թուայնացումը տարբերութեամբ համակարգիչի պաստառին վրայ կը տեղադրէ: Համացանցի յեղափոխութենէն ետք լրագիրներու եւ թերթերու դարաշրջանը փակուած կարելի է նկատել:

### **ՍՓԻԻՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ. ԹԻԻԵՐ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հայ լրագրութեան այսօրուան պարզած իրավիճակին եթէ ուզենք ծանօթանալ, հարկ է վկայակոչել Արտաշէս Տէր Խաչատուրեանի 1988-ին հրատարակած՝ «Հայ մամուլի ցուցակ»ի տուեալները, ուր ըստ հեղինակին կատարած հաշուառումներուն, Սփիւռքի մէջ կը հրատարակուէին տպագիր 15 օրաթերթ, 2 եռօրեայ, 29 շաբաթաթերթ: Մօտաւորապէս երեք տասնամեակ ետք, այսօր, Սփիւռքի մէջ կը հրատարակուին տպագիր 9 օրաթերթ, 2 եռօրեայ եւ 8 շաբաթաթերթ: Ուրեմն, 35 տարուան ընթացքին, Սփիւռքի տպագիր Հայ մամուլի թիւը նուազած է մօտաւորապէս 60% համեմատութեամբ:

Զուգահեռաբար պէտք է նկատի ունենալ նաեւ տոկոսային համեմատութիւնները, թէ այսօրուան դրութեամբ, ո՛չ միայն Սփիւռքի, այլեւ ընդհանրապէս Հայ հասարակութեան քանի՞ տոկոսը բացառապէս կ'օգտագործէ համացանցը, որպէս տեղեկատուական լսարան: Համացանցի օգտագործման վիճակագրութիւններ կատարող Internet World Stats կայքէջի 2012 թուականի տուեալներով՝ Հայաստանի մէջ համացանցէն կ'օգտուէին 1 միլիոն 800 հազար քաղաքացի, որ կը կազմէ բնակչութեան 60,6 տոկոսը: Համեմատութեան համար նշենք նաեւ, որ 2000 թուականին, Հայաստանի մէջ համացանցը օգտագործողներու թիւը կը կազմէր 30 հազար:

Դարձեալ Internet World Stats կայքէջի տուեալներով, 2021 թուականի Յունիսի դրութեամբ, Հայաստանի մէջ համացանցի օգտատէրերու թիւն է՝ 2 միլիոն 125 հազար, որ կը կազմէ բնակչութեան 71,1 տոկոսը: Հայաստանի վիճակագրական թիւերը կը մէջբերենք, որովհետեւ Սփիւռքի պարագային նմանօրինակ վիճակագրութիւն ցարդ չէ կատարուած եւ մեծ է հաւանականութիւնը, որ արտասահմանի տարբեր երկիրներու հայկական համայնքներու պարագային՝ մօտաւոր տոկոսային համեմատութիւններ ի զօրու ըլլան:

Վերոնշեալ թիւերն ու համեմատութիւնները ի մի բերելով, յստակ կը դառնայ, որ անցնող երկու տասնամեակներուն, 21-րդ դարու նախաշէմին, Հայ հասարակութիւնը տեղեկատուահաղորդակցական հսկայական տեղաշարժի ենթարկուած է եւ անցումային հանգրուանով գերակշռօրէն թեքած է դէպի գիտարուեստի տեղեկատուական բնագաւառ:

Հիմնուելով վերել նշուած թիւերուն վրայ, յստակ է, որ այսօրուան տեղեկատուադաշտը առցանց զանգուածային լրատուամիջոցներն ու ընկերային ցանցերու (Social Media) տարբեր հարթակներն են: Facebook-ի, Twitter-ի, Instagram-ի նման հարթակներու վրայ թափ առած է քաղաքացիական լրագրութիւնը (Citizen Journalism): Մամուլոյ ոլորտին մէջ, ցանցային տեղեկատուութեան ընդլայնման զուգահեռ, թափ առաւ քաղաքացիական լրագրութիւնը, ուր որեւէ մէկ համաշխարհաքաղաքացի կրնայ ստեղծել լրատուական հարթակ եւ սփռել տեղեկատուութիւն՝ ի տարբերութիւն տասնամեակներ առաջ գոյութիւն ունեցող աւանդական կամ տպագիր մամուլին, որուն բոլոր լրագրողներն ու խմբագիրները պէտք էր ըլլային վկայեալ կամ առնուազն արհեստավարժ լրագրողներ: Դրական եւ իր բացասական կողմերով հանդերձ, քաղաքացիական լրագրութիւնը այսօրուան մեր իրականութեան անբաժան մէկ մասնիկն է, ուր որեւէ մէկ անհատ կամ խմբաւորում կարելիութիւնը ունի տեղեկատուութիւն կամ ապատեղեկատուութիւն տարածելու, ըստ անհատական կամ խմբային շահագրգռուածութեան եւ հայեցողութեան:

Սփիւռքի մամուլը կը գտնուի նոյն կացութեան առջեւ: Աւանդական մամուլի կողքին, այսօր համացանցի վրայ կը գործէ քաղաքացիական լրագրողներու ցանց, Հայերէնի կողքին ունենալով Ֆրանսերէն, Անգլերէն, Սպաներէն կամ Ռուսերէն լեզուներով ստուարաթիւ հարթակներու ցանց, ուր այլակարծութեան ու հակոտնեայ գաղափարախօսութեան բազմաշերտուածութեան մէջ աւանդական մամուլին խօսափողը օրէ-օր աւելի կը նուազի, հակառակ որ այսօրուան դրութեամբ, սփիւռքահայ գործող կազմակերպութիւններու տպագիր կամ առցանց պաշտօնաթերթերն ու օրգանները տակաւին ունին բիրաւոր հետեւորդներ, ընթերցողներ եւ կամ բաժանորդներ:

## ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Տեղեկատուական հասարակութիւնը (Information Society) այն համաշխարհաքաղաքացիական հասարակութիւնն է, որ կը բնութագրուի տեղեկատուութեան սրընթաց աճով եւ օգտագործմամբ, տեղեկատուութեան բազմաբնոյթ աղբիւրներու համատարած շահագործմամբ: «Տեղեկատուական հասարակութիւն» եզրը առաջին օգտագործողներէն մէկը հանդիսացած է ճափոնցի ընկերաբան՝ Փրոֆ. Եուճիրօ Հայաշին (Yujiro Hayashi), որ 1969-ին Ճափոնի կառավարութեան կողմէ տեղեկատուութեան գիտարուեստի մասին «The Information Society: From hard to soft society» զեկուցագրին գլխաւոր խորհրդականը հանդիսացած էր:

Մէկ խօսքով՝ համաշխարհային տնտեսութեան, կրթութեան, մշակոյթի եւ մարդկութեան կենցաղին մէջ տեղեկատուական եւ հաղորդակցական գիտարուեստի բազմաբովանդակ կիրառումով տեղեկատուութեան հասանելիութիւնը կը բազմապատկուի համաշխարհային հասարակութեան մօտ եւ կը ստեղծուի թուայնացած քաղաքացիներու (Digital Citizens) նոր հասարակարգ մը, որոնք ամէնօրեայ դրութեամբ, ամէն պահ, ամէն ակնթարթ հաղորդակից են օրուան տեղեկատուական շարժումին: Նման համաշխարհային նորարարական գիտարուեստի մը դէմ՝ սփիւռքահայ տպագիր ավանդական մամուլին համար անհամատեղելի է ընդդիմակցումը եւ այլ ելք չունի, բացի ընդգրկուելու եւ համարկուելու այդ համաշխարհային շարժումին:

Միաժամանակ, 21-րդ դարու հաղորդակցական տարաբնոյթ սարքերը, համակարգիչներէն մինչեւ բջիջային հեռախօսները՝ 21-րդ դարու տեղեկատուական հասարակութեան նոր սերունդին համար անարժէք կը դարձնեն տպագիր մամուլը:

## ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐՆԵՐ

2021 թուականի Հոկտեմբեր 28-ին, Պոլսոյ «Ժամանակ» Օրաթերթը ահագանգ կը հնչեցնէր՝ «Օրաթերթը Հիմնադրութեան 114-րդ Տարին Կը Թեւակոխէ Անդունդի Եզրին» խորագրով խմբագրականով մը: Օրաթերթի տնտեսական անձուկ վիճակը պարզող խմբագրականը կը շեշտէ, որ «Ժամանակ»ը կ'ապրի տազնապալի օրեր, ընդհուպ մինչեւ գործունէութեան դադրեցում՝ չըսելու համար Օրաթերթի ընդմիշտ փակում:

Իրօք, պատմութեան այս ժամանակահատուածին, նման տազնապալի իրավիճակով են համակուած յատկապէս Սփիւռքի տպագիր լրատուամիջոցները, որոնցմէ շատեր, օրհասական պայքար մղելով է, որ դեռ եւս կը պահպանեն իրենց գոյութիւնը: 114 տարի շարունակ բազում դժուարութիւններ դիմակայած «Ժամանակ»ի ճակատագիրը անորոշ է, մանաւանդ եթէ օրաթերթին ձեռք չերկարէ կամ չսատարէ տեղույն համայնքը:

Ճակատագիրը անորոշ է նաեւ տակաւին գոյատեւող սփիւռքահայ մնացեալ օրաթերթերուն, եռօրեաներուն, շաբաթաթերթերուն կամ ամսաթերթերուն:

Սփիւռքահայ ավանդական տպագիր մամուլը կը գտնուի տազնապալի կացութեան մէջ: Անբաւարար բաժանորդներու թիւը, տնտեսական եւ նիւթական անձուկ վիճակը, նորահաս սերունդի ներգրաւումը եւ հաղորդակցութեան գիտարուեստի արագընթաց զարգացման հետ քայլ պահելու հարցը՝ այդ տազնապալի գլխաւոր գործօններն են:

Հայ մշակույթի եւ Հայեցի Դաստիարակութեան մարտկոցներէն սփիւռքահայ տպագիր մամուլի բարեյուսոյ հրուանդանը դժբախտաբար անտեսանելի է: Տպագիր մամուլի շիջումով որոշակի ընկրկման կ'ենթարկուի նաեւ արեւմտահայերէնը, որ արդէն իսկ Եունեսքոյի կողմէ կորստեան մատնուելու վտանգի ենթակայ լեզուներու ցանկին մէջ ընդգրկուած է:

Նման կացութեան դէմ յանդիման, անհրաժեշտ է համասփիւռքեան մամուլոյ խորհրդաժողովի մը ընդմէջէն քննարկման բովէ անցնել վերեւ նշուած մարտահրաւէրներն ու դժուարութիւնները: Միւս կողմէն, գոյատեւելու եւ լրատուական աշխարհին մէջ արդիւնաւէտ գործելու համար, իւրաքանչիւր սփիւռքահայ պարտաւոր է նպատակաուղղուած ձեւով քայլ պահել եւ հաղորդակից մնալ գիտարուեստի նորարութեանց եւ տեղեկատուական հասարակութեան շարժման ու հոլովոյթին հետ:

ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ  
«Հորիզոն» շաբաթաթերթի  
Գլխաւոր խմբագիր  
(Գանատա)



**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ**



**ԿԻՊՐԻԱՆՈՍ**


Հաւատացեալներու սրտամօտիկ «Կիպրիանոս» աղօթագիրքը չորրորդ հրատարակութեամբ լոյս տեսաւ Կաթողիկոսարանի տպարանէն:

Աղօթագիրքը կը վերահրատարակուի ազնիւ մեկենասութեամբ Չելլիքեան ընտանիքին՝ ի յիշատակ Վահան եւ Յասմիկ Չելլիքեաններուն:

«Կիպրիանոս» կը պարունակէ զանազան աղօթքներ, «Հաւատով հոստովանիմ»ը, Աւետարանէն հատուածներ եւ Քրիստոսի հրաշագործութիւններէն դրուագներ:

Գրպանի չափով տպուած սոյն հրատարակութիւնը կը գտնէք Կաթողիկոսարանի գրատունը եւ առցանց՝ [www.ciliciabookstore.com](http://www.ciliciabookstore.com) հասցէով:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ  
ST. NERSES THE GRACIOUS AND CHURCH UNITY  
(Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ)**



Ուրախութեամբ կը ծանուցենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին *St. Nerses The Gracious and Church Unity* (Ս. Ներսէս Շնորհալի եւ Եկեղեցւոյ Միութիւնը) խորագիրը կրող աշխատասիրութեան վերահրատարակութիւնը կատարուեցաւ Անթիլիասի Մայրավանքի Տպարանէն:

Արդարեւ, 1974 թուականին, սոյն աշխատասիրութիւնը Վեհափառ Հայրապետը, երբ տակաւին Վարդապետ էր, իբրեւ Ծայրագոյն Մագիստրոսի աւարտաճառ ներկայացուցած էր Պէչրութի Ամերիկեան Համալսարանին եւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Գոլէճին:

Գիրքին առաջին տպագրութիւնը հրատարակուած է 2010 թուականին: Նկատի ունենալով, որ գիրքը սպառած է եւ ներկայ տարին Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850 ամեակն է, Նորին Սրբութեան արտօնութեամբ, պատմական ու աստուածաբանական իւրայատուկ կարեւորութիւն ունեցող այս գիրքին երկրորդ տպագրութիւնը ահաւասիկ լոյս կը կատարուի:

Աւելի քան 250 էջերէ բաղկացած գիրքը կը բաղկանայ երկու գլխաւոր բաժիններէ: Առաջին բաժինին մէջ ժԲ. դարու Կիլիկեան աշխարհին կրօնական ու պատմական խորքը ներկայացնելէ ետք, հեղինակը լայնօրէն կ'անդրադառնայ Շնորհալիի միջ-եկեղեցական յարաբերութեան՝ Յոյն Եկեղեցւոյ Պատրիարքին եւ Բիւզանդիոնի Կայսրին հետ եւ ապա՝ անոր աստուածաբանական, դաւանաբանական ու միջ-եկեղեցական տեսակէտներուն, ընդգծելով Ս. Ներսէս Շնորհալիի ամուր կեցուածքը Հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան նկատմամբ: Իսկ երկրորդ բաժինը կը բաղկանայ յիշեալ միջ-եկեղեցական յարաբերութեան առնչուած դաւանաբանական գիրերէ, նամակներէ ու փաստաթուղթերէ, որոնք Գրաբար լեզուէ թարգմանուած են Անգլերէնի հեղինակին կողմէ: Գիրքը ունի նաեւ վերջաբան մը, ուր Վեհափառ Հայրապետը, Ս. Ներսէս Շնորհալիի միջ-եկեղեցական ըմբռնումներուն լոյսին տակ, կը շեշտէ Հայ Եկեղեցւոյ մօտեցումը կարգ մը դաւանաբանական բնոյթ ունեցող խընդիրներու գծով:

*St. Nerses The Gracious and Church Unity* խորագրեալ այս գիրքը կարելի է գտնել, այցելելով Կաթողիկոսարանի գրախանութիւնը կամ կայքէջը՝

[www.ciliciabookstore.com](http://www.ciliciabookstore.com)



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱԲՈՐԷ ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒԵԼՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Երեքշաբթի, 8 Օգոստոս 2023-ին, Արցախի խորհրդարանի նորընտիր Նախագահ՝ Դալիթ Իշխանեանին ուղղած իր նամակին մեջ Արամ Ա. Կաթողիկոս ջերմորեն ողջունելով անոր ընտրությունը, կ'ըսե հետևեալը. «Արցախի դիմագրաւած ներկայ վճռական հանգրուանին, Ձեր պատասխանատուութիւնը որպէս խորհրդարանի Նախագահ, Ձեզ կը դնէ լուրջ մարտահրաւերներու դիմաց: Ձեր առջեւ կը բացուին պատասխանատուութեան նոր եւ այլ դժուարին հորիզոններ: Մօտէն ճանչցած ըլլալով Ձեզ, վստահ ենք, որ յանձնառութեան ամուր որդիով ու խոհեմութեամբ պիտի դիմագրաւէք Արցախի անկախութեան սպառնացող բոլոր վտանգները»:



Ապա Նորին Սրբութիւնը կ'աւելցնէ. «Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անձնապէս, կը վստահեցնենք Ձեզ, որ մեր Ս. Աթոռը պիտի շարունակէ պօրապիզ կանգնիլ Արցախի պետութեան ամրացման ու անոր քաջարի ժողովուրդին, ի խնդիր Արցախի անվտանգութեան ու անկախութեան»:

**ՀԱՅ ԴԱՏ****Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՊԱՏԳԱՄԸ ՅՂԵՑ ԱՐՑԱՆԻ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱԻԱՔՆԵՐՈՒՆ****«ԱՐՑԱՆԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ  
ՇՆՈ՛ՒՆԴՆ Է ԱՐՑԱՆԻՆ»****Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Բարբարոս Ազրպեյճանի կողմէ շուրջ ութ ամիսներէ ի վեր շրջափակման մէջ գտնուող Արցախը կը դիմագրաւէ սննդեղէնի, դեղորայքի եւ մարդկային տարրական պահանջներու լուրջ դժուարութիւններ: Սփիւռքի մեր հայորդիները, կազմակերպութիւնները եւ եկեղեցին լծուած են Արցախահայութեան ինքնիշխանութիւնն ու ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու ու պահպանելու աշխատանքներուն:

Արդարեւ, Երեքշաբթի, 25 Յուլիս 2023-ի երեկոյեան, Երեւանի Ազատութեան եւ Արցախի Մայրաքաղաք՝ Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակներուն վրայ տեղի ունեցան ժողովրդական հանրահաւաքներ՝ Արցախի ապաշրջափակման եւ անոր ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը չարգելու պահանջով:

Այս հանրահաւաքներուն իր Հայրապետական զօրակցական պատգամը յղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը: Ան իր պատգամը սկսաւ յատկապէս Արցախը եւ ընդհանրապէս մեր ժողովուրդը վստահեցնելով, թէ մենք, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, մեր Միաբանութեամբ, աշխարհասփիւռ Թեմերով, կառոյցներով ու կազմակերպութիւններով, այլ խօսքով՝ ողջ Սփիւռքը Արցախահայութեան հետ է: Արցախը այսօր կ'ապրի մեր ժամանակակից պատմութեան ամէնէն ճակատագրական օրերը: Այս կացութեան դիմաց մենք պէտք է մեր հաւատքն ու կամքը աւելի ամրապնդենք եւ Արցախի ապագային նկատմամբ մեր տեսլականը պահենք միշտ պայծառ, ըսաւ Հայոց Հայրապետը:

Շարունակելով իր խօսքը՝ Նորին Ս. Օծութիւնը շեշտեց, թէ անցեալին Արցախը մե՛րը եղած է. այսօր Արցախը մե՛րն է եւ վստահեցուց, որ Արցախը մի՛շտ պիտի մնայ մերը, որովհետեւ մեր ողջ պատմութեան ընթացքին, Արցախահայութիւնը եղած է Արցախի մէջ եւ իր քրտինքը միախառնած է Արցախի հողին:

Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ շեշտեց հետեւեալ երեք կէտերը.-

ա) Պատմութիւնը կը վկայէ, որ Արցախը միշտ եղած է ինքնավար: Արցախի մեր ժողովուրդը եկուոր չէ՛: Ան ծնունդն է Արցախին: Պատմութեան ընթացքին Արցախը երբեք ենթակայ չէ՛ եղած այլ իշխանութիւններու, այլ եղած է ինքնավար. եւ չմոռանա՛մք, երբ Սովետական Միութիւնը վերջ գտաւ, Արցախը պահեց ու այսօր եւս պէտք է պահէ իր ինքնորոշման իրաւունքը:

բ) Միջազգային օրէնքներուն համաձայն, ժողովուրդն է իր ապագան նշողը: Ժողովուրդի մը ինքնիշխանութիւնը, ինքնավարութիւնը միջազգային օրէնքի եւ մարդկային իրաւունքներու ամէնէն հիմնական սկզբունքներէն մէկն է:

գ) Արցախը չի կրնար շրջանի համապարփակ, այսպէս կոչուած, խաղաղութեան գոհը դառնալ: Արցախի ինքնավարութեան իրաւունքը չի կրնար միջազգային դիւանագիտական սեղաններու շուրջ քննարկումի նիւթ դառնալ: Արցախը եղած է ինքնավար. այսօր է՛ ինքնավար եւ միշտ պիտի մնայ այդպիսին, որովհետեւ ա՛յս է Արցախի մեր ժողովուրդին կամքը եւ իրաւունքը: Ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունքը, ազատութիւնը Աստուածատուր է եւ ո՛չ ոք իրաւունքը ունի գայն իլելու ժողովուրդի մը ձեռքէն:

Իր պատգամի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս արթնութեան ու զգաստութեան կոչ ուղղեց Արցախահայութեան եւ ընդհանրապէս Հայութեան. «Զարթի՛ր, Արցախի ժողովուրդ, մի՛ վիստիք, մի՛ նահանջեր, մեր ազգը ամբողջ քեզի հետ է՝ Հայաստան եւ Սփիւռք, որովհետեւ Արցախը մե՛նք ենք, բոլորս: Արցախին իրաւունքը ողջ Հայութեան իրաւունքն է եւ անոր պաշտպանութիւնը իւրաքանչիւր Հայու պարտաւորութիւնն է:

«Զարթի՛ր, Արցախի ժողովուրդ, եղիւր ամուր, եղիւր միշտ հօր, պատնէշի վրայ եւ եղիւր թու իրաւունքներուդ, մեր ազգի իրաւունքներուն հօր պահապանն ու պաշտպանը»:

Հայոց Հայրապետը իր պատգամը եզրափակեց աղօթք բարձրացնելով Ամենակալին, որ Արցախը իր երկնային հօրութեամբ ու օրհնութեամբ միշտ պահէ կայուն ու անսասան:



**ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՄԻԱՅԵԱԼ ԿՈՉ Կ՛ՈՒՂՂԵՆ ԱԶՐՊԵՅՃԱՆԻՆ՝  
ԱՆՄԻՋԱՊԵՍ ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՑԸ  
ՈՒ ԱՐՑԱՆԻ ՇՐՋԱՓՈՎԱԿԱՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ Եւրոպայի Եկեղեցիներու Խորհուրդի Ընդհ. Քարտուղարները, յիշեալ խորհուրդներու վերին մարմիններուն անունով, միասնական կոչ ուղղեցին՝ կարելի փութով վերջ տալու Ազրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման եւ անմիջապէս վերաբանալու Բերձորի (Լաչին) միջանցքը:

Արդարեւ, Եւրոպական Միութեան արտաքին յարաբերութեանց եւ ապահովութեան խորհուրդի Պետ՝ Ժոզէփ Պորէլլ Ֆոնթէլէսի ուղղած իրենց նամակին մէջ, վերոյիշեալ երկու եկեղեցական խորհուրդներու ընդհանուր քարտուղարները անդրադառնալով Արցախի հայութեան դիմագրաւած ներկայ ահաւոր պայմաններուն՝ կը շեշտեն, թէ Ազրպէյճան անսալով միջազգային արդարութեան դատարանին եւ միջազգային կառոյցներու որոշումներուն, անհրաժեշտ քայլերու դիմէ, նախ Արցախի շրջափակումը դադրեցնելու եւ ապա քաղաքական բանակցութիւններու ճամբով բարւոք լուծում մը տալու Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ գոյութիւն ունեցող առկա հարցերուն, ինչպէս նաեւ յարգելու Արցախի հայութեան անկախութեան եւ մարդկային իրաւունքները:

Այս առիթով, Արամ Ա. Կաթողիկոս կապ հաստատեց Ե.Հ.Խ.ի եւ Մ.Ա.Ե.Խ.ի պատասխանատու մարմիններուն հետ, որպէսզի միջազգային համայնքին անգամ մը եւս ուշադրութեան յանձնեն Արցախը Հայաստանին կապող Բերձորի (Լաչին) միակ միջանցքը անմիջապէս վերաբանալու հրամայականը եւ դատապարտեն Ազրպէյճանի կողմէ կատարուող այս անմարդկային արարքը:

Արդարեւ, Ե.Հ.Խ.ը կոչով մը հանդէս եկաւ, ուր ան կը դատապարտէ Ազրպէյճանի կողմէ նախաձեռնուած Բերձորի միջանցքին արգելափակումը: Խորհուրդը իր կոչին մէջ կ'ըսէ. «Նկատի առնելով Լաչինի միջանցքին փակման պատճառով Արցախի մէջ յառաջացած մարդասիրական տագնապը, Ե.Հ.Խ.ը կը վերահաստատէ իր կեցուածքը եւ կոչ կ'ուղղէ միջազգային համայնքին՝ անմիջապէս միջամտելու եւ նախաձեռնելու միջանցքի վերաբացման աշխատանքներուն»:

Արցախի ժողովուրդը կարիքը ունի սննդեղէնի, դեղորայքի, ելեկտրակաշտութեան եւ վառելանիւթի: Ուստի, «Ե.Հ.Խ.ը դարձեալ կոչ կ'ուղղէ Ազրպէյճանի եւ տարածաշրջանի ոյժերուն, որ անմիջապէս Լաչինի միջանցքին ար-

գելափակումը վերացնեն, որպեսզի մանապարհը ազատ ու ապահով ըլլայ քաղաքացիներու տեղաշարժին համար եւ մարդասիրական օժանդակութիւններ հասնին Արցախի մէջ ապրող ու տառապող Հայ ժողովուրդին»:

*Յայտնենք, որ թէ՛ Ե.Հ.Խ.ը եւ թէ՛ Ե.Ե.Խ.ը անցնող ամիսներուն քանի մը առիթներով կատարած են նոյնպիսի կոչեր ու յայտարարութիւններ, ի մասնաւորի Խորհուրդի 11-րդ Հնդհ. ժողովին:*



## **ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԸ**

### **«ՎԱՏԻԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵՒՈՐ Է ԱՐՑԱԽԻՆ ՀԱՄԱՐ»**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

*Երկուշաբթի, 7 Օգոստոս 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Պապական Նուիրակ՝ Փաուլօ Պորճիա եպիսկոպոսին:*



Հանդիպումը առիթ հանդիսացավ քննարկելու Լիբանանի նախագահական ընտրութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Վատիկանի միջեւ յարաբերութեան առնչուած եւ այլ միջ-եկեղեցական հարցեր:

Նորին Ս. Օծութինը յատուկ կերպով Պապական Նուիրակին ուշադրութեան յանձնեց աւելի քան 8 ամիսներէ ի վեր Ազրպէյճանի կողմէ շրջափակումի ենթարկուած Արցախի պարզած ներկայ կացութիւնը: Ան յիշեցուց, թէ «Հայ եկեղեցին ու Հայ ազգը միշտ երախտապարտ եղած են Հայաստանի ու Արցախի գծով Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին եւ ընդհանրապէս Վատիկանի զօրակցական կեցուածքներուն ու արտայայտութիւններուն նկատմամբ: Գիտեմք, որ Պապը Արցախի շրջափակման առիթով իր մտահոգութիւնը յայտնած էր ու շեշտած՝ կարելի փութով անոր վերջ տալու անյետաձգելի հրամայականը»: Շարունակելով իր խօսքը Հայոց Հայրապետը ըսաւ. «Մեր ազգին ջերմ սպասումն է, որ Արցախի նկատմամբ Վատիկանը շարունակէ զանազան կերպերով իր զօրակցութիւնը արտայայտել, որովհետեւ անոր շարունակուող զօրակցութիւնը կարեւոր է, յատկապէս միջազգային շրջանակներէն ներս»:

Պորճիա Եպիսկոպոսը մօտէն տեղեակ ըլլալով Արցախի հարցին, խոստացաւ Վեհափառ Հայրապետին մտածումներն ու սպասումները շուտով փոխանցել Վատիկանին:



**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
Մ.Ա.Կ.Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

**«ԿԸ ՍՊԱՍԵՆՔ, ՈՐ Մ.Ա.Կ.Ը ԱՐՑԱԽԻ  
ԱՊԱՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԳԾՈՎ ԻՐ ՉՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ  
ԳՈՐԾՆԱԴԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԵ»**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Չորեքշաբթի, 9 Օգոստոս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Մ.Ա.Կ.Ի Ընդհ. Քարտուղար՝ Անթոնիօ Կութիէրէսի ներկայացուցիչ Դոկտ. Եռաննա Վրոնեցքան, ընկերակցութեամբ իր երկու գործակիցներուն:



Հանդիպման ընթացքին քննարկուեցան երկու գլխաւոր հարցեր.- ա) Արցախի շրջափակումը Ազրպէյճանի կողմէ եւ բ) Լիբանանի նախագահական ընտրութիւնը:

Առաջին հերթին, Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ Ազրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման եւ անոր ծանր հետեւանքներուն Արցախի մեր ժողովուրդի զաւակներուն, յատկապէս ընկերատնտեսական կեանքին առնչութեամբ եւ իր գնահատանքը յայտնելով Մ.Ա.Կ.ի Ընդհ. Քարտուղարին զանազան առիթներով արտայայտած զօրակցութեան եւ շրջափակման վերջ տալու կոչին, յայտնեց որ մեր ազգի սպասումն է, որ Մ.Ա.Կ.ը շարունակէ իր զօրակցութիւնը՝ գործնական քայլերու դիմելով: Հայոց Հայրապետը միաժամանակ յիշեցուց, որ «Արդիւային աղէտ ստեղծելով քաղաքական նպատակներ հետապնդելը անընդունելի է միջազգային օրէնքին համաձայն»: Դոկտ. Եռաննա, որ ծանօթ է Արցախի շուրջ ստեղծուած կացութեան, Նորին Սրբութեան պարզած մտահոգութիւնները խոստացաւ անմիջապէս փոխանցել Մ.Ա.Կ.ի Ընդհ. Քարտուղարին:

Ապա, Վեհափառ Հայրապետը ընդհանուր գիծերով ներկայացուց վերջին ամիսներուն իր եւ Ռայի Պատրիարքին միջեւ տեղի ունեցած խորհրդակցութիւններուն եւ անոնց առնչուած այլ հանդիպումներու ընդհանուր պատկերը՝ շեշտելով կարելի փութով նախագահ ընտրելու հրամայականը: Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչը յայտնեց, որ այս հարցին գծով ինք շաբաթ մը առաջ Մ.Ա.Կ.ի Ընդհ. Քարտուղարին եւ Մ.Ա.Կ.ի ապահովական խորհուրդին իր զեկոյցը ներ-

կայացուցած է եւ բոլորը կարեւորութեամբ շեշտած են Լիբանանի նախագահական ընտրութիւնը շուտափոյթ կերպով իրականացնելու կարեւորութիւնը: Ան նաեւ իր գնահատանքը յայտնեց այս ուղղութեամբ Նորին Ս. Օծութեան եւ Հայ Համայնքին կողմէ կատարուող աշխատանքներուն համար, յատկապէս անդրադառնալով այն կարեւոր դերին, որ Վեհափառ Հայրապետը կրնայ ունենալ իր միջազգային յարաբերութիւններուն շնորհիւ:



**ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ԱՐՑԱԽԻ ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆԻՆ ՄԻՋԵԻ**

**«ԱՐՑԱԽԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԿԻՉԱԿԵՏՆ Է»**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Հինգշաբթի, 10 Օգոստոս 2023-ին, Արցախի Ազգ. Ժողովի նախագահ՝ Դաւիթ Իշխանեան հեռաձայնային կապ հաստատեց Արամ Ա. Կաթողիկոսին հետ: Ան շնորհակալութիւն յայտնեց Նորին Ս. Օծութեան իրեն փոխանցած շնորհաւորութեան եւ յաջողութեան մաղթանքներուն համար: Այս առիթով, ան յատուկ կերպով անդրադարձաւ Արցախի ապաշրջափակման ուղղութեամբ Նորին Սրբութեան տարած աշխատանքներուն եւ ունեցած հանդիպումներուն՝ միջազգային ընտանիքի եւ դիւանագիտական նեկայացուցչական պատուիրակութիւններուն հետ:

Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ Արցախը մեր համահայկական օրակարգի կիզակէտն է եւ յատկապէս ա՛յս օրերուն բոլորս պէտք է լծուինք հետեւողականօրէն աշխատելու Արցախի ապաշրջափակման ու անոր ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի վերահաստատման: Նորին Սրբութիւնը ապա շեշտեց համահունչ եւ ներդաշնակ կերպով աշխատելու հրամայականը թէ՛ ներգաղութային, թէ՛ համասփիւռքեան եւ թէ՛ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիութեան ծիրէն ներս: Միաժամանակ ան վստահեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վերանորոգ յանձնառութեամբ պիտի շարունակէ իր աշխատանքները թէ՛ Արցախի ապաշրջափակման եւ թէ՛ անոր ինքնորոշման իրաւունքին գծով:



**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ  
ԳԱՆԱՏԱՅԻ ԵՒ ԱՅԼ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ**

**«ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՑՔԻՆ ԲԱՑՈՒՄԸ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ  
ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՊԵՏԸ Է ԴԱՌՆԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՄԱՐ»**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Հինգշաբթի, 17 Օգոստոս 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս ճաշի հիւրը եղաւ Լիբանանի մօտ Գանատայի Դեսպանին: Ի պատիւ Վեհափառ Հայրապետին տրուած ճաշկերոյթին ներկայ էին նաեւ այլ դեսպաններ: Հիւրասիրութեան ընթացքին քննարկուեցան առաւելաբար երկու այժմէական նիւթեր՝ Լիբանանի նախագահական ընտրութիւնն ու Արցախի հարցը:

Լիբանանի նախագահական ընտրութեան գծով Նորին Ս. Օծութիւնը շեշտեց կարելի փութով բոլորին կողմէ ընդունելի եւ Լիբանանի ազգային միասնականութիւնը արտայայտող նախագահի մը ընտրութիւնը, որուն պէտք է անմիջապէս յաջորդէ ընկերատնտեսական բարեկարգութիւնը:

Արցախի հարցին անդրադառնալով, Նորին Սրբութիւնը շեշտեց Բերձորի (Լաչին) միջանցքին անյապաղ վերաբացումը, որուն պատճառով շուրջ 120 հազար հայեր տագնապի մատնուած են: Ան նաեւ կարեւորութեամբ ընդգծեց, որ միջանցքին բացումը անյետաձգելի հրամայական պէտք է դառնայ միջազգային համայնքին համար, ինչպէս նաեւ Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքի ճանաչման հրամայականը եւ յոյս յայտնեց, որ այս ուղղութեամբ միջազգային համայնքը իր գործնական աջակցութիւնը բերէ:



**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍՊԱՆԸ  
ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

**«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄՏԱՀՈԳ Է  
ՈՒ ՊԱՀԱՆՁԱՏԵՐ ԱՐՑԱԽԻ ԳԾՈՎ»**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

*Երեքշաբթի, 29 Օգոստոս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Լիբանանի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Դեսպան՝ Տորոթի Շիպին միջեւ:*

*Նորին Արքեպիսկոսը լայնօրէն անդրադարձաւ Արցախի պարզած ներկայ վիճակին՝ յայտնելով, որ «Արցախի տագնապը սոսկ մարդասիրական տագնապ ըլլալէ անդին իր էութեամբ քաղաքական ինքնիշխան Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքին առնչուած»: Ապա, Հայոց Հայրապետը ըսաւ, թէ «Ազրայէյնան մարդասիրական տագնապ ստեղծեց աւելի քան 120,000 ժողովուրդ սովի մատնելով, որպէսզի կարենայ ինքնորոշման անոր իրաւունքը մոռացութեան դատապարտել՝ կա՛մ Արցախը իր Հայ բնակչութենէն պարպելով եւ կա՛մ սովի ու ցեղային խտրականութեան ենթարկելով անոր Հայ*



բնակչութիւնը»: Գնահատելով Ամերիկայի Միացեալ Նահանգներուն ցուցաբերած զանազան ձեւի զօրակցութիւնը Հայ ժողովուրդին, Հայաստանին եւ Արցախին նկատմամբ, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ Հայ ժողովուրդը կը սպասէ աւելին: Ան նաեւ անդրադարձաւ յատկապէս Սփիւռքի Հայութեան խոր ընդվզումին եւ զանազան գաղութներէ ներս տեղի ունեցող բողոքի արտայայտութիւններուն:

Դեսպանը մօտէն ծանօթ ըլլալով Արցախի հարցին թէ՛ պատմական եւ թէ՛ քաղաքական երեսներուն, խոստացաւ Վեհափառ Հայրապետին մտածումներն ու սպասումները փոխանցել Ամերիկայի Միացեալ Նահանգներու իշխանութեան:

Հանդիպման ընթացքին նաեւ քննարկումի նիւթ դարձաւ Լիբանանի նախագահական ընտրութիւնը: Այս ծիրէն ներս տեղի ունեցաւ տեղեկութիւններու եւ մօտեցումներու փոխանակում, յատկապէս շուրջ երեք ամիսներ առաջ Նորին Ս. Օծութեան եւ Դեսպանին ունեցած հանդիպումէն ետք կատարուած զարգացումներու լոյսին տակ: Կարեւորութեամբ շեշտուեցաւ անյապաղ ընտրութիւն կատարելու հրամայականը, որպէսզի կարելի ըլլայ պետութիւնը մղել բարեկարգութեան գործընթացի, յատկապէս ընկերատնտեսական մարզէն ներս:



**ՏՕՆԱԿԱՆ**

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՓԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ  
28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ**

*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արժարնտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Կաթողիկոսական ընտրութեան եւ օժման 28-րդ տարեդարձը հանդիսաւորապէս նշուեցաւ Կիրակի, 2 Յուլիս 2023-ին, Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ՝ Ս. եւ Անմահ Պատարագի մատուցմամբ եւ Հայրապետական Մաղթանքի կատարումով:*

*Նորին Սրբութեան հանդիսապետութեամբ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Միաբան Հայրեր Ս. Խորան բարձրացան ու Հայրապետական Մաղթանք կատարեցին՝ ընթերցելով աւետարանական հատուածներ եւ աղօթքներ ու մաղթելով երկա՛ր գահակալութիւն Նորին Ս. Օծութեան եւ անսասանութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Ս. Աթոռին: Ս. Պատարա-*



գր մատուցեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեկմէզեան:

Ան ուրախութիւն յայտնեց, որ սոյն Կիրակին կրկնակիօրէն օրհնեալ եւ երջանկալից է, որովհետեւ Ս. Պատարագի խորհուրդին եւ մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Մարմնով եւ Արեամբ հաղորդուելու կողքին՝ Հայրապետական Մաղթանքով կը նշենք Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 28-րդ տարեդարձը: «Սաղմոսին բառերը մեզ կը հրաւիրեն, ինչպէս Հայրապետական Մաղթանքին մէջ քանիցս յիշեցինք, փառք տալու Աստուծոյ, որ մեզի շնորհած է այսպիսի Հովուապետ մը, եւ թարգմանը դառնալով մեր Միաբանութեան եւ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, կը մաղթեմ որ Աստուած միշտ ծաղկեալ պահէ Նորին Սրբութեան Հայրապետական Գաւազանը, որպէսզի քաջառողջութեամբ եւ ծով համբերութեամբ շարունակէ իր հովուապետական բարձրագոյն պատասխանատուութիւնը՝ մեր ժողովուրդի զաւակներուն բարօրութեան համար», մաղթեց ան:



Հուսկ, Սրբազան Հայրը հակիրճ կերպով ընդգծեց Նորին Ս. Օծութեան ծառայութեան քանի մը յատկանշական երեւոյթները: Ան ըսաւ, որ Վեհափառ Հայրապետը այն հոգեւոր սերմնացանն է, որ միայն բարի սերմ կը ցանէ մեր եկեղեցւոյ անդաստանին մէջ, իսկ հայկական Սփիւռքի վերակենսաւորման համար կատարած իր հովուապետական այցելութիւնները փաստ են այն ճշմարտութեան, որ Արամ Ա. Կաթողիկոսի գլխաւորութեամբ մեր Ս. Աթոռը նախանձախնդիր է, կազմակերպ՝ Հայ քրիստոնէական կեանքի շարունակութեան եւ վե-

րածաղկման: Քարոզիչ Սրբազան Հայրը շարունակեց մէջբերելով Հոռոմէացիներուն ուղղուած Պօղոս առաքեալի նամակը, ուր կը նշուի արդարութեան եւ հնազանդութեան հրամայականը եւ փոխ առնելով առաքեալին բառերը՝ աղօթեց, որ Աստուած փրկէ մեր ազգի զաւակները:

Իր քարոզին մէջ Նարեկ Արքեպիսկոպոս ընդգծեց, որ Հայոց Հայրապետին գահակալութեան տարեդարձը նշել կը նշանակէ անդրադառնալ Աստուծոյ կողմէ մեզի տրուած առիթներուն ու շնորհքներուն եւ այդ բոլորը խոր գիտակցութեամբ դնել Վեհափառ Հայրապետին տրամադրութեան տակ, որպէսզի մեր հաւաքական կեանքը ամէն տեղ եւ ամէն բնագաւառի մէջ տկարութիւն եւ թուլութիւն չունենայ: Ի վերջոյ, քարոզիչ Սրբազան Հայրը Նորին

Ս. Օծութեան փոխանցեց Ե.Հ.Խ.-ի աւելի քան 350 եկեղեցիներուն բարեմաղթութիւնները եւ եզրափակեց միջ-եկեղեցական աղօթքներէն հետեւեալով. «Սո՛ւրբ Հոգի, եկո՛ւր եւ վերանորոգէ՛ քու ստեղծագործութիւնդ: Սո՛ւրբ Հոգի, եկո՛ւր եւ վերանորոգէ՛ զիս: Սո՛ւրբ Հոգի, եկո՛ւր եւ վերանորոգէ՛ մեզ բոլորս՝ քու փառքիդ համար»:

Յաւարտ Ս. Պատարագի, Հայրապետական թափօրն ու հաւատացեալները ուղղունցան Վեհարանի դահլիճ, ուր Դպրեվանքի սաներուն կողմէ պատրաստուած գեղարուեստական կոկիկ յայտագիր մը տեղի ունեցաւ:



Յանուն Միաբանութեան ուղերձ ընթերցեց Ս. Աստուածածին Վանքի Վանահայր՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշըգեան: Ան անհուն ուրախութիւն եւ խոր բերկրանք արտայայտեց Հայոց Հայրապետին՝ Կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 28-րդ տարեդարձին առիթով: Հոգշ. Հայր Սուրբը գոհութիւն եւ փառք տուաւ Աստուծոյ այս առիթին համար՝ մանաւանդ, որ Արամ Ա. Կաթողիկոսին ճամբով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ բացուեցաւ վերանորոգուած ճանապարհ մը, ուրկէ ոգեղէն զգացութեամբ կրկին անցան մեր սուրբ հայրերն ու հերոսները եւ եկեղեցին ապ-

րեցաւ վերաթարմութեան շրջան:

Ան ընդգծեց, որ արդար է ժողովուրդի մը անցեալի իրագործութիւններով հպարտանալը, սակայն ցնծութիւն է նաեւ ապրիլ վերելքը, եւ այս տեղի ունեցաւ Նորին Սրբութեան օրով, մանաւանդ միջ-եկեղեցական մարզին մէջ, որուն հետեւանքով մեր Ս. Աթոռը դրունցաւ պատուազիր դիրքերու վրայ: Խօսքը ուղղելով Վեհափառ Հայրապետին, Հայր Շնորհք ըսաւ. «Պատիւ է մեզի համար եւ հպարտ ենք ունենալու Ձեզի պէս եկեղեցասէր, ազգասէր, մշակութասէր, մտաւորական, պահանջատէր, միջ-եկեղեցական պատասխանատու գործիչ, ծառայասէր, շինարար եւ մանաւանդ Հայ ժողովուրդի վերջին տարիներու դիմագրաւած տագնապներուն դիմաց ողորմած Կաթողիկոս»:

Շնորհք Ծ. Վրդ.-ը ըսաւ, որ, Անթիլիասը երկրորդ հայրենիք դարձնելով՝ Նորին Ս. Օծութիւնը ընդարձակեց ժողովուրդին հոգեւոր ու բարոյական գանձերուն տանող ուղին եւ Հայրենիքը ամէնօրեայ ներկայութիւն դարձուց մեր կեանքին մէջ: Անոր հայրական ու Հայրապետական խրատներն ու թելադրանքները անպակաս էին այս ուղղութեամբ:

Վերջապէս, յանուն Միաբանութեան եւ ժողովուրդին, Հոգշ. Հայր Սուրբը մաղթեց, որ Աստուած Իր հովանին անպակաս ընէ Վեհափառ Հայրապետին վրայէն, առաջնորդէ ու օրհնէ անոր առաքելութիւնը եւ առողջութիւն ու կորով պարգեւէ անոր, որպէսզի կարենայ բարի ու երկար գահակալութեամբ ծառայել Հայ ժողովուրդին:

Ապա Նորին Սրբութիւնը առաջին հերթին իր բարձր գնահատանքը եւ ջերմ շնորհակալութիւնը յայտնեց քարոզիչ Սրբազան Հօր եւ Հոգշ. Հայր Սուրբին ազնիւ ու գեղեցիկ խօսքերուն համար եւ ընդգծեց, որ մեր եկեղեցւոյ աւանդութեան համաձայն կատարուող Հայրապետական Մաղթանքը, Հայրապետին անձէն ու գործէն անդին, նաեւ ուղղուած է Հայրապետութեան, որովհետեւ մեր եկեղեցւոյ կեանքին մէջ Հայրապետն ու Հայրապետութիւնը տարբեր իրականութիւններ չեն, այլ մէկ ամբողջութիւն կը կազմեն: Ան ընդգծեց, որ խօսիլ Հայրապետին մասին կը նշանակէ խօսիլ Հայրապետութեան մասին եւ փոխադարձաբար. ուստի այս մէկը առիթ է նաեւ ինքնաքննութեան եւ հրաւէր՝ մեր ժողովուրդի կեանքին մէջ Հայ եկեղեցւոյ դերի վերաշեշտաւորման, մանաւանդ՝ ներկայ օրերուն:



Այս ըսելով, Նորին Ս. Օծութիւնը ակնարկ մը նետեց ներկայ Հայ կեանքի իրականութեան վրայ՝ քանի մը ընդգծումներ ու յիշեցումներ կատարելով: Ան միասնականութեան եւ համախմբումի կոչ ուղղեց համայն հայութեան, յատկապէս Արցախի ներկայ կացութեան դիմաց եւ ըսաւ, որ Հայ եկեղեցւոյ առա-

քելութիւնն է յոյս ներշնչել եւ փարոս ու ճանապարհ դառնալ ժողովուրդի կեանքին մէջ: Աւելի՛ն. ան դիտել տուաւ, որ եկեղեցին կոչուած է Արցախի տխուր իրականութեան դիմաց լուր շմնալու, այլ՝ իր ձայնը բարձրացնելու ազգային եւ միջազգային բնագաւառներէն ներս՝ մեկնելով ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքէն:

Արամ Ա. Կաթողիկոս սրտի ցաւով խօսեցաւ Հայ ժողովուրդին մէջ տեղ-տեղ ծագած անտարբեր կեցուածքներուն ու պառակտումներուն, ինչպէս նաեւ արժէքներու նահանջին մասին, զանոնք համարելով անընդունելի: Մեր եկեղեցին կոչուած է կարեւորութեամբ շեշտելու արժէքներու կենսական ներկայութիւնն ու ներգործող ոյժը մեր ժողովուրդի կեանքէն ներս՝ աւելցնելով, որ եկեղեցին ժողովուրդին տազնապներուն դիմաց անտարբեր չի՛ կրնար մնալ. «Եկեղեցոյ տեղն ու դերը մեր ժողովուրդի կեանքի մայր էջին վրայ է եւ մեր Հայրենիքը յուզող հարցերուն նկատմամբ ո՛չ միայն ըսելիք, այլ նաեւ՝ ընելիք՝ պէտք է ունենայ, միշտ յառաջապահ դիրքի վրայ»:

Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս դիտել տուաւ մարդոյժի պակասի խնդիրը, մանաւանդ՝ ղեկավար դիրքերու վրայ, եւ հրաւիրեց բոլորը իրատեսութեամբ, իրապաշտութեամբ եւ համապարփակ ոգիով մօտենալու հարցերուն: «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը այս գիտակցութեամբ, նախանձախնդրութեամբ եւ խստապահանջութեամբ պիտի շարունակէ՝ իր կոչումին հաւատարմութեամբ որպէս եկեղեցի, իր առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս: Մեր եկեղեցին պիտի շարունակէ իր ծառայական առաքելութիւնը Աստուծոյ փառքին, եկեղեցոյ պայծառութեան, մեր Հայրենիքի հզօրացման եւ մեր ժողովուրդի անասանութեան ի խնդիր», վստահեցուց ան:

Հայրապետական պատգամին յաջորդեց «Կիլիկիա» օրհներգը, որմէ ետք Նորին Սրբութեան «Պահպանիչ» աղօթքով եւ «Հայրապետական մաղթերգ»-ով փակուեցաւ հանդիսութիւնը:

Յայտնենք նաեւ, որ Հայրապետական Մաղթանք կատարուեցաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին ներքոյ թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ:



## ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

*Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնը Հայ եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկն է, որ եկեղեցական տօնախմբութեամբ հանդիսաւորապէս կը նշուի Ս. եւ Անմահ Պատարագի մատուցմամբ, իսկ ազգային առումով՝ Վարդավառի ժողովրդային տօնով: Առ այդ, օրհնութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կիրակի, 16 Յուլիս 2023-ին, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ եւ Պիքֆայայի «Ս. Աստուածածին» Վանքի համանուն մատրան մէջ Քրիստոսի Այլակերպութեան յիշատակը տօնուեցաւ: Անթիլիասի Մայրավանքի Մայր Տաճարին Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց՝ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանը:*

*Սրբազան Հայրը իր քարոզը սկսաւ «Տէ՛ր, բարո՛ւք է մեզ աստ լինել» (Մտ 17.4) Պետրոս առաքեալի խօսքով, որ արտասանած էր Թաբօր լեռան վրայ՝ որպէս փափաք ընդմիշտ մնալու Քրիստոսի Պայծառակերպութեան ներկա-*



յուլթեան, եւ խօսելով տօնի պատգամին եւ խորհրդանիշերուն մասին՝ եզրակացուց նո՛յն խօսքին իմաստը պարզելով ներկայ դարաշրջանի պայմաններու լոյսին տակ:

Քրիստոս իր երկրային կեանքի վերջին հանգրուանը թեւակոխելէ առաջ, երեք առաքեալներուն՝ Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ առանձնացաւ՝ Թաբօր լեռ բարձրանալով: Լեռը Աստուծոյ բնակարանին խորհրդանիշն է, ըսաւ Սրբազան Հայրը: Հոն անոնց երեւցան Մովսէս մարգարէն, որ Հին Կտակարանին մէջ օրէնքի խորհրդանիշն է, եւ Եղիա մարգարէն, որ մարգարէները կը խորհրդանշէ: Այս դիտել կու տայ, որ Յիսուս անոնցմէ մէկը չէր, այլ՝ անոնց Տէրն էր: Քարոզիչ Սրբազան Հայրը ապա նշեց, որ Քրիստոսի Աստուածութեան երկրորդ խորհրդանիշը ամպն էր՝ Աստուած մարդոց հետ կը հաղորդակցի ամպերուն ընդմէջէն, իսկ երրորդը՝ Պայծառակերպութեան ճամբով առաքեալներուն յայտնաբերելն էր գալիք օրերու շարժարանքներն ու խաչելութիւնը, որպէսզի առաքեալները ընկալէին Աստուածային կամքը այս բոլորին մէջ: Առ այդ, Սրբազան Հայրը յորդորեց հաւատացեալները Աւետարանը կարդալու ո՛չ թէ «մարդկային ակնոցով», այլ՝ «Աստուածային ակնոցով»:

Անդրադառնալով մեր ժողովուրդին Պայծառակերպութեան տօնը վարդավառ ազգային տօնի ճամբով նշելուն, Գեղամ Արքեպիսկոպոս վերջիշեցուց Հայ եկեղեցւոյ ազգային եկեղեցի ըլլալու յատկանիշը, որուն միջոցով Հայ ազգը կը պահէ իր ինքնութիւնը: Ուստի, եզրափակելով իր քարոզը, ան դարձեալ մէջբերեց Պետրոս առաքեալին խօսքը եւ քաջալերեց հաւատացեալները մնալու Հայ եկեղեցւոյ հովանիին տակ, այն վայրին մէջ, ուր կը պահուին մեր հոգեւոր ու ազգային ինքնութիւնը ամրապնդող ազգակաները, մանաւանդ՝ ներկայ դարու ծայրայեղ յոռի երեւոյթներուն դիմաց եւ ըսաւ. «Տէ՛ր, բարտբ է մեզ աստ լինել»:



## Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Օրհնութեամբ Ս. Աթոռոյս Արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, 7-11 Օգոստոս 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Ուխտի շաբթուան առիթով, Վանքի համանուն մատրան մէջ ամէն առաւօտ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ եւ կատարուեցան հոգեւոր խորհրդածութիւններ, Կիլիկեան Ուխտեալ Միաբանութեան երիտասարդ անդամներուն կողմէ: Իւրաքանչիւր օրուան եկեղեցական հոգեպարար արարողութենէն ետք, տեղի ունեցաւ խաչի, խունկի, ջուրի, իւղի եւ աղի օրհնութեան կարգեր:

Արդարեւ, Ուրբաթ, 11 Օգոստոս 2023-ին, Ս. Պատարագի մատուցումէն ետք, Ս. Աստուածածին Վանքի բացօթեայ խորանին առջեւ, հաւատացեալներու խումբերամ բազմութեան ներկայութեան, տեղի ունեցաւ աւանդական Անդաստանի եւ ապա աղօրհնէքի զոյգ արարողութիւնները, նախագահու-





Թեամբ Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանի:

Յիշեալ արարողութիւններէն ետք, գլխաւորութեամբ Բաժանմունքի Վարիշ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեանի, հաւատացեալները բարձրացան Վեհափառ Հայրապետին մօտ եւ ստացան անոր Հայրապետական ու հայրական օրհնութիւնները:

Յայտնենք, որ նոյն օրը երեկոյեան, գլխաւորութեամբ Ս. Աստուածածին Վանքի Վանահօր՝ Գերպ. Տ. Շնորհք Մ. Վրդ. Աշըգեանին, տեղի ունեցաւ մատաղցու ոչխարներու զենումն ու խաղողներու պատրաստութեան աշխատանքը, որպէսզի Շաբաթ, 12 Օգոստոս 2023-ին, Վանքի ուխտի Պատարագի ընթացքին, խաղողի առաջին բերքին հետ միասին օրհնուին Նորին Սրբութեան ձեռամբ եւ բաշխուին մեր հաւատացեալ ժողովուրդին:

### **ՈՒԽՏԻ ՕՐՈՒԱՆ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ**

Ներկայ հայկական իրականութեան դիմաց որքան պէտք ունինք հաւատքի ու կամքի զօրութեան, որպէսզի կարենանք շարունակել ու ապաւինիլ Աստուծոյ փրկութեան խոստումին, իսկ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առընթեր Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի ուխտի օրուան նուիր-

ուած Ս. Պատարագը առիթ կը ստեղծէ հաւատացեալներուն՝ վերանորոգուելու եւ վերանորոգելու իրենց քրիստոնէական յոյսը:

Արդարեւ, Շաբաթ, 12 Օգոստոս 2023-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս նկատելով Արցախի անկայուն վիճակը, Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին արտասանած իր Հայրապետական պատգամը յատկացուց Արցախին եւ զայն յղեց հինգ հասցէներու՝ Հայաստանի իշխանութեան, Հայաստանի ժողովուրդին, Միջազգային Համայնքին, Սփիւռքին եւ Արցախի ժողովուրդին:



Նշենք, որ հանդիսապետութեամբ Նորին Սրբութեան, Վանքի բացօթեայ Ս. Խորանին վրայ Ս. Պատարագը մատուցեց Արաբական Միացեալ Համրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, իսկ երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Յաւարտ Ս. Պատարագին, Հայոց Հայրապետը թափօրով խորան բարձրացաւ ու հանդիսապետեց խաղողօրհնէքի եւ մատաղօրհնէքի արարողութեան, որմէ ետք ուղղեց իր Հայրապետական Պատգամը: Ան ըսաւ, որ խոր մտահոգութեամբ կը հետեւի Արցախի պարզած ներկայ ճգնաժամային կացութեան, երբ շրջափակումի ենթարկուած Արցախը սովամահ ըլլալու անմիջական վտանգին ենթակայ է: Ուստի, Նորին Սրբութիւնը դիմելով Հայաստանի իշխանութեան, հարց տուաւ, թէ ան կ'անդրադառնա՞յ արդեօք, որ իր որդեգրած մօտեցումները Արցախը կրնան ջնջել Հայ կեանքի քարտէսէն ու ցեղասպանութեան մատնել 120 հազար հայորդիները, միաժամանակ վտան-

գելով նաեւ Հայաստանի ապագան: Ան շեշտեց, որ Հայաստանը պէտք է տէր կանգնի իր շահերուն՝ զատորոշելով բարեկամութիւնը ենթակայութենէն: Աւելի՛ն. «Ազրպէյճանի հետ բանակցութիւններու ընթացքին, հարկ է որ Հայաստանը դուրս գայ պարտուած ըլլալու հոգեվիճակէն եւ սուկ գիջումներ կատարելու կացութենէն: Հայաստանը պէտք է առկա ի բանակցութիւնները մինչեւ որ վերջ գտնէ Արցախի շրջափակումը»: Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ նոր պատերազմներէ խուսափիլ չի նշանակեր տեղի տալ Ազրպէյճանի տակաւ բազմացող պահանջներուն: «Անհրաժեշտ է որդեգրել նկուն, բայց մարտունակ գործելաճանաչում, միշտ մեկնելով պատմականօրէն հաստատուած եւ միջազգային ֆանաչում ստացած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակէն: Այլ իօսով, պէտք է մերժել որեւէ մօտեցում, որ Արցախը կը նկատէ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան անբաժան մասը», ընդգծեց ան: Արամ Ա. Կաթողիկոս կարեւորութեամբ շեշտեց, որ «շրջափակումին կարելի փութով վերջ տալը եւ Արցախի ինքնորոշման կարգավիճակը առաւել շեշտաւորումով միջազգային հարթակ բերելը, պէտք է Հայաստանի իշխանութեան արտաքին քաղաքականութեան կիզակետը դառնան: Այս համահայկական հրամայականին լոյսին տակ եւ ներկայ ֆակտագրական պայմաններուն մէջ, Մեր առաջարկն է, որ իշխանութեան, ընդդիմութեան ու Սփիւռքի ներկայացուցիչներէ բաղկացած քաղաքական ու դիւանագիտական հարուստ փորձառութիւն ունեցող մարմին մը, իր ետին ունենալով մեր ողջ ժողովուրդին նեցուկն ու վստահութիւնը, ամբողջական



պատասխանատուութիւնը ստանձնէ՝ վարելու Ազրպէյճանի հետ տարուող բանակցութիւնները, բնականաբար՝ նոր ռեժիմով ու նոր մօտեցումով», *Թելադրեց ան*:

*Դիմելով Հայաստանի ժողովուրդին, Նորին Ս. Օծութիւնը տարօրինակ գտաւ տիրող լուծիւնն ու անտարբերութիւնը. ան կոչ ուղղեց ժողովուրդին փողոց իջնելու. «Մեր եղբայրներն ու քոյրերը եւ մեր երեխաները, սովամահ ըլլալու վիճակին մէջ կը գտնուին. դուք ի՞նչ կ'ընէք. փողոց իջէք, ինչի՞ կը սպասէք. աշխարհը մեզ կը դիտէ. ժողովուրդին ձայնը գերիվեր է բոլոր տեսակի ձայներէն ու տեսակետներէն: Ձեր ժամանակը մի՛ վատնէք ապառոջ քննադատութիւններով, փոխադարձ մեղադրանքներով, բացուած նեղերը աւելի խորացնելով: Ոտքի՛ ելէք, արդարութիւն՝ պահանջեցէք աշխարհէն: Հայաստանի մէջ կեանքը չի՛ կրնար բնական ըլլալ, երբ անդին ծայրայեղօրէն անբնական է կեանքը Արցախի մէջ: Մեր ազգին միասնականութիւնը ու հաւաքական վնասակամութիւնը ցոյց տուէք գործնապէս՝ ձեր դիմաց կանգնած արիւնարբու ազերիին» ըսաւ Հայոց Հայրապետը:*

*Երրորդ պատգամը ուղղելով Միջազգային Համայնքին, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ ինչպէս 1915-ին, այսօր եւս հարց կու տանք, թէ ո՞ր է Միջազգային Համայնքը: Ազրպէյճան անպատիժ կերպով կը շարունակէ անտեսել Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, Եւրոպական Խորհուրդին, միջազգային իրաւական կառոյցներուն ապաշրջափակման կոչերը, իսկ միւս կողմէն, Թուրքիա նեցուկ կը կանգնի շրջափակման ու Զանգեզուրի միջանցքի բացման մասին կը խօսի: Ան դիտել տուաւ, որ կարգ մը բարեկամ երկիրներու զօրակցութիւնն ու մարդասիրական օժանդակութիւնը, որոնց համար շնորհակալ ենք, բաւարար չեն տագնապը լուծելու. հրամայական է Արցախին անվտանգութիւնը ապահովել՝ անոր ինքնորոշման իրաւունքը ճանչնալով: «Մեր սպասումն է, որ յատկապէս մեծ պետութիւններ դիմեն գործնական քայլերու, առաջին հերթին ստիպելով որ Ազրպէյճանը վերջ տայ Արցախի շրջափակումին եւ սպա քաղաքական բանակցութիւններու նամբով նանչնան Արցախի ինքնորոշումը՝ միջազգային հովանաւորութեան ներքեւ» յայտնեց Նորին Սրբութիւնը:*

*Իր պատգամը ուղղելով Սփիւռքին՝ Արամ Ա. Կաթողիկոս վերջիշեցուց, թէ Սփիւռքը միշտ գործնապէս եղած է Արցախի կողքին՝ տնտեսական, բարեսիրական, քաղաքական ու քարոզչական հսկայ ներդրում կատարելով, ի խնդիր Արցախի հզօրացման ու զարգացման: «Արցախը կ'ուղղուի դէպի կործանում: Արցախը առանձին պէտք չէ՛՝ ձգել: Իւրաքանչիւր Հայ եւ ողջ Հայութիւնը նուիրական պարտաւորութիւն ունի Արցախին նկատմամբ: Արցախի փրկութիւնը համահայկական առաջնահերթութիւն է», ըսաւ ան ու աւելցուց, որ Սփիւռքը կոչուած է դիմելու այնպիսի ազգու միջոցներու, որոնք Արցախի ներքին ուժականութիւնը կ'ամրապնդեն եւ արտաքին աշխարհին մէջ Արցա-*

*խի ժողովուրդին ինքնորոշման անյետաձգելի հրամայականը կը շեշտեն:*  
 «Այս ուղղութեամբ անհրաժեշտ է, առաջին հերթին, Սփիւռքի մարդոյժը ու ներոյժը համախմբել. երկրորդ, աշխատանքային յստակ օրակարգ կազմել ու թիրախներ նշել եւ երրորդ, տեղեկատուական մարզէն ներս ծրագրուած լայնածաւալ բարոզչութիւն կատարել՝ արաբական, իսլամական, եւրոպական, ամերիկեան, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէն ներս, համապատասխան շեշտաւորումներով», *Թելադրեց ան:*



*Վերջապէս, իր պատգամը ուղղելով Արցախի ժողովուրդին, Նորին Սրբութիւնը յայտնեց. «Սիրելի՛ Արցախի Հայութիւն, Արցախը պարտուած չէ՛, յաղթակա՛ն է Արցախը ու պիտի մնա՛յ յաղթական՝ այնքան ատեն, որ ձեր կեանքը շաղախուած է ամուր հաւատով, կռանուած՝ անխորտակելի կամքով ու թրծուած՝ պայծառ ապագայի տեսլականով» ու վստահեցուց, որ Արցախը առանձին չէ: Ան եզրափակեց իր պատգամը՝ ըսելով, որ «Արցախի ժողովուրդը Խորհրդարանին ճամբով արտայայտած է իր հաւաքական կամքը՝ «Ճանաչում յանուն փրկութեան»: Արդար պահանջք մը, որ իրաւական հիմք ունի եւ կը համապատասխանէ պատմական իրողութեան ու միջազգային օրէնքին: Սա պահուն, Մենք եւս Մեր ձայնը միացնելով Արցախի Խորհրդարանին, կը յայտարարենք, թէ «խորապէս համոզուած ենք, որ վերահաս ողբերգութիւնը կանխելու միակ միջոցը Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումն է՝ ՃԱՆԱԶՈՒՄ ՅԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ սկզբունքի հիման վրայ»: Արցախին դիմաց այլ ճանապարհ չկայ: Եկէ՛ք, ժողովուրդ Հայոց, միասնաբար եւ արիաբար քայլէք այս ճամբէն: Բի՛ւր պատիւ ու յարգանք Արցախի մեր սիրելի ժողովուրդին»:*



## ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

*Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը նշուեցաւ Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին եւ Պիքֆայայի Վանքի Ս. Աստուածածին մատրան մէջ, Կիրակի, 13 Օգոստոս 2023-ին: Մայրավանքին մէջ Ս. Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Մայր Տաճարի Լուսարարապետ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:*



*Հայ եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, այս տօնին կը կատարուի խաղողօրհնէքի արարողութիւն: Ուստի, Պատարագիչ Սրբազան Հայրը կատարեց խաղողի Օրհնութեան կարգը, որմէ ետք փոխանցեց օրուան խորհուրդին պատգամը:*

*Իր քարոզին մէջ Սրբազան Հայրը ըսաւ, որ եկեղեցւոյ հայրերը Օգոստոս 15-ը նշանակած են Աստուածամօր Վերափոխման տօնին նշումը՝ հիմնուելով պատմական աւանդութեան տուեալներու վրայ, իսկ խաղողօրհնէքի աւանդութիւնը կը պատկանի Հայ եկեղեցւոյ. «Ըստ դարաւոր աւանդութեան, երբ Աստուածածնայ Վերափոխման տօնին խաղողի առաջին բերքը կ'ընծայենք Աստուծոյ եւ կը ղնենք Ս. Խորանին առաջ, ունինք այն հաստատ հաւատքն ու խոստովանութիւնը, թէ Աստուած է պարգեւողը աշխարհի բարիքները, եւ ուստի, կը խնդրենք Իր օրհնութիւնը Իր պարգեւներուն հետ»:*

Անդրադառնալով Աստուածամօր անձին, Կոմիտաս Սրբազան Հայրը յայտնեց, որ Աստուածամայրը է եւ կը մնայ ճշմարիտ սրբութեան եւ անարատութեան տիպարը: Քրիստոնէական մեր հաւատքին ու Հաւատամքին ճամբով, Աստուածաշունչին եւ մեր Փրկչին՝ Քրիստոսի ուսուցումները մեզ կը հրաւիրեն սրբութեան կեանքի՝ հիմնուելով Աստուածամօր երկրաւոր կեանքի օրինակին վրայ: Առ այդ, քարոզիչ Սրբազան Հայրը նաեւ յայտնեց Աստուածամօր տիպարին օրինակը Հայ ընտանիքի կեանքին մէջ: Ան աւելցուց, որ Ս. Կոյսին սրբութեան կողքին, մեծ է անոր Աստուածապաշտութեան ու բարեպաշտութեան օրինակը. երբ Յիսուս երկրաւոր առաքելութեան սկիզբը տակաւին հրաշք չէր կատարած, Ս. Կոյս Մարիամն էր, որ զինք մղեց Կանայի հարսանիքին շուրջ գինիի փոխակերպելու, քաջ գիտնալով իր զաւակին Աստուածութիւնը:

Սրբազան Հայրը իր քարոզը եզրափակեց խրախուսելով հաւատացեալները նեղութիւններուն դիմաց շտկարանալու, այլ վստահելու Աստուածամօր մայրական գուրգուրանքին ու ապաւինելու անոր բարեխօսութեան: Վերջապէս, ան շնորհաւորեց եւ օրհնեց Մարիամ Աստուածամօր անունով զարդարուած մեր ժողովուրդի զաւակները:

## **Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին ու Պիքֆայայի Վանքի «Ուխտ Օր»ուան առիթով եղած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար Մայր Տաճարի Լուսարարապետութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր նուիրատու ուխտաւորներուն:

Խաղող կը նուիրեն.-

13 սնտուկ խաղող.- Յակոբ Չարըքեան:

10 սնտուկ.- Քաղաքապետարան Պահրրսաֆ:

3 սնտուկ.- Նաթալի Տէմիրճեան:

2 սնտուկ.- Մինաս Գարամինասեան, Զօհրայ Շէքեան, Մէյ Մարգարեան, Ճօ եւ Սերժ Խաչատուրեան, Սօսի եւ Փիէո Փօլատեան, Դաւիթ Տէմիրճեան, Յակոբ եւ Արփի Գազանճեան, Արեւիկ Սամուէլեան, Տէր եւ Տիկ. Ժիրայր Թանկուքեան, Մի Ոմն:

1 սնտուկ.- Անդրանիկ Թանկուքեան եւ ընտանիք, Աբրահամ Գոռնոզեան, Մարտիրոս Մարտիկեան, Վարդան Քիւրիքեան, Սաղըրեան ընտանիք, Այտա Մարգարեան, Մանսուր Մըրէպ, Յակոբ եւ Մարօ Չալըքեան, Վարդան եւ Հայկօ Փափալեան, Սթելլա եւ Ճօ Շամլեան, Ռաֆայէլ Խորճեան, Մի Ոմն, Թորոս Պապիկեան, Ժագ Պիլալեան, Մէյրի Հինտոյեան:

- 100 քիլո.- Խաչիկ Թապուճեան:
- 6 քիլո.- Անի Գուտուսեան:
- 5 քիլո.- Արամալեան ընտանիք, Նայիրի Արսլանեան:
- 3 քիլո.- Աբգար Չալեան:
- 12 տոպրակ.- Հերմինէ Քէհէյեան:
- 3 տոպրակ.- Մի Ոմն:
- 2 տոպրակ.- Արազ Քէլէշեան:
- 1 տոպրակ.- Մարալ Չալեան:

**Նիւթական նուիրատուութիւններ.-**

- 700 Ամ. տոլար.- Տէր եւ Տիկ. Ճորճ Գարամանուկեան:
- 486 Ամ. տոլար.- Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Հոգեւոր Լսարանի տիկնայք:
- 251 Ամ. տոլար.- Diafugo:
- 100 Ամ. տոլար.- Գրիգոր Արսլանեան, Մարի Հէլէն Գասարճեան, Նորա Մուրատեան, Նիկողայի եւ Անժէլ Մուրատեաններու հոգւոյն՝ Մըլհէմ Թէրէզ եւ ընտանիք, Տէր եւ Տիկ. Յարութ Միսիրեան, Փօլ Եուսէֆ Քանաան եւ ընտանիք, Ռոժէ Մկրտիչեան, Համբիկ Թահմէյեան, Տէր եւ Տիկ. Գրիգոր Եսայեան:
- 50 Ամ. տոլար.- Մարկո Չպուքչճեան, Բեկի Խաչատուրեան, Ճօ Մզնըր եւ ընտանիք, Տէր եւ Տիկ. Վարդան Փափազեան, Ճորճ Ճմուռի եւ ընտանիք, Ռոժէ Միսիրեան, Անի Շամլեան, Անթուան եւ Ճօ Հաքիմ, Վիգի Մալճեան, Նաթալի եւ Միշէլ Սալամի, Տէր եւ Տիկ. Միհրան Խաչատուրեան, Քարի Ֆաթթալ եւ ընտանիք, Կարօ Չաբութեան, Սեւակ եւ Լարա Ճամուրեան, Շիրտըմեան ընտանիք, Ռալֆ Պօղոս եւ ընտանիք:
- 30 Ամ. տոլար.- Քէշիշեան եղբայրներ:
- 25 Ամ. տոլար.- Խաչիկ Տէմիրճեան:
- 20 Ամ. տոլար.- Թագուհի Գպրանեան, Մարալ Սէմէրճեան, Սեւան Ազիզեան, Էլի եւ Ռիթա Հապիպ:
- 10 Ամ. տոլար.- Վէրգին Գապալուքեան Ճէրահեան, Գարօլին Պէրպէրեան, Սալլի Ճորճ:
- 10 միլիոն.- Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Հոգեւոր Լսարանի տիկնայք:
- 3 միլիոն.- Սամիր Հատիտ եւ ընտանիք:
- 2 միլիոն.- Մրուան Հատիտ եւ ընտանիք, Սալիպեան ընտանիք:
- 1 միլիոն.- Յակոբ Միթիլեան, Յակոբ Գալաճեան եւ Արշօ Դանիէլեան, Տէր եւ Տիկ. Յարութ Շահպազեան, Խասան Շալհուպ եւ ընտանիք, Յակոբ Թէլվիզեան:
- 500 հազար.- Գիլինճեան Անի, Մկրտիչ եւ Վարդգէս Պաստրմաճեան:

400 հազար.- Լուսին Պէքարեան:

300 հազար.- Կրէթթա Մարտիրոսեան:

200 հազար.- Մի Ոմն:

100 հազար.- Թէքէլեան ընտանիք, Շողիկ Խաչատուրեան, փոքրիկներ՝  
Զանգունա, Աննակալիա եւ Լէօփօլ, Մի Ոմն:

Այլ նուիրատուութիւններ.-

Ոչխար կը նուիրեն.-

1 հատ.- Խաթուն Պուլղուրճեան, Անի Զիլինկիրեան, Նաթալի Տէմիրճեան,  
Ալիս Օհաննեան, Սարգիս եւ Նորա Առաքելեան, Գարլօ Քէօսէյեան, Մի Ոմն,  
Ռոպէր Քէշիշեան, Ռազմիկ Ճուլֆայեան, Ալին Յարութիւնեան, Ռոպէր Մահ-  
րու, Ճորճ Սապունճեան Հաստատութիւն:

2 հատ.- Սարգիս Զէյթունլեան եւ Մարինա Տէմիրճեան, Լեւոն Հատիտեան:

Ափուր կը նուիրեն.- 2 հատ.- Յարութիւն Փօլատեան:

Աղ կը նուիրեն.-

1 տոպրակ.- Մարալ Զայլեան:

50 քիլօ.- Նաթալի Թապունճեան:

10 քիլօ.- Շուշիկ Վէքիլեան:

Ալիւր կը նուիրէ.- 1 տոպրակ.- Մարալ Զայլեան:

Խունկ կը նուիրեն.-

14 քիլօ.- Քրիստին Ղազարեան, Ռոզին Ապրամեան, Ժանին Գրիօղլեան:

10 քիլօ.- Սիլվա Թապունճեան:



## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԲ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՎԱՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԾԵՆՔԻՆ

*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ կառուցուած եպիսկոպոսաց շէնքին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Շաբաթ, 22 Յուլիս 2023-ի առաւօտուն, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ ներկայութեամբ Ազգ. Բարերար՝ Հանգուցեալ Գառնիկ Եագուպեանի այրի՝ Անահիտին եւ զաւակներուն՝ Գարինին, Արամին եւ Անիթային:*

*Յայտնենք, որ շէնքին շինութիւնը աւարտած էր 2019 թուականին, սակայն համաճարակին եւ Գառնիկ Եագուպեանին մահուան պատճառով այս տարի միայն առիթ ստեղծուեցաւ պաշտօնապէս կատարելու շէնքին բացումը, որուն ներկայ էին Կիլիկեան Ուխտի Միաբան Հայրեր, Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան անդամներ, շէնքին ճարտարապետները, Հայկական երեք կուսակցութիւններու, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներ:*



Բացման հանդիսութիւնը ընթացք առաւ եպիսկոպոսաց շէնքի մուտքին «Ուրախ լեռ» շարականի երգեցողութեամբ, որմէ ետք, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, Տիկ. Անահիտ Եագուպեան հատեց ժապաւէնը, ապա երգուեցաւ «Կիլիկիա» օրհներգը, որուն յաջորդեց շէնքին մէջ շրջագայութիւն՝ նախքան ներկաներուն ուղղուիլը դէպի Դպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» սրահ, ուր Նորին Սրբութիւնը արտասանեց իր Պատգամը:

Արդարեւ, Նորին Ս. Օծութիւնը իր խօսքին մէջ վեր առաւ եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին կատարուած բարերարութեանց կարեւորութիւնը: Առ այդ, ան ընդգծեց Տիկ. Անահիտ Եագուպեանի հօր՝ Գէորգ Չաթալպաշեանի բարերարութիւնը Անթիլիաս Մայրավանքի Վեհարանի կառուցման, որ իր աւարտին հասած էր 1968 թուականին, եւ անդրադարձաւ Չաթալպաշեան բարերարին ազգային արժանիքներուն: Հայոց Հայրապետը նաեւ խօսեցաւ, թէ ինչպէս Եագուպեան ընտանիքը, գլխաւորութեամբ հանգուցեալ Գ. Եագուպեանի, հետեւելով իրենց հօր եւ աներհօր օրինակին, ստանձնեց Պիքֆայայի Վեհարանին վերանորոգման եւ ընդլայնման (2014), ինչպէս նաեւ սոյն եպիսկոպոսաց շէնքին կառուցման (2019) բարերարութիւնը:

Իր խօսքի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս իր վստահութիւնը յայտնեց, որ Եագուպեան ընտանիքը իր բարերարութիւնը վերանորոգ ոգիով պիտի շարունակէ ազգին, եկեղեցւոյ ու հայրենիքին եւ աղօթք բարձրացուց առ Աստուած, որ հանգուցեալ Գ. Եագուպեանի հոգին լուսաւորէ եւ զայն հանգչեցնէ երկնային լոյս խորաններուն մէջ:

Ապա, Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Նարեկացիի «Նարեկ» աղօթամատենանի հնագոյն ձեռագիրին կրկնօրինակը նուիրեց Տիկ. Անահիտ Եագուպեանին:

Կարեւորութեամբ նշենք, որ Գ. Եագուպեան բազմաթիւ բարերարութիւններ կատարած է Սուրիոյ, Լիբանանի ու Հայաստանի մէջ եւ իրողապէս արժանացած է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԿՈՆՈՒՄԻՆ:

Յիշենք, որ 2014 թուականին, Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկեան Իշխան»ի շքանշանով զարդարած էր հանգուցեալ Գառնիկ Եագուպեանի կուրծքը:

## ԴՊՐԵՎԱՆՔ

### ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

#### ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԻ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՀԱԼՔՊ ԺԱՄԱՆԱԾ ՍԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Երեքշաբթի, 11 Յուլիս 2023-ի առաւօտուն, Ս. Պատարագէն ետք, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեան, «Սուրէնեան» Դահլիճէն ներս հանդիպում ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքէն ներս ուսանող հալէպահայ սաներուն հետ, որոնք ամառնային արձակուրդով ժամանած էին Հալէպ:

Հանդիպումի ընթացքին, Սրբազան Հայրը քաջալերեց, գօտեպնդեց եւ օրհնեց սաները, լսեց Դպրեվանքէն ներս անոնց ուսման եւ առօրեայ կեանքին մասին: Ան իր հայրական ցուցմունքները փոխանցեց սաներուն, պատւիրելով, որ եկեղեցական արարողութիւններուն ներկայ գտնուելով օրինակ հանդիսանան ժողովուրդի զաւակներուն եւ իրենց ծառայութիւնը մատուցեն եկեղեցւոյ մէջ:

#### «ՄՀԵՐ ԶՈՒԼՀԱՃԵԱՆ» ՄՐՑԱՆԱԿ

Դպրեվանքի Տեսչութիւնը ուրախութեամբ կը յայտնէ, թէ «Մհեր Զուլհաճեան» շարադրական մրցանքին մասնակցած Բրշ. Հրակ Սրկ. Գրտանեան արժանացաւ Երկրորդական բաժինի առաջին մրցանակին, իսկ Լեւոն Սեդրակեան՝ Միջնակարգ բաժինի պատուոյ յիշատակութեան: Կը շնորհաւորենք մրցանակակիր Դպրեվանքիները եւ կը գնահատենք բոլոր մասնակիցները:

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ՀԱՄԵՐԳ»՝  
ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ  
«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ**

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը, խմբավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի եւ ընկերակցութեամբ դաշնամուրի վրայ՝ Համբիկ Մարտիրոսեանի եւ «Կիլիկիա» նուագախումբին, իր 50-ամեակին նուիրուած զանազան ձեռնարկներու շարքին, Կիրակի, 2 Յուլիս 2023-ի երեկոյեան, ազգային երգերու համերգով մը բեմ բարձրացաւ «Լիքաա» հանդիսասրահին մէջ:

Լիբանանի, Հայաստանի եւ Արցախի քայլերզներով սկիզբ առաւ ձեռնարկը, որմէ ետք բացման խօսք արտասանեցին երգչախումբի անդամներէն՝ Թամար Գուճանեանն ու Շողիկ Նփրեմեանը: Անոնք դրուատիքով խօսեցան, որ ազգային երգերը ներշնչման աղբիւր են մեր քաջարի հայորդիներուն համար եւ հարկ է վառ պահել այդ շունչը՝ հակառակ օտար ազդեցութիւններուն: Թէկուզ ներկայիս վերիվայրումներ կ'ապրի մեր հայկական ներկան, սակայն պատմութիւնը կը վկայէ, որ Հայը միշտ ալ կարողացած է իր գոյու-





թիւնը պահել եւ հաստատեցին որ անկախութիւնը կը վերահաստատուի շնորհիւ պաշտարի ոգին արթուն պահող երիտասարդներու: Վերջապէս, անոնք կարեւորեցին հայկական մշակոյթին պահպանումն ու շարունակականութեան ապահովումը, որուն համար «Շնորհալի»-ն այս համերգին հանդէս կու գայ փունջ մը ազգային երգերով:



Յստակ էր հանդիսատեսներուն խանդավառութիւնը հնչած երգերով, որոնց շարքին «Կամաւորի Երգ»-ը՝ Ղազար Քէօշկէրեանի, «Մենք Անկեղծ Զինուոր Ենք»՝ Յովիկ Թաֆրանեանի եւ «Զայն Մը Հնչեց»՝ Արման Տէր Պետրոսեանի մեկնաբանութեամբ:

Նկատի ունենալով, որ նոյն օրը առաւօտուն հանդիսաւոր Ս. Պատարագով եւ յատուկ տօնակատարութեամբ նշուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 28-րդ տարեդարձը:

Վերջապէս, Վեհափառ Հայրապետը բեմ բարձրացաւ ու իր գնահատանքը յայտնեց «Շնորհալի» երգչախումբի անդամներուն եւ «Կիլիկիա» նուագախումբին, ինչպէս նաեւ՝ խմբավար Հայր Սուրբին: Նորին Սրբութիւնը յիշեցման կարգով ըսաւ, որ ազգային երգերը սովորական երգեր չեն, այլ անոնց մէջ կը բաբախէ հայկականութիւն՝ իր երկունքներով ու թռիչքներով: Հայութիւնը իր հարազատ էութեամբ, գոյութենական պայքարով, անցեալով, ներկայով եւ ապագայի տեսլականով մեր երգերուն մէջ կը գտնուին: Հետեւաբար, արուեստի իմաստով պէտք չէ՛ երգենք, այլ պէտք է ապրինք, զանոնք: Նորին Սրբութիւնը իր խօսքը եզրափակեց ըսելով, որ Հայ ընտանիքներուն մէջ, մանաւանդ երիտասարդներուն մօտ, մեր ազգային երգերը մնայուն ներկայութիւն ըլլան, որպէսզի անոնց շունչով մենք ապրինք ու մեր հայութիւնը աւելիով ամրապնդենք:

Աւարտին, բոլոր ներկաները միասնաբար յօտնկայս, երգեցին «Կիլիկեան Ուխտի» Հայրապետական մաղթերգը:

Յայտնենք, որ համերգը ուղղակիօրէն հեռարձակուեցաւ Կաթողիկոսարանի «Cilicia TV»-ի Facebook-ի եւ Youtube-ի էջերուն միջոցաւ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ընտրութեան եւ օծման 28-րդ ամեակին առիթով, Կաթողիկոսարանիս «Շնորհալի» երգչախումբը, Ազգ. Երգերու Համերգի ընթացքին, բանաստեղծութիւն մը ձօնեց Հայրապետին.–

## ԱՐԱՍ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՐԱԴԵՏ

Արի ու խիզախ մեծ Հայրապետ,  
 Բենասօժ՝ ազգընտիր հովուապետ,  
 Արարատի պէս վեհ ու սուրբ,  
 Մանուկեանի պէս քաջ ու թունդ:

Կրկ.

Բիր փառք ու յարգանք ձեր նուիրական Վեհութեան,  
 Մատչիմք ազգովին ի համբոյր Ձերդ Վեհապետութեան:

Կիլիկիոյ արժանընտիր գահակալ,  
 Ինքնամատուց ախր սրբազան,  
 Լոյսի խորան ու յոյսի մատեան,  
 Ինքնատիպ մա՛րդ քերովբէական:

Կեանքդ ողջ դրիր՝

Ի սպաս ժողովուրդիդ ծառայութեան...

Ու սերունդներ ձեզմէ առին աւիշը իմաստութեան:

Յոյսով կը նայինք Անթիլիասին ու Անթիլիասական միաբանութեան:

Կրկ.

Բիր փառք ու յարգանք ձեր նուիրական Վեհութեան,  
 Մատչիմք ազգովին ի համբոյր Ձերդ Վեհապետութեան:

Հայր մեր սիրելի՛

Աննինջ կանթեղ հաւատքի,

Յաղթաբազուկ աջ հայազգի,

Բետորաշունչ բերան Մաշտոցի,

Ասադ Վեհափառի մնայուն ծաղկի

Պսակ ու պարծանք քրիստոնէայ աշխարհի

Երանելի արքայ՝ Կիլիկեան գահի

Տէրը ձեզ միշտ զօրավիզ եւ հովանի:

Կրկ.

Բիր փառք ու յարգանք ձեր նուիրական Վեհութեան,  
 Մատչիմք ազգովին ի համբիր Ձերդ Վեհապետութեան:

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

### ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱԼՑԵՑ Հ.Յ.Դ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Հինգշաբթի, 27 Յուլիս 2023-ի առաւօտուն, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Հ.Յ.Դ. երիտասարդական միութիւններու խորհրդաժողովի մասնակիցները, որոնք եկած էին Հայաստանէն եւ Միջին Արեւելքի, Եւրոպայի ու Ամերիկայի զանազան երկիրներէն:

Հանդիպման սկիզբը խօսք առին Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի անդամ՝ Դաւիթ Գազանճեան, Հ.Յ.Դ. Լ.Ն.Մ. Կեդր. Վարչութեան անդամ՝ Լիլիթ Նալպանտեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ՝ Յովսէփ Տէր Գէորգեան:

Ապա, երիտասարդներուն իր պատգամը ուղղեց Նորին Սրբութիւնը: Առաջին հերթին, ան բարձր գնահատեց խորհրդաժողովը կազմակերպողները եւ անոր մասնակից երիտասարդները, որոնք ի մի խմբուած են քննարկելու յատկապէս երիտասարդութիւնը յուզող հարցեր՝ Հայ Դատի պաշտպանութեան, պահանջատիրութեան եւ հայապահպանման մարտահրաւերներու լոյսին տակ: Հայոց Հայրապետը անգամ մը եւս շեշտեց երիտասարդու-



թեան դերն ու տեղը Հայ կեանքէն ներս եւ վերահաստատեց ըսելով, որ երէց սերունդի պատկանողները երիտասարդութեան մասին պէտք չէ խօսին, այլ երիտասարդութեան հե՛տ պէտք է խօսին, որովհետեւ մարդկային մեր կեանքը հիմնուած է փոխ յարաբերութեան ու երկխօսութեան վրայ. ուստի, հարկ է երիտասարդներուն մասին խօսելու մենախօսութենէն դուրս գալ եւ ստեղծել անոնց հետ խօսելու երկխօսութեան մթնոլորտը:

Ապա, Նորին Ս. Օծութիւնը համապարփակ կերպով անդրադարձաւ Հայ Դատին, պահանջատիրական պայքարին եւ հայապահպանման, ներկայ աշխարհի արհեստագիտացած եւ յարափոփոխ ու մշտափոփոխ պայմաններու լոյսին տակ: Ան ըսաւ, որ մեր ազգի պահանջատիրական պայքարի երթը հարկ է վերատեսութեան ենթարկել եւ զայն յարմարեցնել այսօրուան աշխարհաքաղաքական պայմաններուն, սակայն առանց խաթարելու մեր պատկանելիութիւնը, սկզբունքները եւ արմատները: Այսօր մեր ուսերուն վրայ դրուած պարտականութիւնները աւելի ծանր կը կշռեն, քան անցեալին մեր առջեւ ծառայած խնդիրներն ու մարտահրաւէրները: Հետեւաբար, այս յանձնառութեամբ, երէց ու նոր սերունդները, օգտուելով իրարու փորձառութիւններէն, ձեռք-ձեռքի տուած հարկ է դիմակայել մեր ազգին առջեւ ցցուած քաղաքական, ներքաղաքական, համայնքային, միութենական եւ այլ տեսակի մարտահրաւէրներն ու դժուարութիւնները:

Աւարտին, Հայոց Յեղասպանութեան 50 ամեակին առիթով Ս. Աստուածածին Վանքին մէջ բարձրացած Հայ ժողովուրդին յարութիւնը խորհրդանշող յուշարձանին հովանիին տակ, յիշատակի խմբանկար մը առնուեցաւ:



**ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ**

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ**

Յուլիս ամսուան առաջին շաբթը-  
ւան ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.  
Վեհափառ Հայրապետը հետեւեալ այ-  
ցելուները ընդունեց.-

- Քրիստոնէայ նախկին երեսփո-  
խաններէ ու նախարարներէ բաղկա-  
ցած խումբ մը: Անոնք Վեհափառ Հայ-  
րապետին պարզեցին իրենց մտահո-  
գութիւններն ու տեսակէտները Լիբա-  
նանի նախագահական ընտրութեան  
առնչուած:

- Լոս Անճելոսէն “The California  
Courier” շաբաթաթերթի Հիմնադիր եւ  
Խմբագիր՝ Յարութ Սասունեանը: Ան  
Նորին Սրբութեան հետ խորհրդակ-  
ցեցաւ մասնաւորաբար Սփիւռքի ա-  
ռնչուած հարցերու շուրջ:

- Հայաստանէն «Հայոց Արծիւներ  
Միասնական Հայաստան» կուսակցու-  
թեան Նախագահ՝ Գնդապետ Խաչիկ  
Ասըրեանը: Ան Նորին Ս. Օծութեան  
պարզեց 44 օրեայ պատերազմին ա-  
ռնչուած կարգ մը երեւոյթներ:

- Խաչատուր Արովեանի Անուան  
Մանկավարժական Համալսարանի  
Տնօրէն՝ Էտկար Յովհաննէսեանը՝ ըն-  
կերակցութեամբ իր օգնականներուն:  
Յովհաննէսեան զեկուցեց նշեալ հա-  
մալսարանի աշխատանքներուն մա-  
սին:

- Գանատայէն ու Լոս Անճելոսէն  
արուեստագէտներ՝ Հրայր Բազէ Խա-

չերեան, Սոֆիա Խաչմանեան եւ Էրին  
Փինիոն: Անոնք ծանօթացան Կաթողի-  
կոսարանի թանգարաններուն յատուկ  
քաթալոկներ հրատարակելու Հայոց  
Հայրապետի ծրագիրին:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՅԵԼԵՑ  
Յ.Բ.Ը.Ս.Ի ՆԱԽԱԳԱՐԸ**

Երկուշաբթի, 3 Յուլիս 2023-ին,  
Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի  
Վեհարանին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.  
Կաթողիկոս ընդունեց Հայկական Բա-  
րեգործական Ընդհ. Միութեան Նախա-  
գահ՝ Պերճ Սեդրակեանի այցելութիւ-  
նը:

Հանդիպման ընթացքին լայնօրէն  
քննարկուեցան Հայաստանի, Արցախի,  
Սփիւռքի, Հայաստան-Սփիւռք յարա-  
բերութեան եւ Երուսաղէմի Պատրիար-  
քութեան հետ աղերս ունեցող խնդիր-  
ներ ու մարտահրաւերներ:

**ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԴՈԿՏ. ՅՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԸ**

Օքսֆորտ Համալսարանի Հայագի-  
տական Ամպլիոնի Դասախօս եւ  
Սփիւռքագէտ՝ Դոկտ. Հրաչ Զիլինկիր-  
եան, Երեքշաբթի, 11 Յուլիս 2023-ին,  
այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթո-  
ղիկոսին: Դոկտ. Զիլինկիրեան մաս կը  
կազմէ «Սփիւռքի Տարի»-ին առիթով

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համախմբած փորձագէտներու խումբին, որոնք առցանց դրութեամբ իրերայաջորդ քննարկումներ ունեցան Սփիւռքի վերակազմակերպման տարբեր ուղիներ որոնող եւ առաջադրող խորհրդակցութիւններուն: Նորին Ս. Օծուրեան հետ վերոյիշեալ հանդիպումին ներկայ էր նաեւ Սփիւռքի հիմնախնդիրներու մասնագիտական քննարկումները համակարգող՝ Շահան Գանտահարեան:

Արամ Ա. Կաթողիկոս նախ այդ քննարկումներու անցած ուղիին մասին շեշտադրումներ կատարեց եւ յատկապէս ընդգծեց, որ Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ թէ՛ Միացեալ Նահանգներու մէջ իր կատարած հովուապետական այցելութիւններու ընթացքին, արծարծուած են այն առանցքները, որոնց մասին սփիւռքագէտները մտածումներ փոխանցած էին: Առ այդ, ան առաջարկեց, որ թեմերու մէջ կատարուած այս խորհրդակցութիւններուն, մեր ազգային, հոգեւոր եւ մշակութային կառոյցներու պատասխանատուներուն հետ կայացած հանդիպումներու եւ յատկապէս Սփիւռքի կազմակերպ կեանքը վերանորոգելու ուղղութեամբ՝ մասնագիտական կարծիքներու լոյսին տակ անհրաժեշտ է, որ կայանայ նոյն ձեւաչափով հանդիպում մը, սակայն, այս անգամ տեսական մտածումները գործնական փուլ թեւակոխելու առաջադրանքով եւ ներառնելով սփիւռքեան կազմակերպ կեանքին մասնակից, գործնապէս նորարարութիւն բերելու ատակ համայնքային դէմքեր:

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան շեշտեց Սփիւռքի եւ ինքնութեան խնդիրներու նոր սահմանումներով աշխատելու անհրաժեշտութիւնը՝ երկարաժամկետ կտրուածքով Սփիւռքի կառուցակար-

գային, գործադաշտային եւ յատկապէս մեր կազմակերպ կեանքէն հեռացած կամ հեռու գտնուող զանգուածի կարելիութեան սահմաններուն մէջ ներգրաման նպատակներով: Ան Վեհափառ Հայրապետին յանձնեց իր ղեկավարած հարցախուզային աշխատանքները ամփոփող եռահատոր մը, ուր ամփոփուած են վիճակագրական տրւեալներ եւ անոնց հիման վրայ ձեւակերպուած են եզրակացութիւններ, որոնք օրակարգի կը վերածուին յառաջիկայ մասնագիտական խորհրդակցութեան:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԱԶԳ. ԲԱՐԵՐԱՐ՝ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ  
ԳԱՌՆԻԿ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ**

Երեքշաբթի, 18 Յուլիս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Ազգ. Բարերար՝ հանգուցեալ Գառնիկ Եագուպեանի տիկինը՝ Անի Եագուպեան եւ զուակները՝ Արամն ու Անիթա այցելութիւնը:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Եագուպեան եւ Չաթալպաշեան ընտանիքներուն անցեալի եւ ներկայի բարերարութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին, Հայրենիքին եւ առհասարակ մեր ազգին: Այս ծիրէն ներս, Նորին Սրբութիւնը յիշեց Տիկ. Անի Եագուպեանի հօր՝ Գեորգ Չաթալպաշեանի կատարած բարերարութիւնը 1968-ին Կաթողիկոսարանի Վեհարանի շինութեան եւ ամուսնոյն՝ Գառնիկ Եագուպեանի բարերարութիւնը՝ Պիքֆայայի Վեհարանի եւ Եպիսկոպոսարանի շինութիւններուն: Ապա, անոնք Նորին Ս. Օծուրեան ճաշի հիւրը եղան:

**ՎԵՐԱՓՈՒ ԳԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ**

Երկուշաբթի, 31 Յուլիս 2023-ի առաւօտուն, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան՝ Վահագն Աթաբեկեանը:

Նորին Սրբութիւնը դեսպանը տեղեակ պահեց միջ-եկեղեցական աշխարհին ճամբով, յատկապէս Ե.Հ.Խ.ին եւ Մ.Ա.Ե.Խ.ին, Արցախի գծով կատարուելիք յայտարարութիւններուն մասին: Դեսպանը իր կարգին, անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց Նորին Ս. Օծութեան Հայաստանի ու յատկապէս Արցախի մէջ վերջին օրերուն տեղի ունեցած զարգացումներուն մասին:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՔԱՂՂԵԱՑԻՆԵՐՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ  
ՈՒ ՎԵՐ. ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆԸ**

Ուրբաթ, 4 Օգոստոս 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդունեց Քաղղեական Եկեղեցւոյ Հոգեւոր Պետ Մար Լուիզ Ռաֆայէլ Սագօ Պատրիարքին ներկայացուցիչը՝ Միշէլ Քասարճի եպիսկոպոսը:

Այցելութեան հիմնական նպատակն էր Նորին Ս. Օծութեան անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցել Իրաքի մէջ Սագօ Պատրիարքին դիմագրաւած կարգ մը քաղաքական դժուարութիւններուն մասին: Նորին Սրբութիւնը շեշտեց քրիստոնէական միութիւնը ամրապնդելու ու միաժամանակ Իրաքի պետական ու քաղաքական պատասխանատուներուն հետ բարուք լուծումներ գտնելու հրամայականը:

Նոյն օրը, Նորին Սրբութեան այցելեց Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետա-

րանական Եկեղեցիներու Միութեան Նախագահի Տեղակալ եւ Հայկազեան Համալսարանի Նախագահ՝ Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանը:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Արցախի մէջ ստեղծուած կացութեան, Լիբանանի ու Սուրիոյ համայնքներուն դիմագրաւուած ընկերատնտեսական դժուարութեանց, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական բնոյթ ունեցող շարք մը հարցերու եւ Լիբանանի համալսարաններու ցանցին մէջ Հայկազեան համալսարանին ունեցած իւրայատուկ դերակատարութեան:

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ  
ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆԷՆ  
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ**

Հինգշաբթի, 10 Օգոստոս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատունէն պատուիրակութիւն մը:

Քննարկումներու ընթացքին, Վեհափառ Հայրապետը դատապարտեց Շուէտի մէջ Քուրանի հրկիզման երելոյթը եւ կարեւորեց Քրիստոնէայ-Իսլամ համակեցութեան եւ երկխօսութեան առաւել եւս զարկ տալու հրամայականը:

Այս առիթով, Նորին Ս. Օծութիւնը յատուկ կերպով անդրադարձաւ Ազըրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման հարցին: Ան ընդգծեց, որ Իրանը մեզի համար բարեկամ երկիր է, ուստի, սպասելի է, որ ան իր կարելին շարունակէ կատարել Բերձորի (Լաչին) միջանցքին շուտափոյթ վերաբացման հարցին գծով՝ նկատի ունենալով աւելի քան 120 հազար հայերու սովամահ դառնալու դառն իրականութիւնը:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՈՒՍԿԱՎԱՐ ԱԶՍԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ**

Չորեքշաբթի, 16 Օգոստոս 2023-ին, Արամ Ա. Գաթողիկոս Պիքֆայայի Վեհարանին մեջ ընդունեց Ռ.Ա.Կ.ի Լիբանանի Վարիչ Մարմինը: Կուսակցութեան Վարիչ Մարմինի Ատենապետ՝ Տոքթ. Ալեոխա Տաքէսեան ուրախութեամբ յայտնեց, որ վերջին տարիներուն կուսակցութեան շարքերէն ներս յառաջացած զգայնութիւններն ու տարակարծութիւնները արդէն իսկ լուծուած են եւ կազմակերպութիւնը ներքին միասնականութեան ամրացման ու վերանորոգման ընթացքի մեջ կը գտնուի:

Նորին Սրբութիւնը ջերմօրէն ողջունեց կուսակցութեան կազմակերպչական միութիւնը ամրացնելու եւ անոր գործունէութիւնը առաւել կազմակերպելու յանձնառութիւնն ու ճիգը: Միաժամանակ Վեհափառ Հայրապետը շեշտեց միջ-կուսակցական գործակցութիւնը ծաւալելու հրամայականը, մանաւանդ ներկայ ժամանակներուն, երբ մեր ազգը կը դիմագրաւել լուրջ դժուարութիւններ:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի Վարիչ Մարմինը այս առիթով իր շնորհակալութիւնը յայտնեց Նորին Ս. Օծութեան Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով Արցախի տագնապին առնչուած իր Հայրապետական պատգամին համար: Անդրադառնալով յիշեալ հարցին, Արամ Ա. Գաթողիկոս, իր կարգին, շեշտեց մեր ազգին ներքին տարբերութիւնները մէկ կողմ ձգելու եւ մեր հաւաքական աշխատանքը Արցախի վրայ կեդրոնացնելու անյետաձգելի անհրաժեշտութիւնը: «Արցախի շրջափակումին վերջ տալը եւ Արցախին

ինքնորոշման իրաւունքի վերահաստատումը պէտք է կիզակէտը դառնայ իւրաքանչիւր հայուն եւ ողջ հայութեան», շեշտեց Նորին Սրբութիւնը:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ**

Երեքշաբթի, 22 Օգոստոս 2023-ին, Արամ Ա. Գաթողիկոս հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան Դեսպան՝ Մուճթապա Ամանիի հետ:

Քննարկումներուն մեջ յատուկ տեղ գրաւեց Արցախի շրջափակումը Ազրպէյճանի կողմէ: Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց Դեսպանին, յատկապէս անդրադառնալով շրջափակումին հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական տագնապին եւ անոր ծանր հետեւանքներուն: Ապա, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ երկու հիմնական հարցեր կը գտնուին Արցախի դիմաց՝ շրջափակումին անյապաղ վերջ տալն ու Արցախի ինքնորոշման ճանաչումը:

Արագ ակնարկ մը նետելով Արցախի պատմութեան վրայ, Հայոց Հայրապետը կարեւորութեամբ յիշեց Իրանի ցուցաբերած զօրակցութիւնը ընդհանրապէս Հայաստան-Ազրպէյճան տագնապին եւ յատկապէս Արցախի հարցին քաղաքական լուծման արդարութեան ու ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքին վրայ հիմնուած: Շարունակելով իր խօսքը, Նորին Ս. Օծութիւնը շեշտեց, թէ Հայ ժողովուրդը աւելին կը սպասէ Իրանէն, յատկապէս Արցախի տագնապի այս ճակատագրական հանգրուանին:

Դեսպանը մօտէն ծանօթ ըլլալով Արցախի հարցին, խոստացաւ Վեհափառ Հայրապետին մտահոգութիւններն ու սպասումները փոխանցել



Իրանի Իսլամական Հանրապետության պատասխանատուներուն:

Հանդիպման ընթացքին նաեւ քննարկուեցան Լիբանանի նախագահական ընտրութեան առնչուած հարցեր եւ այս ուղղութեամբ վերջին շրջանին տեղի ունեցած զարգացումները՝ տեղական, շրջանային եւ միջազգային մակարդակներու վրայ: Դեսպանը ողջունեց Նորին Սրբութեան ու Լիբանանի Հայ համայնքին տարած աշխատանքներն ու որդեգրած դիրքորոշումները նախագահական ընտրութեան առնչուած:

Հանդիպման աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ նաեւ յառաջիկային Իրանահայութեան տալիք իր հովուապետական այցելութեան մանրամասնութիւններուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Հինգշաբթի, 24 Օգոստոս 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Վեհարանին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի Խորհրդարանի Նախագահ՝ Նէպիի Պըրրիի ներկայացուցիչները: Պատուիրակութեան անդամներն էին «Ամալ» շարժումին

Փոխ Նախագահ՝ Շէյխ Հասան Ալ-Մասրին եւ Ճարտարապետ՝ Սայիտ Ապպաս Նասր Ալ-Տինը, որոնք միաժամանակ շարժումին քաղաքական դիւանի անդամներն են:

Հանդիպման ընթացքին առաւելաբար քննարկումի նիւթ դարձան Լիբանանի նախագահական յառաջիկայ ընտրութեան առնչուած մօտեցումներն ու զարգացումները: Նորին Սրբութիւնը հրամայական նկատեց շուտափոյթ նախագահական ընտրութիւն կատարելու անհրաժեշտութիւնը, յատկապէս նկատի ունենալով Լիբանանի մէջ ընկերատնտեսական տագնապին հետըզհետէ խորացումը եւ ժողովուրդին դիմագրաւած դժուարութիւնները:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ նաեւ արծարծելու Արցախի շարունակուող շրջափակումը Ազրպէյճանի կողմէ: Նորին Ս. Օծութիւնը այս ուղղութեամբ մեր ժողովուրդին ընդվզումը յայտնեց:

«Ամալ» շարժումին ներկայացուցիչները բաժնելով Վեհափառ Հայրապետին եւ Հայ ժողովուրդին մտահոգութիւնը, շարժումին անունով իրենց զօրակցութիւնը յայտնեցին եւ խոստացան կարելիութեան սահմաններէն ներս զօրավիզ կանգնիլ Հայ ժողովուրդին եւ Արցախի արդար դատին:



**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ  
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒՒԽ 2023: Ե. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ: ՏՕՆ ՍՈՒՐԲ ԱԱՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան:*

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՒԽ 2023: Զ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՊԱՀՈՅ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:*

ԿԻՐԱԿԻ, 16 ՅՈՒՒԽ 2023: ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ (ՆԱԵԻ ԿՈՉԻ՝ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՎԱՐԴԱՎԱՌ):

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:*

ԿԻՐԱԿԻ, 23 ՅՈՒՒԽ 2023: Բ. ԶԿՆԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:*

ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՒԽ 2023: Գ. ԶԿՆԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:*

ԿԻՐԱԿԻ, 6 ՕԳՈՍՏՈՍ 2023: Դ. ԶԿՆԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ: ԲԱՐԵԿԵՆ-ԴԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՊԱՀՈՑ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհնեան:*

ՇԱԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍ 2023: ՏՕՆ ՇՈՂԱԿԱԹԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԸՍՏ ՏԵՍԼԵԱՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻՆ ՄԵՐՈՅ:

*Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի բացօթեայ խորանին վրայ պատարագեց՝ Արաբական Միացեալ էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, իսկ Հայրապետական Պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:*

ԿԻՐԱԿԻ, 13 ՕԳՈՍՏՈՍ 2023: ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՕԳՈՍՏՈՍ 2023: Բ. ՕՐ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵ-ԼՈՑ:

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհնեան:*

ԿԻՐԱԿԻ, 20 ՕԳՈՍՏՈՍ 2023: Ը. ՕՐ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. էօրտէքեան:*

ԿԻՐԱԿԻ, 27 ՕԳՈՍՏՈՍ 2023: Գ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ: ՏՕՆ ԳԻԻՏԻ ԳՕՏԻՈՅ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:*

*Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:*